ԿԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ
ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՎԱՉԱԳԱՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ



ՄԱՅՐԵՆԻ 4

ԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ
ՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՎԱՉԱԳԱՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ 4

Դասագիրք 4-րդ դասարանի համար

Նկարիչ՝ Խորեն Հակոբյան

ՄԱԿՄՎԱՆ ԱՐՄԵՆԻԱ
ԵՐԵՎԱՆ-2009

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 373.167.1:809.198.1(075)
ԳՄԴ 81.2 Հ g7
Մ 239

Մ 239 Մայրենի-4: Հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի դասագիրք / Կ. Թորոսյան, Վ. Սարգսյան, Հ. Խաչատրյան, Կ. Չիբուխչյան/ -Եր.: Մակմիլան-Արմենիա, 2009. - 176 էջ:

ՀԱՆՐԱՊԵՏ
ՍԵԲԱՍ
Ն Համ.
ԳՐԱԴ Ն

ISBN 978-9939-62-005-3 ԳՄԴ 81.2 Հ g7

© Կ. Թորոսյան, Վ. Սարգսյան,
Հ. Խաչատրյան, Կ. Չիբուխչյան, 2009
© Մակմիլան-Արմենիա, 2009
© Դասագրքերի շրջանառու հիմնադրամ, 2009

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅՈԹ ԵՎ ԲՅՈՒՐ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐԸ

Բարև՛, սիրելի՛ աշակերտ: Ես քո նոր դասագիրքն եմ:

Շարունակենք միասին քայլել մայրենիի զարմանահրաշ ճանապարհներով:

ՎԱՉԱԳԱՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Մայրենիի բազմախորհուրդ ճանապարհին դու հանդիպել ես զարմանալի ու հիասքանչ շատ բաների: Այս բաժնում դու կծանոթանաս Հայաստանի հրաշալիքներին:

Սիրելի՛ փոքրիկ,
Քո ամեն օրը հրաշալիք է,
Քեզ գալիք տանող պայծառ ալիք է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅՈԹ ԵՎ ԲՅՈՒՐ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐԸ

ԳՐՔԻ ՋՐՈՒՅՑԸ ՔԵՋ ԾԱՆՈԹ ԵՎ ԱՆԾԱՆՈԹ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այսօրվա աշխարհում հրաշալիք են համարվում թե՛ մարդու ստեղծած շինություններն ու կառույցները, թե՛ բնության անձեռակերտ* հուշարձանները:

«Իսկ ի՞նչ է նշանակում հրաշալիք: Ի՞նչ իմաստ ունի այդ բառը»,– կհարցնես դու:

Հրաշալիք նշանակում է՝ **հրաշքով լի, հիացմունք շարժող, սքանչելի, չտեսնված, հմայիչ, զարմանալի ու արտասովոր**:

«Իսկ մի՞թե Հայաստանում կա որևէ բան, որ այս բոլոր բառերի իմաստներին արժանի լինի»,– կզարմանաս դու:

Իհա՛րկե, կա՛:

Այդ հրաշալիքներից մի քանիսին դու արդեն ծանոթացել ես. նրանք քո աչքերի մեջ են, քո հոգում, քո սրտում, քո մտքում:

«Ուրեմն ե՞ս էլ չտեսնված ու հմայիչ եմ, զարմանալի ու անսովոր, հրաշքներով լի»,– կմտածես դու:

Եվ ճիշտ կմտածես. չէ՞ որ ինչպես դու, այնպես էլ յուրաքանչյուր մարդ ինքնին հրաշք է, և մարդու մեջ շարունակ նորանոր հրաշքներ են ծնվում:

Հրաշք չէ՞, որ դու հիմա կարդում ես ինձ, հասկանում ես ինձ, որ մենք զրուցում ենք միմյանց հետ:

Դա նրանից է, որ քո մեջ արդեն ապրում է հրաշալիքներից մեկը՝ **հայոց սուրբ այբուբենը**, և դու էլ նրա՛ մեջ ես ապրում, նա քո տունն է և քո ինքնությունը*:

Հայոց այբուբենը դու տեսել ես նկարված ու քանդակված, հյուսված ու գործված, քարի վրա, փայտի վրա, թղթի վրա:

Հայոց այբուբենի ոսկեձույլ նշագրեր (Ս. Էջմիածին)

Լսել ես ու երգել նրա մասին երգերը: Մեսրոպ Մաշտոցի շնորհիվ այսօր հայոց այբուբենն ամենուր է և, ամենակարևորը, քո մտքում է ու քո սրտում:

Ինչպես տեսնում ես, հայոց այբուբենը մեզ համար իրոք հրաշալիք է, որով մենք ճանաչում ենք աշխարհը և սիրում:

Այս բաժնում մենք կծանոթանանք Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքներից ևս մի քանիսին:

Հայոց այբուբենին նվիրված հուշարձան (գյուղ Օշական)

1. Ո՞վ է քո զրուցակիցը, ի՞նչ կպատմես նրա մասին:

2. Ի՞նչ է նշանակում «հրաշալիք»: Ընթերցի՛ր տեքստի համապատասխան տողերը և մեկնաբանի՛ր:

3. Ըստ քեզ՝ ինչո՞ւ է հայոց այբուբենը համարվում հրաշալիք:

ՈՒԶՈ՞ՒՄ ԵՍ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԼ

Սուրբ Մեսրոպ Մաշտոցը հորինել է հայոց տառերը, տառերի դասավորությունը և նրանց թվային արժեքները: Դա ներկայացվում է այսպիսի աղյուսակի տեսքով.

Ա - այբ - 1	Ժ - ժե - 10	Ճ - ճե - 100	Ռ - ռա - 1000
Բ - բեն - 2	Ի - ին - 20	Մ - մեն - 200	Ս - սե - 2000
Գ - գիմ - 3	Լ - լյուն - 30	Յ - հի - 300	Վ - վեվ - 3000
Դ - դա - 4	Խ - խե - 40	Ն - նու - 400	Տ - տյուն - 4000
Ե - եչ - 5	Ծ - ծա - 50	Շ - շա - 500	Ր - րե - 5000
Զ - զա - 6	Կ - կեն - 60	Ո - վո - 600	Ց - ցո - 6000
Է - է - 7	Հ - հո - 70	Չ - չա - 700	Ու - ու - 7000
Ը - ըթ - 8	Ձ - ձա - 80	Պ - պե - 800	Փ - փյուր - 8000
Թ - թո - 9	Ղ - ղատ - 90	Ջ - ջե - 900	Ք - քե - 9000
			Օ - օ, Ֆ - ֆե

1 Հայոց այբուբենի իրար հաջորդող չորս տառով կազմվում է մեկ բառ: Գտի՛ր այդ բառը և գրի՛ր:

Օրինակ՝ իրար հաջորդող ո, չ, պ տառերով կազմվում է պոչ բառը:

2 Օգտվելով տառերի թվային արժեքներից՝ կատարի՛ր գործողությունները.

Ճ + Ժ = Թ – Ա = Ռ + Բ = Ս + Բ =

Օրինակ՝ Ժ + Բ = 10 + 2 = 12:

3 Քո ընտանիքի անդամների ծննդյան տարեթվերն արտահայտի՛ր տառերով:

Օրինակ՝ 1974 = 1000 + 900 + 70 + 4 = Ռ + Ջ + Հ + Դ = ՌՋՀԴ:
2001 = 2000 + 1 = Ս + Ա = ՍԱ:

ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ

Բյուր բառը հնում նշանակել է տասը հազար և ապա՝ շատ, խիստ շատ: Այսօր **բյուր** նշանակում է խիստ շատ, անչափ, անթիվ:

Նախորդ էջի աղյուսակից երևում է, որ այդ աղյուսակով 9999-ից ավելի մեծ թվեր արտահայտել հնարավոր չէր:

Այդ խնդիրը լուծելու համար օգտագործել են բյուրի նշանը՝ ^ , որը, դրվելով հայերենի տառերից յուրաքանչյուրի վրա, նրա թվային համարժեքը մեծացրել է տասը հազար անգամ:

Օրինակ՝ Ա = 1, իսկ Â = 10000,
Ժ = 10, իսկ Ĝ = 100000 և այլն:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

առաք
և
հիսունվեց

4 Վերծանի՛ր գաղտնագիրը.

Հ Ո Ա Յ Բ Հ Ի Վ Ո Ց Ո

Ա Յ Բ Հ Ի Բ Ե Ն Ո Ւ Բ Ե Ն Ե Ջ Ն Ո Ւ

Ուրեմն՝ հրաշալիք են և՛ մարդը, և՛ մարդու ստեղծածը, և՛ բնության կերտածը*:

ԱՆԱԿՆԿԱԼԻ ՍՊԱՍՈՒՄՈՎ

Հայաստանի տարբեր դպրոցների չորրորդ դասարանցի տասնհինգ աշակերտի համար, որոնք հաղթել էին ամենատարբեր մրցույթներում, կրթության նախարարությունը նախատեսել էր մի շատ զարմանալի միջոցառում:

Բոլոր երեխաներն արդեն մայրաքաղաք Երևանում էին, սակայն ոչ ոք չգիտեր, թե ինչ անակնկալ է սպասում իրենց:

Գրեթե մեկ ամիս ամենատարբեր լուրեր էին շրջում Հայաստանով մեկ. իբր մեկնելու են Աֆրիկա կամ էլ Ավստրալիա: Մի մասն ասում էր, թե եգիպտական բուրգերը պիտի տեսնեն, մի մասը պնդում էր, թե երեխաներին միանգամից փոխադրելու են վեցերորդ դասարան, մի մասն ասում էր, թե մրցանակներ են տալու և այլն: Մի բան պարզ էր. բոլորին շատ էր հետաքրքրում, թե ինչ է լինելու:

Սպասված օրը հինգ աշակերտ իրենց ծնողների, տատիկների ու պապիկների հետ հավաքվել էր Հովհաննես Թումանյանի արձանի մոտ, հինգը՝ Արամ Խաչատրյանի և հինգը՝ Մարտիրոս Սարյանի: Բոլորն անհամբեր էին և սպասում էին անակնկալին:

Ի՞նչ ես կարծում ի՞նչ անակնկալ էր սպասում բոլորին:

Այժմ հերթով մոտենանք արձաններին և տեսնենք, թե ինչ է կատարվում դրանց շուրջը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՐՁԱՆԻ ՄՈՏ

– Հովհաննես Թումանյանն ապրել է ընդամենը հիսունչորս տարի,– պատմում էր ուսուցչուհին:– Սակայն թվում է, թե նա միշտ եղել է և, հաստատապես, միշտ կլինի: Նա ծնվել է 1869 թ. Դսեղ գյուղում: Ապրել է Թիֆլիսում, որն այն ժամանակ գրեթե հայկական քաղաք էր: Մանուկ հասակից գրել է բանաստեղծություններ: Անսահման սիրել է իր հայրենիքը, նոր շունչ է տվել ժողովրդի ստեղծած երգերին ու խաղիկներին, հեքիաթներին ու զրույցներին: Դրանցից շատ շատերին մենք ծանոթ ենք թե՛ դասագրքերից, թե՛ այլ



գրքերից, թե՛ մուլտֆիլմերից, թե՛ մեծերի պատմածներից, թե՛ կինոնկարներից:

Նա մեծ հայ էր ու մեծ հայրենասեր, ապրում էր բոլորի հոգսերով, սիրում էր բոլորին: Նա գրել է պոեմներ, բանաստեղծություններ, լեգենդներ, բալլադներ, հեքիաթներ, պատմվածքներ, քառյակներ:

Հովհաննես Թումանյանն այսօր էլ ներկա է յուրաքանչյուր հայի տանը իր ստեղծագործություններով, իր հզոր սիրով ու մեծ հոգով:

...Երեխաները, շունչները պահած, լսում էին և սպասում: Նրանց աչքերն անակնկալն էին փնտրում: Ծնողների, տատիկների ու պապիկների աչքերն անակնկալն էին փնտրում:

– Երեխանե՛ր, եկեք տեսնենք, թե ով ինչ կարող է հիշել Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններից: Որքան շատ հիշենք, անակնկալն այնքան շուտ կլինի,– ասաց ուսուցչուհին:

– Իսկ ով սեր ունի
Մեզ պես ուսումի,
Դպրոցի ճամփան
Միշտ կարճ է, սիրուն՝
Ձմեռ թե գարուն,–

անմիջապես արտասանեց սևուլիկ Արմինեն՝ հիշելով «Մայրենի–1» դասագիրքը:

– Սևո՛ւկ ուլիկ,
Սիրո՛ւն բալիկ,
Ման եմ եկել սարեսար,
Կաթ եմ արել քեզ համար,– նայելով Արմինեին՝ չարաճճիորեն վրա տվեց Արտակը:

– Ա՛խ, էսպես էլ գիժ ամիս.
Մարդու հանգիստ չի տալիս,– Արտակին ցույց տալով՝ պատասխանեց Արմինեն:

– Ի՞նչ կլինի, ասա՛, գրի՛չ,
Ինձ էլ սիրես գոնե մի քիչ,– ամենաածուռումուռ գրող Արային դիմեց Սոնան: Արան հոնքերը կիտեց, կենտրոնացավ, մտքերը հավաքեց ու.

– Մի՛ լինիր ուրագի պես՝
Միշտ դեպի քեզ,
Միշտ դեպի քեզ,
Այլ եղիր սղոցի՛ պես՝

Մեկ դեպի քեզ,
Մեկ դեպի մեզ:

Ծնողները, տատիկներն ու պապիկներն ուշադիր լսում էին: Արամի տատիկը չհամբերեց.

– Դեղնած դաշտերին
Իջել է աշուն,
Անտառը կրկին
Ներկել է նախշուն:

Անցորդները հետաքրքրությամբ դիտում էին զարմանալի մրցահանդեսը: Նրանցից մեկը նույնիսկ չդիմացավ ու արտասանեց.

– Ա՛յ փոքրիկներ, ա՛յ սիրուններ,–
Ասաց քամին տերևներին:

Երեխաներից մեկն անմիջապես շարունակեց.

– Ո՞ւր գնացին ծաղիկները:
– Սո՛ւս, քնած են հողի տակ:

Անցորդներից մեկն առաջ եկավ ու, դիմելով երեխաներին, ասաց.

– Ով այնպիսի սուտ ասի, որ ասեմ՝ սուտ է, իմ թագավորության կեսը կտամ նրան:

Արտակը, նմանակելով անցորդին, ձեռքն առաջ պարզեց ու սկսեց.

– Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք մի օր հինգ ու վեց հոգով, թրով-թվանքով որսի գնացինք: Հադին էր, Հյուդին էր, Չատին էր, Մատին էր, հերս էր, ես էի:

– Կեցցե՛ս,– Աշոտին դիմելով՝ ասաց անծանոթը,– թագավորությանս կեսը՝ քեզ:

– Թագավորությունն ինչի՞դ է պետք,– ասաց Արան,– չէ՞ որ.

– Գործն է անմահ, լավ իմացեք,
Որ ապրում է դարեդար,
Երնեկ նրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար:

• Սիրելի՛ երեխաներ, եկեք մենք էլ միանանք այս յուրօրինակ հանդեսին:

Արծանի շուրջը հավաքվածներին մոտեցավ մի շինարար: Լսենք, թե ինչ է ասում նա.

– Ման եկա, մայրի՛կ, աշխարհից աշխարհ,
Ամենից սիրուն, լավ տունը որ կա,
Էս գորշ խրճիթն է,
Էս հին խրճիթն է,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

– Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները բոլորը գիտեն՝ մեծ թե փոքր,– ասաց ուսուցչուհին,– որովհետև Թումանյանը ամենայն հայոց բանաստեղծն է, որը գրել է նաև շա՛տ իմաստուն քառյակներ.

– Ինչքա՜ն ցավ եմ տեսել ես,
Նենգ ու դավ* եմ տեսել ես,
Տարել, ներել ու սիրել,–
Վատը՝ լավ եմ տեսել ես:

– Ես էլ եմ ուզում արտասանել,– ասաց սուսիկ-փուսիկ Արտաշեսը և ոգևորված սկսեց.

– Լինում է մի սար,
Էն սարում՝ մի ծառ,
Էն ծառում՝ փչակ,
Փչակում՝ մի բուն,
Բնում՝ երեք ձագ,
Ու վրեն՝ Կկուն:

Սոնան շարունակեց.

– Ժամանակով Կատուն ճոն* էր,
Շունն էլ գլխին գդակ չուներ...

Արմինեն առաջ եկավ.

– Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Սիրունի՛կ, նախշո՛ւն կաքավիկ:
– Արևը շատ էր հոգնել. ման էր եկել ամբողջ օրը:
«Հերիք է,– ասաց,–
Գնամ պառկեմ ու քնեմ»,– արտասանեց Արան:

– Բավական է, երեխանե՛ր, ապրե՛ք, շատ լավ եք հիշում,– եզրափակեց ուսուցչուհին:

1. Ի՞նչ նոր բան իմացար մեծն Թումանյանի մասին:

2. Թումանյանի՝ քեզ ծանոթ ո՞ր ստեղծագործություններից արտասանեցին երեխաները. հիշի՛ր և գրի՛ր դրանց վերնագրերը:

3. Վերընթերցի՛ր Հովհ. Թումանյանի իմաստուն քառյակը և մեկնաբանի՛ր:

1 Պատկերացրո՛ւ, որ Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների՝ քեզ ծանոթ հերոսները հավաքվել են Կկվի բնի մոտ՝ ծառի տակ: Նրանք զրուցում են բարի և չար գործերի մասին: Ակա՞նջ դիր այդ զրույցին և գրի՛ առ:

2 Եթե ճիշտ ընտրես սյունակների և տողերի հատման կետերը, ապա համապատասխան տառերով կկարդաս քո սիրելի բանաստեղծի ազգանունը:

	Կացին ախ-պեր	Դպրոց-ի ճամ-փան	Չարի վերջը	Սուտ-լիկ որս-կանը	Կաքա-վիկ	Ամե-նից լավ տունը	Գե-տակը	Քաջ Նա-զար
Առակ	Ա	Բ	Թ	Գ	Ս	Վ	Տ	Ր
Բանա-ստեղծու-թյուն	Ի	ՈՒ	Ծ	Կ	Մ	Ա	Ն	Լ
Հեքիաթ	Յ	Ք	Ֆ	Ա	Դ	Զ	Ե	Ն

ՈՒԶՈՒՄ ԵՍ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԼ

Ավանդության համաձայն՝ 1919 թվականին Թումանյանի տանը նշում էին նրա ծննդյան 50-ամյակը: Հրավիրվածների մեջ էր նաև Զորավար Անդրանիկը: Թումանյանն իր բաժակաճառի մեջ ասում է. «Երեսուն տարի առաջ մի հայ ժողովուրդ էր, մի Խրիմյան Հայրիկ: Անցավ երեսուն տարի, հիմի էլ մի հայ ժողովուրդ է, մի Անդրանիկ...»:

Անդրանիկը նստած տեղից վրա է բերում. «Կանցնի էլի մի երեսուն տարի, ո՛չ Խրիմյան կլինի, ո՛չ Անդրանիկ, կմնա... «Շունն ու կատուն»»:

Հիշիր «Քաջ Անդրանիկ»:

3 ՉՎԱՐԹ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(Դասեղ գյուղում)

– Այս ծառի պտուղները սև՞ են,– հարցրեց Արան:

– Ո՛չ, կարմիր են:

– Բա ինչո՞ւ են սպիտակ:

– Որովհետև դեռ կանաչ են:

Կարո՞ղ եք կռահել՝ ո՞ր ծառի մասին է խոսքը:

Այսպիսով, Թումանյանը մեր բոլորի սրտում է, և դա հրաշք է: Ահա թե ինչու են նրան կոչում Ամենայն հայոց բանաստեղծ մեծն Թումանյան:

Ինչպես տեսանք, կան հանճարեղ մարդիկ, որոնք միշտ մեզ հետ են, թեկուզ վաղուց չկան: Նրանցով ամբողջ մարդկությունը ճանաչում է մեզ, հիանում ու սքանչանում հայի արվեստով: Այդպիսի մարդիկ ճանապարհ են դառնում մի ամբողջ ազգի համար, դեպի հավերժը տանող ճանապարհ:

Այդպիսին էր նաև մեծ երգահան Արամ Խաչատրյանը:

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ

– Սիրելի՛ երեխաներ, մենք ձեզանից մեկին «ժամանակի մեքենայով» կուղարկենք Արամ Խաչատրյանի մանկության ժամանակները: Թող նա մեզ պատմի, թե ինչ է տեսնում,– ասաց տիկին Գրիգորյանը:

– Թող Հայկը գնա,– հայացքը կախելով՝ ասաց Սոնան:

– Իսկ ինչո՞ւ Հայկը,– գոչեցին չորս կողմից:

– Որովհետև նա մեր դասարանի ամենալավ երգիչն է,– Սոնայի ընտրությունը պաշտպանեց Անին:

– Եվ լավ է պատմում,– լրացրեց Սահակը:

– Եվ հիանալի մարզիկ է ու լավ է գլուխ հանում զանազան սարքերից,– լրացրեց ուսուցչուհին:

Մի օր հետո Հայկը թռիչքի կայանում էր:

– Ուշադրությո՛ւն: Հա՛յկ, պատրա՞ստ ես:

– Պատրա՛ստ եմ:

– Բարի ճանապա՛րհ:

Եվ «ժամանակի մեքենան» Հայկին տարավ դեպի անհունը*, դեպի 20-րդ դարի սկիզբը, դեպի Արամի մանկությունը:



– Ի՞նչ ես տեսնում, Հա՛յկ,– գոչում էին երեխաները:

– Տեսնում եմ, թե ինչպես է փոքրիկ Արամը (երևի մի երեք-չորս տարեկան), նստած տան աստիճաններին, մատներով կտկտացնում դույլին ու երգում: Արդեն մի ժամ կլինի:

– Առաջ ենք գնում: Հիմա Արամը վեց տարեկան է: Ի՞նչ ես տեսնում:

– Արամը նստած է սեղանի մոտ, ընտանիքի հետ, ու լալիս է:

– Ի՞նչ է պատահել:

– Հայրիկը նրան մի ուլիկ էր նվիրել: Արամը շատ էր սիրում նրան, խոտ, հացի փշրանքներ էր տալիս, գուրգուրում, զբոսանքի տանում: Մի օր էլ ուլիկը հիվանդացավ: Ոչինչ չէր ուտում: Հաջորդ օրը սեղանին առատ միս կար: Արամը հասկացավ, որ դա իր սիրելի ուլիկն է, ու մի քանի օրով անկողին ընկավ:

– Տխուր պահ է, անցնենք առաջ:

– Արամը ոչ թե աստիճաններով է իջնում, այլ սահում է բազրիքի վրայով: Ա՛յ քեզ բան: Շրխկաց գետնին, գլուխն ուժեղ խփեց հատակին: Լավ է՝ շատ խիտ մազեր ուներ, թե չէ գլուխը ջարդվելու էր:

– Հա՛յկ, այդտեղ հիմա 1911 թվականն է, ի՞նչ ես տեսնում:

– Տեսնում եմ, թե ինչպես 8-ամյա Արամին հայրը դպրոց է տանում: Կինոժապավենի պես իմ աչքերի առաջ ընթանում է նրա դպրոցական կյանքը: Գերազանց է սովորում, չարաճճի է, նույնիսկ մասնակցում է տղայական գզվռտոցներին:

– Երաժշտությանն առնչվող* ոչինչ չկա՞:

– Ահա արդեն 1912 թվականն է: Արամի հայրը մի դաշնամուր է բերում իրենց տուն: Իննամյա Արամն ինքնուրույն հասկացավ ստեղների հերթականությունն ու նշանակությունը և սովորեց նվագել ծանոթ մեղեդիներ:

Դպրոցում կա երգի ժամ, և դասատուն մեր սիրելի գրող Ղազարոս Աղայանի որդին է՝ Մուշեղ Աղայանը: Նա դաշնամուր է նվագում, իսկ երեխաները երգում են ժողովրդական երգեր:

– Առաջ ենք գնում, Հա՛յկ:

– Տեսնում եմ՝ ինչպես է Արամը նվագում փողային նվագախմբում: Կարողանում է մի քանի նվագարան նվագել:

Հիմա էլ Արամն առաջին անգամ օպերա է լսում: Տասնվեց տարեկան է: Հաճույքից ու բերկրանքից* զարմացել է ու զմայլվել*:

– Շարունակում ենք ընթանալ ժամանակի միջով:

– Առջևում Մոսկվան է, 1921 թվականն է, ձմեռ, ցուրտ: Ես հետ եմ գալիս:

– Լա՛վ: Դու լա՛վ կատարեցիր քո գործը: Բարի՛ վերադարձ:

Հայկը «ժամանակի մեքենայից» իջավ. դեռ սրթսրթում էր:

1. Ո՞Ր ուղևորվեց Հայկը և ինչո՞ւ:

2. Կարդա՛ տեքստի այն հատվածները, որտեղ նկարագրվում են Արամ Խաչատրյանի կյանքի տարբեր տարիները, և լրացրո՛ւ մեծ երգահանի կենսագրական աղյուսակը.

Կարևոր իրադարձություններ	Թվականը
Ծնունդ	1903
Երգելու առաջին փորձերը	1906–1907
.....	.....
.....	.....

3. Քո պատկերացմամբ՝ ի՞նչ է «ժամանակի մեքենան»: Եթե դու ունենայիր «ժամանակի մեքենա», ապա ո՞ւր կուղևորվեիր:

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԵՏ (շարունակություն)

– Արամ Խաչատրյանը 1921 թվականին մեծ եղբոր միջոցով Թիֆլիսից տեղափոխվում է Մոսկվա: Եղբոր տանը լավ դաշնամուր կար, և Արամը սովորեց հիանալի նվագել, թեև չգիտեր ոչ մի նոտա,– շարունակեց տիկին Գրիգորյանը:

– Իսկ հետո՞, պատմե՛ք, խնդրում ենք,– ասացին երեխաները:

– Որքան էլ զարմանալի է, Արամ Խաչատրյանն ընդունվում է Մոսկվայի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի կենսաբանության բաժինը: Անհրաժեշտ էր նաև փող վաստակել սննդի ու հագուստի համար,– շարունակեց տիկին Գրիգորյանը:– Եվ Խաչատրյանը բեռնակրություն է անում գինու գործարանում: Այնուհետև մասնավոր դասեր է տալիս, երգում երգչախմբում:

«Հասկանում էի, որ առանց բոլոր ուժերդ լարելու, առանց համառության, առանց ամենօրյա քրտնաջան աշխատանքի երբեք չես հասնի բարձունքների»,– հիշում է մեծ երգահանը:

– Արամ Խաչատրյանը Մոսկվայում նախ ավարտում է երաժշտական տեխնիկումը, այնուհետև՝ կոնսերվատորիան,– շարունակեց տիկին Գրիգորյանը:– Շուտով նրա անունը թնդում է աշխարհով մեկ:

«Եթե երաժշտությունը տաղանդավոր է, գրված է սրտով, ապա անպայման ձեզ կհասնի, կոգևորի, կհասնի նույնիսկ այն մարդկանց,

ովքեր գիտակ չեն երաժշտությանը»,– հետագայում կգրի մեծ երգահանը:

– Նա ամբողջ կյանքում խորապես սիրել է իր հայրենիքը՝ Հայաստանը:

«Սիրում եմ իմ հայրենիքը, նրա բնությունը, գեղեցկությունը, զովասուն օդը, նրա բույրը: Սիրում եմ իմ տաղանդավոր ժողովրդին, որին ծառայելը կյանքի նպատակ է և երջանկություն: Ձգում եմ նրա կարիքը, կարոտում եմ նրան: Ես չեմ կարող ապրել, գոյություն ունենալ առանց իմ հայրենիքի»,– այսպես է գրում նա:

Արամ Խաչատրյանի տուն-թանգարանը Երևանում

Արամ Խաչատրյանն աշխարհի մեծագույն երգահաններից է: Նա գիտնական էր ու մանկավարժ, աշխատանքի հերոս և ժողովրդական արտիստ, ակադեմիկոս և արվեստագիտության դոկտոր:

Այո՛, անհնարին է չհպարտանալ նրանով. չէ՞ որ նա էլ Հայաստանի հրաշալիքներից մեկն է:

1. Ի՞նչ նոր և կարևոր իրադարձություններ տեղի ունեցան Արամ Խաչատրյանի կյանքում: Ավելացրո՛ւ կենսագրական աղյուսակի մեջ:

2. Խաչատրյանի կարծիքով՝ ո՞րն է լավ երաժշտությունը: Ընթերցի՛ր այդ հատվածը:

3. «Արամ Խաչատրյանը մեծ հայրենասեր է»: Հիմնավորի՛ր այս միտքը՝ օգտվելով բնագրից:

4. Պատրաստի՛ր փոքրիկ հաղորդում հայ երգահաններից մեկի մասին և ներկայացրո՛ւ ընկերներիդ (կենսագրական աղյուսակի, պաստառի, փոքրիկ պատմության տեսքով):

ԱՉՔԻ ԱՌԱՋ

բարշունք

ԴԱՇՆԱՄՈՒՐ

ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ

Դաշն նախապես նշանակել է երկուսի միջև կնքված պայման, համաձայնություն, այնուհետև՝ ձայների համապատասխանություն, ներդաշնակություն: Այս վերջին իմաստից ծագել են երաժշտությանն առնչվող շատ բառեր՝ դաշնամուր կամ դաշնակ, դաշնակահար, ներդաշնակ և այլն:

Դաշնամուրը բարդ բառ է՝ դաշն + ամուր:

ԽԱՉԲԱՌ «ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ»

1 ա) Գտի՛ր, թե որ բառը որ նվագարանի անվանումն է. շեփոր, քանոն, թառ, պարկապզուկ, սրինգ, քնար, երգեհոն: Լրացրո՛ւ խաչբառը: Ընդգծված սյունակում կկարդաս **կոմպոզիտոր** բառի հայերեն համարժեքը:

բ) Այդ բառով խաղա՛ «բառքամոցի»:





2 Բնագրից ընտրի՛ր բարդ բառեր: Բաժանի՛ր բաղադրիչների և դրանցով բացատրի՛ր բառերի իմաստը:

3 Աջ և ձախ սյունակների բառերը միացրո՛ւ իրար և վերականգնի՛ր դարձվածները.

քիթը	տալ
ոտքերն	մեկ լինել
սիրտ	կախել
աշխարհով	ընկնել

4 **Գրի՛ր մեկ բառով.**

նվեր տալ – ....
խղճահարություն զգալ – ....
լույս տալ – ....
ուտելու համար պիտանի – ....
փոստը բաժանող, բաշխող մարդ – ....

5 ԲԱՌԱՆԻՎ

Լրացրո՛ւ միակ կրկնվող ձայնավորը և գրի՛ր գաղտնագրված բառի հոմանիշները:

Եթե նշենք Արամ Խաչատրյանի ստեղծագործություններից թեկուզ երկուսը՝ «Գայանե» և «Սպարտակ» բալետները, որոնք սիրված են ամբողջ աշխարհում, ապա դա էլ բավական կլինի, որ նա համարվի Հայաստանի հրաշալիքներից մեկը:

Մոտենում ենք Մարտիրոս Սարյանի արձանի շուրջը խմբվածներին և տեսնում, թե ինչպես են երեխաներն ուշադիր լսում նրա թոռնուհուն՝ Ռուզաննա Սարյանին: Եկեք մենք էլ լսենք:

ՍԱՐՅԱՆԻ ՆԿԱՐՆԵՐՈՒՄ ՇՈՂՇՈՂՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆԸ

Հայ մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանն ապրել է գրեթե մեկ դար՝ իննսուներկու տարի (1880–1972 թթ.):

Երեք տարեկանում հոր և եղբայրների հետ հում կավից իրենց համար տուն էր կառուցում Նոր Նախիջևանում՝ Ռուսաստանում, ջրհոր փորում:

Հոր և եղբայրների հետ ցորեն էր ցանում, հնձում, կալսում:

«Սիրում էի նայել կապույտ երկնքին, ամպերին, գիշերը՝ աստղերին ու լուսնին»,– հիշում էր նա:

Յոթ տարեկանում դառնում է դպրոցական, սովորում գրել-կարդալ հայերեն և ռուսերեն, թվաբանություն:

«Դպրոցի ճամփան անցնում էր կրպակների մոտով,– գրում է նա:– Այնտեղ նաև գրքեր էին վաճառում: Չնչին գումարով գնեցի «Ռոբինզոն Կրուզո» գիրքն ու մի շնչով կարդացի: Շատ ուրիշ գրքեր էլ գնեցի ու կարդացի, սակայն իմ ամենասիրելի գիրքը երկար ժամանակ «Ռոբինզոն Կրուզոն» էր»:

Նոր Նախիջևանում կար հայկական յոթ եկեղեցի՝ հայկական յոթ հրաշալիք: Քաղաքը հիմնադրել էին հայերը: Լույս էին տեսնում բազմաթիվ թերթեր ու ամսագրեր:

Ուսումնարանն ավարտելուց հետո Սարյանը ցրիչ է աշխատում թերթերի տարածման գործակալությունում:



«Հետաքրքիր դիմագծերով հաճախորդներ կային,– պատմում է նա:– Նստում էի մի անկյունում ու նկարում նրանց: Մի անգամ նկարեցի մի ծերուկի. շատ հաջող դիմանկար ստացվեց»:

Սակայն ծերուկը հիվանդանում է ու մտածում, որ պատճառը նկարն է: Գործակալության վարիչը նկարը պատռում է ծերուկի ներկայությամբ՝ ուրախություն պատճառելով նրան և դառնություն՝ Մարտիրոսին:

«ՎԱՐՈՏՈՒՅՑ ՄԻՋՎՈՒՅՑ»
ԴԱՍԱՎԱՆԱԿԱՆ ՎԱՐՈՏՈՒՅՑ

Մեծ եղբայրը նրան տանում է Մոսկվա՝ նկարչություն սովորելու: Սովորում է, նկարում, հաճախում թատրոն, գրադարանում ժամերով գրքեր է կարդում, շփվում մեծամեծ նկարիչների հետ:



Այդպիսին էր երիտասարդ Մարտիրոս Սարյանը:

Հետագայում նա դառնում է ակադեմիկոս, ժողովրդական նկարիչ, աշխատանքի հերոս:

Նա ստեղծում է հատուկ՝ սարյանական նկարչություն, որը սիրվում ու գնահատվում է ամբողջ աշխարհում:

Նայի՛ր նրա նկարներին և կտեսնես, թե ինչպես է կյանքը բաբախում այնտեղ, ինչպես է Հայաստանը հարատևում:

Սարյանը մեծ մարդ էր ու հայրենասեր, և բոլորի ցավն իր ցավն էր: Մեծ եղեռնի* օրերին նա մեկնում է Էջմիածին և Հովհաննես Թումանյանի հետ, կյանքը վտանգելով, օգնում թուրքերից մազապուրծ եղած հայ գաղթականներին, որոնք կոտորվում էին մոլեգնող* համաճարակից*:

1921 թվականից ընտանիքով մշտական բնակություն է հաստատել Երևանում և այնտեղ ապրել իր ամբողջ կյանքը, իր կնոջ՝ Լուսիկ Աղայանի հետ, որը մեր սիրելի գրող Ղազարոս Աղայանի դուստրն էր:



Մարտիրոս Սարյանի ստեղծագործական կյանքում բազմաթիվ են եղել թե՛ ուրախությունները, թե՛ տխրությունները:

1928 թվականին Փարիզում անհատական ցուցահանդես է ունենում, որը մեծ ուրախություն է պարգևում նրան: Սակայն տունդարձի ճանապարհին հրդեհվում է այն նավը, որը հետ էր բերում Սարյանի նկարները: Դրանք ոչնչանում են: Բայց Մարտիրոս Սարյանն իր ժողովրդի նման կենսունակ էր ու չհուսահատվող: Նա նորից ու նորից վերադառնում է իր նկարներին ու նոր հրաշալիքներ մատուցում մեզ և ամբողջ աշխարհին:

– Նա մանկական անմիջականությամբ և իմաստնությամբ իրար էր միացնում իրականն ու երևակայականը, հեքիաթն ու կյանքը և ստեղծում իր հրաշալիքը,– իր խոսքն ավարտեց Ռուզաննա Սարյանը:

1. Պատմի՛ր Մարտիրոս Սարյանի մասին՝ ըստ բնագրի համապատասխան հատվածների.

մանկություն, նկարչական առաջին փորձեր, մոսկովյան տարիներ:

2. Օգտվելով բնագրից՝ բնութագրի՛ր Մ. Սարյանին:

3. Ընթերցի՛ր բնագրի վերջին պարբերությունները և մեկնաբանի՛ր:

4. Ըստ քեզ՝ ո՞ր գույնն է գերիշխում Մ. Սարյանի նկարներում և ինչո՞ւ:

1 Կազմի՛ր 5 բարդ բառ՝ մեկական անգամ օգտագործելով երկու տողերից ընտրված արմատները.

ներկ, ջուր, գիրք, ամիս, դեմք
գիր, գիծ, հոր, դարան, պնակ

ԱՉՔԻ ԱՌԱՋ

հարարկել

ՈՒԶՈ՞ՒՄ ԵՍ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԼ

Մ. Սարյանի արձանը քանդակել է Լևոն Թոքմաջյանը

Ա. Խաչատրյանի արձանը կերտել է քանդակագործ Յուրի Պետրոսյանը

Հովհ. Թումանյանի արձանի հեղինակն է Արա Սարգսյանը

ԿԵՆՍՈՒՆԱԿ — ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ

Հին հայերենում մի բայ էր ապրում՝ **կեալ**, որը նշանակում էր ապրել: Սրանից ծնվել է **կեանք**, այսօրվա ուղղագրությամբ՝ **կյանք** բառը: Սա էլ ծնունդ է տվել **կենս** արմատին, որից ունենք շատ ու շատ բառեր. **կենսագրություն**՝ կյանքի մասին գրություն, **կենսուրախ**՝ կյանքով ուրախացող, **կենսունակ**՝ իր մեջ կյանք ունեցող, տոկուն, դիմացկուն:

Մ. Սարյանի նկարների մեջ ամբողջ աշխարհն է ու Հայաստանը՝ իր մարդկանցով ու կենդանիներով, սարերով ու ձորերով, ծառ ու ծաղիկներով, սիրով ու թախիծով: Ահա թե ինչու «**Սարյանի նկարներում շողշողում է Հայաստանի հավերժությունը**»:

ՀԱՐՑՆՈՒՄ Է ԳԻՐՔԸ

1 Ի՞նչ հրաշալիքների հանդիպեցիր դու: Պատմի՛ր այդ հրաշալիքների մասին:

2 Գծի՛ր աղյուսակը և լրացրո՛ւ հետևյալ բառերով.
Հովհ. Թումանյան, Ա. Խաչատրյան, Մ. Սարյան, խոսք, գույն, մեղեդի, երաժշտություն, նկարչություն, գրականություն:

3 ա) Բառագումար: «Գումարելիների» բոլոր տառերով կազմի՛ր բառեր.
ական + գրություն = գրականություն
նյութ + նկար + չու =
երաշտ + ուժ + թույն =

բ) Այդ բնագավառների ի՞նչ նշանավոր մարդկանց գիտես: Պատրաստի՛ր զեկույց նրանցից մեկի մասին:

4 Գոյականներից ստացի՛ր բայեր.
կառույց – ....
աշխատանք – ....
հունձ – ....
ուտելիք – ....

5 Գտի՛ր նախադասության իմաստին համապատասխան դարձվածը և գրի՛ր:

Որևէ բան խնամքով պահել:
Իրեն զգալ շատ ազատ և անկաշկանդ:
Անհանգստանալ, տագնապել ինչ-որ բանի համար:
Իրեն ասեղների վրա զգալ
Աչքի լույսի պես պահպանել
Ինչպես ձուկը ջրում

6 Պատկերացրո՛ւ, որ ձեռքիդ է Սարյանի ներկապնակը: Հովհ. Թումանյանի, Ա. Խաչատրյանի, Մ. Սարյանի մասին պատմող ո՞ր դրվագները կնկարեիր: Պատմիր այնպե՛ս, ինչպես կնկարեիր:

7 ա) Բառերի վանկերը գրված են աղյուսակում: Վերականգնի՛ր այդ երկու բառը և կազմի՛ր դրանց առաջին վանկերով սկսվող նոր բառեր.

տա	ոե	դա	սեր
հայ	ղան	նա	վոր

բ) Ո՞ՒՄ կվերագրես վերականգնված երկու բառը:

Տեսնենք, թե երեխաների համար ինչ անակնկալ է պատրաստել կրթության նախարարությունը:

ԱՆԱԿՆԿԱԼԸ



Հանկարծ հրապարակի վրա հայտնվեցին գույնզգույն օդապարիկներ՝ կարմիր, կապույտ, նարնջագույն զամբյուղներով: Բոլորը զարմանքից և ուրախությունից ճչացին:

– Ահա և անակնկալը,– ասաց ուսուցիչը:– Բոլորս օդապարիկներով ճամփորդելու ենք Հայաստանով:

– Ուռա՛,– ճչացին երեխաները:

Ծնողները խառնվեցին իրար, տատիկներն ու պապիկներն անհանգիստ շարժվեցին: Ուսուցիչն ասաց.

– Բոլոր երեխաները տեղավորվեն օդապարիկներում:

Բոլոր երեք օդապարիկներն էլ լցվեցին երեխաներով ու նրանց հիացական ճիչերով:

Եվ օդապարիկներն օդ բարձրացան:

– Ի՜նչ գեղեցիկ է Երևանը վերևից: Իսկական հրաշալիք է,– բացականչում էին երեխաները:

– Գիտե՞ք, որ մեր սիրելի Երևանն արդեն 2790 տարեկան է,– ասաց կարմիր օդապարիկի օդաչուն:

– Գիտե՞նք,– գոռացին երեխաները:– Նախկին անունն էլ Էրեբունի է:

– Ահա Հանրապետության հրապարակը, «երգող» շատրվանները,– ձայնեց Արշակը:

– Ահա Վարդան Մամիկոնյանի արձանը,– ասաց գիտունիկ Մուշեղը:

– Իսկ ո՞վ է Վարդան Մամիկոնյանը,– հարցրեց ուսուցիչը:– Պատմի՛ր նրա մասին, թող բոլորն իմանան:

– Վարդան Մամիկոնյանը կռվել է թշնամու դեմ և հերոսաբար զոհվել: «Մայրենի–2»-ում կարդացել ենք այդ մասին: Պապիկս էլ է պատմել: Թեև Վարդանը զոհվեց իր քաջարի զինակիցների հետ, սակայն հայերը պահպանեցին իրենց հավատն ու լեզուն:

– Կեցցե՛ս,– Մուշեղին նայելով սարքերի միջից՝ ասաց կապույտ օդապարիկի օդաչուն:

– Վարդան Մամիկոնյանի արձանի հեղինակը նշանավոր նկարիչ ու քանդակագործ Երվանդ Քոչարն է,– եզրափակեց ուսուցիչը:

– Իսկ ես տեսնում եմ Հայկին,– ճչաց Մանեն:

– Ի՞նչ Հայկ,– զարմացան երեխաները:

– Հայկ Նահապետին,– ժպտաց Մանեն:

– Այո՛, նա նետահարել է Բելին. այդ պահն է պատկերել քանդակագործը,– բացատրեց ուսուցիչը:– Նա՛ է մեր սկիզբը, մենք բոլորս Հայկ ենք: Հայկ Նահապետը մեր նախահայրն է:

– Շարժվում ենք դեպի Խոր Վիրապ,– ասաց նարնջագույն օդապարիկի օդաչուն, և օդապարիկներն ավելի բարձրացան վեր:

Ներքևում տներն ու շենքերը դարձան լուցկու տուփերի չափ: Բոլորը հիանում էին մերթ օդապարիկներով, մերթ երկնքի ամպերով, մերթ ներքևի համայնապատկերով:

– Երեխանե՛ր, հիշո՞ւմ եք՝ «Մայրենի–2»-ում դուք կարդացել եք Սարդարապատի հերոսամարտի մասին: Հիշո՞ւմ եք, թե ինչպես հայերը, համախմբվելով, հաղթեցին թշնամուն: Այդ ճակատամարտով որոշվեց մեր լինել-չլինելու հարցը: Ահա մենք տեսնում ենք Սարդարապատի հրաշք համալիրը,– ասաց ուսուցիչը:

Արդեն մոտենում էին Դվին գյուղին, երբ օդաչուները հրահանգեցին.

– Իջնո՛ւմ ենք:

Եվ օդապարիկներն իջան Դվին գյուղի դարբնոցի մոտ:

– Մի քիչ զրուցենք Արամի դարբին պապի հետ, այնուհետև ոտքով կբարձրանանք Խոր Վիրապ,– բացատրեց ուսուցիչը:

Երեխաները հիացմունքով նայում էին բլրի վրայի եկեղեցուն, Մասիս սարին, Արարատյան դաշտին, բարդիներին ու նրանց վրա բույն դրած արագիլներին: Նայում էին միմյանց, իրենց օդապարիկներին, Արամի դարբին պապին, պապի ու իրենց աչքերում փայլփլող քուրայի* կրակներին:

1. Մրն էր անակնկալը, և դեպի ո՞ւր ուղևորվեցին երեխաները:

2. Ի՞նչ հրաշալիքներ տեսան երեխաները ճանապարհին:

3. Քեզ համար ի՞նչն է հրաշալիք, որ կուզենայիր տեսնել օդապարիկից:

ՎԻՐԱՊ

ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ

Վիրապ նշանակում է խոր փոս, անջուր հոր, գետնի մեջ փորված բանտ: Ըստ ավանդության՝ Գրիգոր Լուսավորիչը բանտարկվեց Խոր վիրապում և այնտեղ մնաց 14 տարի:

Հետագայում այդ վիրապի վրա կառուցվել է եկեղեցի:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

դարբնոց
օրաչ ու

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

ինքնաթիռ

1 ՉՎԱՐԹ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Չորս համարձակ օդաչու
Ունեն Արամ մի եղբայր,
Իսկ Արամը, ա՛յ քեզ բան,
Չունի և ոչ մի եղբայր.
Դե կռահի՛ր, թե ինչու:

օդապարուկ



գազաթիռ
(դիրիժաբլ)

ուղղաթիռ

տիեզերանավ

հրթիռ

անկարգել
(պարաշյուտ)

ճախրակ
(դելտապլան)

օդապարիկ

2 Գտի՛ր, թե ինչ օրինաչափությամբ է կազմված շարքը և շարունակի՛ր.

Արա, բարդի, գույնզգույն,
Դվին, Երևան, ...

3 ա) Բառի մեջ կրկնվում է միակ ձայնավորը: Գտի՛ր բառը.

ՆԿՆԿԼ

բ) Գտի՛ր բառեր, որոնց մեջ կրկնվում է միակ ձայնավորը:

Այսպիսով, հրաշքներով լի են ինչպես հեքիաթները, այնպես էլ քո հայրենի աշխարհը:

Մտքով երբևէ բարձրացե՞լ ես Մասիս: Երբևէ մտածե՞լ ես, թե ինչ ճանապարհ է Մասիսից դեպի Ագռավաքար:

ՄԱՍԻՍԻՑ ԴԵՊԻ ԱԳՌԱՎԱՔԱՐ

Արամի դարբին պապը զարմանալի ու հիանալի իրեր է պատրաստում շիկացած երկաթից: Երեխաները զարմանքով նայում էին, թե շիկացած երկաթն ինչպես է թշշալով մտնում ջրի մեջ ու դառնում մի գեղեցիկ իր: Արամը հպարտությամբ էր նայում դարբին պապի հզոր մկաններին, հատու* շարժումներին:

– Սա էլ Արտավազդի համար,– ասաց պապը և կռանով* մի քանի անգամ հարվածեց սալին*:

– Արտավազդն ո՞վ է,– հարցրեց Արամը:

– Արտավազդը հայ թագավոր էր: Ըստ առասպելի՝ շղթայված է Մասիս լեռան քարանձավում: Հավատարիմ շները կրծում են շղթաները, որ ազատեն նրան, իսկ մենք խփում ենք սալին, ու այդ ձայնից շղթաները նորից ամրանում են:

– Բայց ինչո՞ւ չենք ուզում, որ Արտավազդը դուրս գա,– իրար հերթ չտալով՝ հարցրին երեխաները:

– Չգիտեմ, ասում են՝ աշխարհին կտիրի:

– Իսկ աշխարհին տիրելը վա՞տ բան է:

– Երևի:

– Իսկ չի՞ լինի, որ դուրս գա, Մասիսին տիրի, մենք էլ ունենանք ոչ թե գերի Մասիս, այլ մե՛ր Մասիսը:

– Որ ազատվի, չենք իմանա՝ ինչ կանի:

– Պապի՛կ, արի գնանք ազատենք նրան, հաստատ վատ բան չի անի:

– Ո՞նց գնանք: Մեզ ո՞վ կթողնի բարձրանալ Մասիս: Հնարավոր չէ: Ինքներդ ասացիք, որ Մասիսը գերված է:

– Մտքով գնանք գոնե:

– Մտքով շատ եմ գնացել, բայց շատ բան չեմ տեսել:

– Միասին գնանք: Երբ բոլորիս մտքերը միացնենք ու գնանք, շատ բան կտեսնենք:

– Լա՛վ:

– Պա՛պ, Մասիսին Արարատ էլ են ասում, ինչո՞ւ:

– Արարատ անվանումը գալիս է մեր Արա աստծու և Արա թագավորի անունից: Օրինակ, Արագած նշանակում է Արայի գահ, իսկ Արարատ՝ Արայի լեռ: Գիտե՞ք, որ Արարատի կատարին է իջել Նոյն իր տապանով:

– Գիտենք:

– Իսկ գիտե՞ք, որ Արարատն աշխարհի ամենաբարձր սարն է՝ հաշված ստորոտից:

– Գիտենք: «Մայրենի–2» դասագրքում ենք կարդացել:

– Իսկ գիտե՞ք, որ Փոքր Մասիսը մի քանի միլիոն տարով փոքր է Մեծ Մասիսից:

– Ո՛չ:

– Տեսա՞ք: Այդ մեկը չգիտեք: Իսկ գիտե՞ք, որ հայի սիրտը նման է Մեծ ու Փոքր Մասիսներին: Հայը Մեծ Մասիս սրտով աշխարհն է սիրում, Փոքր Մասիս սրտով՝ իրեն:

– Չգիտենք: Ինչո՞ւ է այդպես:

– Մեծանաք՝ կիմանաք:

– Հիմա՛ ենք ուզում իմանալ:

– Հիմա ես էլ չգիտեմ:

– Պա՛պ, Մասիսի վրայի այսքան ձյունն ի՞նչ է լինում,– հարցրեց Անին:

– Չգիտեմ: Մասիս սարից ոչ մի գետ սկիզբ չի առնում: Ձյունը հալվում է ու գնում գետնի տակ:

– Իսկ Մասի՞սն է բարձր, թե՞ Սևանա լիճը:

– Մասիսը 3 կիլոմետրով բարձր է Սևանից:

– Գուցե Մասիսի ջուրը գետնի տակով գնում Սևա՞նն է լցվում:

– Ի՞նչ իմանամ: Համա թե երևակայում եք, հա՛:

– Բա սրանք ի՞նչ են, պա՛պ, ի՞նչ գեղեցիկ են: Տե՛ս, բոլոր տեղերից թռչում-գալիս են այստեղ, բույն են դրել Մասիսի լանջերին, թռչում են գագաթի վրայով:

– Սրանք հայի երազանքներն են,– հառաչեց պապը:

– Պա՛պ, կարծում եմ արդեն ժամանակն է, Արտավազդին պիտի ազատել:

– Է՛հ, թոռնիկնե՛ր ջան, մենակ Արտավա՞զդն է. Փոքր Միերին էլ պիտի Ագռավաքարից ազատել,– ոգևորվեց պապը:

– Միերը Սասունցի Դավթի տղան է, գիտենք:

– Ապրե՛ք, որ գիտեք: Փոքր Միերին հողն արդեն չէր կարողանում պահել: Ագռավաքարը բացվեց, Միերը Քուռկիկ Ջալալիին հեծած ներս մտավ քարի մեջ, ու քարը փակվեց: Նա էլ պիտի մի օր դուրս գա և ազատի հայոց աշխարհը չար ուժերից:

Մինչև այժմ էլ Վանա բերդի մոտ կա այդ սրբազան քարաժայռը՝ «Միերի դուռը»:

Միերի դուռը

– Ագռավաքա՞րն էլ է գերության մեջ:

– Այո՛:

– Պա՛պ, էլ ի՞նչ ենք սպասում: Թող մեր մի մասը գնա Ագռավաքար՝ Միերին ազատելու, մի մասը բարձրանա Մասիս՝ Արտավազդին ազատելու:

ՈՒՋՈ՞Ւ ԵՍ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԼ

Խոր վիրապ

Հայոց հզոր թագավոր Տրդատը Գրիգոր Լուսավորչին գցեց խոր վիրապը: Հետագայում Տրդատ արքան հիվանդացավ անբուժելի հիվանդությամբ: Գրիգոր Լուսավորչին հանեցին Խոր վիրապից, և նա բուժեց Տրդատ արքային:


Ս. Էջմիածին

Գրիգոր Լուսավորիչը երազ է տեսնում. Քրիստոսը հրեղեն սյան միջով իջնում է, և Լուսավորչին ցույց տալիս եկեղեցին կառուցելու տեղը: Էջմիածնի Մայր տաճարը Տրդատ արքան և Գրիգոր Լուսավորիչը կառուցում են 301–303 թվականներին: Սա աշխարհի ամենահին քրիստոնեական եկեղեցին է և համարվում է Հայաստանի հրաշալիքներից մեկը:

1. Արամի պապն ինչո՞վ էր զարմացնում երեխաներին: Արամն ինչո՞ւ էր հպարտությամբ նայում նրան:

2. Ի՞նչ իմացար Արտավազդի, Արարատի, Փոքր Միհրի, Սարդարապատի, Վարդան Մամիկոնյանի մասին: Պատմի՛ր:

3. Պատկերացրո՛ւ՝ Մասիսի գագաթին ես:

ի՞նչ տեսար ի՞նչ լսեցիր	ի՞նչ զգացիր
ինչի՞ մասին մտածեցիր	ի՞նչը կուզենայիր, որ փոխվեր

4. Քո կարծիքով՝ որո՞նք են հայի երազանքները, որոնք թռչունների տեսքով ամբողջ աշխարհից գալիս և բույն են հյուսում Մասիսի լանջերին:

5. Ըստ քեզ՝ ի՞նչ կպատահի, եթե.

– Արտավազդը դուրս գա Մասիսի վիհից,

– Միհրը դուրս գա Ագռավաքարից:

1 Շարունակի՛ր

Արտավազդ – թագավոր	Փոքր Միհր – ....
Էջմիածին – եկեղեցի	Քուռկիկ Ջալալի – ....
Արարատ –	Վարդան Մամիկոնյան – ....
Արագած –	Սարդարապատ – ....
Արա –	Խոր վիրապ – ....
Նոյ –	Տրդատ – ....
Սևան –	Գրիգոր Լուսավորիչ – ....

2 Լրացրո՛ւ նախադասությունները: Քո գրած բառերը տեղադրի՛ր խաչբառում: Ընդգծված սյունակում կկարդաս հայերի սիրելի թռչունի անունը:



1. Զորավար Վարդան .....ը պայքարում էր հանուն հավատի և լեզվի:
2. Փոքր Միհրը փակվել է .....ում:
3. Գրիգոր .....ն առաջին հայ կաթողիկոսն է:
4. Զրհեղեղից հետո ...ի տապանն իջավ Արարատի վրա:
5. ..... Ջալալին կարողանում էր խոսել մարդկային լեզվով:

3

Նախադասությունից քայլ առ քայլ հանելով մեկական բառ՝ ստացիր համառոտ նախադասություն.

Հանկարծ հրապարակի վրա հայտնվեցին գույնզգույն օդապարիկներ՝ կարմիր, կապույտ, նարնջագույն զամբյուղներով:

4

Փակագծերում գրիր մի բառ, որը նշանակի այն, ինչ փակագծերի աջ ու ձախ կողմերում գրվածները.

ձեռքի մաս (.....) խողովակի ծալք, ճկվածք

թնդանոթի մաս (.....) դրամ

երկրաչափական մարմին (.....) զորամիավորում

5

Օրինաչափիկ

Գտիր «ավելորդ» բառազույգը.

բանակ – բաժակ

դիմակ – դիպակ

կածան – կապան

դարան – դանակ

6

Փոխակերպում

Մեկ քայլով քարի հանքից ինչպե՞ս «կկառուցես» եկեղեցական համալիր:

7

Կազմի՛ր բարդ բառեր

7 տարի – յոթնամյա

2 սապատ – ....

5 նիշ – ....

3 անկյուն – ....

8

Դարձվածները գրիր հետևյալ հերթականությամբ.

ա) չափազանց զբաղված լինել,

բ) ոչինչ չանել,

գ) խաբել:

Թևերը ծալած նստել, քիթ սրբելու ժամանակ չունենալ, քթից բռնած ման ածել, գլուխը յուղել, աչքերը կապել, պարապ-սարապ լինել, գործից աչք չթարթել, ճանճ բռնել, մինչև կոկորդը թաղված լինել գործի մեջ:

Թե միասին մտածեք ու գործեք,
Ուրեմն դուք էլ հրաշագործ եք,
Ուրեմն դուք եք հրաշք արարում,
Ձեզնով, ձեր գործով կյանքը զարդարում:

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Օդաչուները, ուսուցիչները, երեխաները հրաժեշտ տվին պապին, Մասիսին, Խոր վիրապին, Արարատյան դաշտին, արագիլներին ու, նստելով օդապարիկները, ուղևորվեցին դեպի հաջորդ հրաշալիքը՝ Սևանա լիճը:

Ճանապարհին նրանք բազում հրաշալիքներ տեսան: Դրանցից մեկն անդնդախոր կիրճերով շրջապատված Գառնիի տաճարն էր:

Ըստ ավանդության՝ Գառնիի ամրոցը կառուցել է Հայկ Նահապետի ծոռ Գեղամը մեզանից մոտ 2300 տարի առաջ: Նրա Գառնիկ թոռան անունով էլ ամրոցը հետագայում կոչվել է Գառնի:

Գառնիի ամրոցը պեղելիս* բացվել է մեզանից 5000 տարի առաջ գոյություն ունեցած բնակավայր: Այնտեղ գտնվել են զանազան կենցաղային գործիքներ, խեցեղեն*, զենքեր, գյուղատնտեսական գործիքներ: Ովքե՞ր են եղել դրանք ստեղծած մարդիկ, ի՞նչ են մտածել, ինչպե՞ս են ապրել: Իմացե՞լ են, արդյոք, որ մի օր մենք կիմանանք իրենց մասին, որ Հայաստան պետության չորրորդ դասարանցի աշակերտները կկարդան նրանց մասին, կհիանան ու կհպարտանան իրենց նախնիներով:

Բազմաթիվ թշնամիներ դարերի ընթացքում ավերել են թե՛ բերդը, թե՛ տաճարը, իսկ մենք բազմիցս վերականգնել ենք դրանք: Պահպանվել են ամրոցի պարիսպների մնացորդները: Հսկայական է պարսպի ամեն մի քարը. կշռում է 5–6 տոննա: Այսօր Գառնիի տաճարը հպարտորեն կանգնած է մեր ազատ երկրում և հիացնում է բոլորին:

Գառնիից հետո երևաց սքանչելի Գեղարդը:

Հիշո՞ւմ ես, «Մայրենի–2»-ում կարդացել ես նրա մասին:

Գառնիի տաճարը

Գեղարդավանք

1. Ի՞նչ իմացար Գառնիի տաճարի մասին:
2. Ի՞նչ ես հիշում Գեղարդի վանքի մասին:
3. Ինչո՞ւ ենք մենք հպարտանում մեր նախնիներով:

1

Վերականգնի՛ր «քանդված» առածները.

Շատ կարդաս, քիչն էլ կկորցնի:
Լավ անես՝ քեզ կանես, սովորիր քե՛զ համար:
Աղքատը հացի կարոտ է, վատ անես՝ քեզ կանես:
Արա ուրիշի՛ համար, հարուստը՝ ամեն բանի:
Շատի հետևից ընկնողը շատ բան կիմանաս:

2

Կազմիր այնպիսի՛ նախադասություններ, որ հետևյալ բառերը մի դեպքում լինեն գոյական, մյուս դեպքում՝ ածական.

ճանապարհորդ, սուտասան, հերոս, վարպետ, իմաստուն, մտավորական, առաջնորդ, շարքային:

Օրինակ: Գիտնականները վիճում էին այդ հարցի շուրջ:
Գիտնական Համբարձումյանին գիտեին բոլորը:

3

Բնագրից գտի՛ր և գույգ առ գույգ գրի՛ր հետևյալ բառերի հականիշները.

անազատ, կառուցել, նստել, փակվել, փոքր, նախորդ:

☺ *Խնդուկ*

– Արա՛, կարո՞ղ ես թվել այնպիսի բաներ, որ հարյուր տարի առաջ գոյություն չունեին,– հարցրեց ուսուցչուհին:
– Այո՛: Օրինակ՝ ես և Դուք:

Հիշի՛ր

Գալնագը կառուցում է ժայռափոր եկեղեցին:

ՈՒՂՈ՞ՒՄ ԵՍ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԼ

Գեղարդավանքը մինչև XIII դարը կոչվել է Այրիվանք: Կարո՞ղ ես կռահել, թե ինչու: (Հիշի՛ր. **այր** նշանակում է անձավ, քարայր, փորվածք:)

Երբ հետագայում այստեղ են բերում այն սուրբ գեղարդը՝ նիզակը, որով հռոմեացի հարյուրապետը խոցել է խաչված Քրիստոսի կողը, այդ ժամանակներից եկեղեցին կոչվում է Գեղարդավանք:

Այդ գեղարդի մասունքն* այսօր պահվում է Սուրբ Էջմիածնում:

Երբ վայրէջք կատարեցին գեղեցկուհի Սևանի ափին, ուսուցիչը մի պատմություն պատմեց երեխաներին: Ահա այն. դուք էլ կարդացեք:

ԻՇԽԱՆԸ

Լինում է, չի լինում՝ մի թագավոր է լինում, անունը՝ Իշխան: Նա շատ գեղեցիկ էր ու ճարպիկ, լավ որսորդ էր և շատ հյուրընկալ: Նրա համբավը* տարածվել էր աշխարհով մեկ: Ապրում էր իր ծովային պալատներում, ուներ բազում երեխաներ, հաշտ ու համերաշխ էր ջրի ու արևի հետ:

Հաճախ իր մոտ էր կանչում Կարմրախայտ* արքայազնին ու հանձնարարում.

– Մեր տերության մեջ 28 գետ ու գետակ է թափվում: Գնա՛ և ստուգի՛ր Ձկնագետն ու Գավառագետը:

Իսկ Կողակ* արքայազնին Իշխանը հրամայում էր.

– Իսկ դու ստուգի՛ր Վարդենիս ու Կարճաղբյուր գետերը:

Այդպես բոլորին հանձնարարություն էր տալիս, տիրություն էր անում իր թագավորությանը:

Գիլլի անունով հատուկ լճակ էր առանձնացրել, որտեղ բազմաթիվ հյուրեր էր ընդունում աշխարհի տարբեր ծայրերից:

Ահա իր երկար-բարակ ոտքերով հեռավոր երկրներից թռչում-գալիս է վարդագույն թևերով Կարմրաթևիկը:

– Թույլ կտա՞ք ձեր լճում հանգստանալ,– ասում է նա Իշխանին:

Իշխանը բարեկամաբար ժպտում է ու ասում.

– Համեցե՛ք, այստեղ թե՛ տաք է, թե՛ կերն է առատ: Եղեգնուտներ՝ ինչքա՜ն ուզեք: Կարող եք բույն դնել:

Հանկարծ հայտնվում է Ջրշունը*.

– Ո՛վ մեծ Իշխան, ես Հավալուսնի՜ն տես: Ձուկը բռնում է, օդ է գցում,

պտտեցնում, որ գլխի կողմից կուլ տա: Կտուցի տակ էլ մի հսկայական պարկ ունի, մեջը ձուկ է լցնում: Տե՛ս, թե դրան ոնց եմ փետրահան անելու:

– Նա հյուր է, մի՛ նեղացրու,– հորդորում* է Իշխանը:– Տե՛ս, մեր տերության մեջ իրար կողքի հանգստանում են ձկնկուլն ու ջրարծիվը, բադն ու ջրածիծառը, սուզահավն ու կարմրակատարը, տառեղն* ու հավալուսնը*, արագիլն ու որորը, ո՞ր մեկը թվեմ, ինքդ գիտես:

Ձրշունը շոյվում է, որ Իշխանն իր հետ մտերմորեն է խոսում, ու անկեղծանալով ասում է.

– Սուզահավն ու Փարփարը մեր Գիլլիում նաև ձագեր են հանում: Որպեսզի Բազեն ու ես ձվերը չգողանանք, դրանք ծածկում են կանաչ մամուռով* ու գնում կեր փնտրելու: Մի քանի անգամ այդպես ծածկելուց հետո ձվերը կանաչավուն են դառնում ու չեն երևում:

– Բոլորս էլ մեր ձագուկներին պահպանելու միջոց ենք գտնում, զարմանալի չէ,– ասում է Իշխանը, և Ձրշունը պոչը քաշելով հեռանում է:

– Կանչե՛ք կարմրակտուց Սուզաբադին,– հրամայում է Իշխանը:

– Որքա՞ն է ջրի ջերմաստիճանը մեր թագավորության ստորին* մասում՝ հատակին մոտ:

– Չորս աստիճան,– կմկմում է Սուզաբադը:

– Իսկ վերևո՞ւմ:

– Քսան աստիճան:

– Շատ լավ: Այդպես էլ պահպանել:

Այսպես հազարավոր տարիներ ապրում էր թագավորությունը:

1. Որտե՞ղ և ինչպե՞ս էր ապրում Իշխանը:

2. Իշխանն ինչպե՞ս էր ընդունում հեռավոր երկրներից եկած թռչուններին:

3. Ի՞նչ հրամաններ էր տալիս Իշխանը: Քո կարծիքով՝ ուրիշ ի՞նչ հրամաններ էր տալիս նա:

1 Ի՞նչն է, որ Արփա գետում առաջին տեղն է զբաղեցնում, իսկ Սևանա լճում՝ երրորդ:

2 **Փոխակերպում**

Մեր բոլորի երազանքն է, որ Սևանը հասնի իր նախկին ափերին՝ ծովանա: Եկեք **լիճ**-ից ստանանք **ծով**.

լիճ – խ □□ – □ իտ – խոտ – □ ոտ – հո □ – ծով:

ԽՈՍՔԱՅԻՆ «ՎԹԱՐՆԵՐ»

3 Կարդա՛ նախադասությունը, գտի՛ր ավելորդ բառերը: Նախադասությունն արտագրի՛ր առանց դրանց:

Ձկնորսը Սևանա լճում ձուկ էր որսում ջրի մեջ:

Նա բռնեց մի իշխան, մի սիգ, մի ձուկ, մի ծածան:

Նա ու իր ընկերը երկուսով գնացին տուն:

ԻՇԽԱՆԸ (շարունակություն)

Մի օր էլ, մի շա՛տ դժբախտ օր, մի ահռելի դղրդոց տարածվեց ամբողջ թագավորությունով մեկ. մարդը պայթեցրեց Սևանից դուրս եկող միակ գետի՝ Հրազդանի հունը: Պայթեցրեց, ու ջուրը սկսեց փախչել, թագավորությունն սկսեց ցամաքել: Գիլլի լիճն էլ ցամաքեց: Իշխանը տեսավ, որ իր սպիտակ ապարանքները* մնացին ջրից դուրս:

Լճում հայտնվեց Սիգը և ասաց.

– Հիմա ե՛ս եմ թագավորելու:

Իշխանն ապստամբեց, սակայն իր բոլոր զավակների համար ապրելու տեղ չկար, սնվելու տեղեր չկային, ու նրանք կամաց-կամաց անհետացան: Լիճն իջավ 18 մետր: Իշխանը փակվեց իր քարե ապարանքներից մեկում ու ասաց.

– Մինչև ջուրը չբարձրանա և չծածկի ինձ, ես դուրս չեմ գա:

Ու մինչև հիմա էլ փակված է քարի մեջ: Մի Ագռավաքար էլ սա է: Մեկ-մեկ հեռավոր երկրներից թռչում-գալիս են կարապներ ու հավալուսններ, հարցնում են Իշխանին: Բայց ո՛չ Իշխանը կա, ո՛չ էլ Գիլլի լիճը: Խռոված հեռանում են ու երևի այլևս չգան:

Մարդիկ հասկացան, իհարկե, շա՛տ ուշ հասկացան, որ թագավորությունը մեռնում է, լիճը պետք է փրկել կործանումից: Սևանը գրկող լեռների տակով փորեցին 48 կմ երկարությամբ մի հրաշք ջրանցք, որով Արփա գետի ջրերը հոսում են դեպի Սևանա լիճ:

Լճի ջուրն սկսեց բարձրանալ: Այն ամենաշատը կարող է 6 մետր բարձրանալ: Գուցե այդքանն էլ բավական է, որ Իշխանը նորից վերադառնա և տիրություն անի իր երկրին:

Լիճ ես թեև,
Իմ Սևան,
Բայց մեր սրտում
Դու և՛ ծով ես,
Ե՛վ օվկիանոս
Անսահման:

Երեխաները տխրեցին, սակայն շուտով, ուրախության ճիչեր արձակելով, ցույց էին տալիս գեղեցկուհի Սևանի ուղղությամբ, որ ամպոտ լեռների գրկում շաչում* էր ու հին ափերը փնտրում:

Քիչ անց երեխաներն արդեն Սևանա լճի ափին էին: Լողացան լճի զովասուն ջրերում, բարձրացան Սուրբ խաչ եկեղեցի: Այնուհետև նստելով օդապարիկները՝ ճամփա բռնեցին դեպի Երևան:

Ամբողջ ճանապարհին ոգևորված խոսում էին, տպավորություններ պատմում միմյանց:

– Իջնելու ենք կայարանում՝ Սասունցի Դավթի արձանի մոտ,– հայտարարեցին օդաչուները:

Կայարանում հոծ բազմություն էր հավաքվել: Եկել էին ծնողները, տատիկներն ու պապիկները:

Երեխաները ձեռքով էին անում նրանց, հրճվանքից ճչում:

– Ա՛յ թե լավ ճամփորդություն էր, ինչքա՜ն հրաշալիքներ տեսանք,– ոգևորվել էին երեխաները:

1. Ի՞նչ պատահեց Իշխանի թագավորությանը:

2. Փրկության ի՞նչ ծրագիր կազմեցին մարդիկ, որ Իշխանը նորից տիրություն անի իր թագավորությանը:

3. Նկարագրի՛ր և բնութագրի՛ր Իշխանին:

4. Այս ճամփորդությունից ի՞նչն ավելի շատ քեզ դուր եկավ: Գրի՛ր «Իմ տպավորությունը» վերնագրով շարադրություն:

1 Բնագրից դո՛ւրս գրիր թռչունների անունները: Դրանցից մեկի մասին պատրաստի՛ր հաղորդում և ներկայացրո՛ւ ընկերներիդ:

2 Բնագրից դո՛ւրս գրիր Սևանա լիճը թափվող գետերի անունները: Որոշի՛ր բարդ բառերը և բաժանի՛ր բաղադրիչների: **Գետ** արմատով կազմի՛ր բարդ կամ ածանցավոր բառեր:

3 Դարձվածները և համապատասխան բացատրությունները գրիր կողք կողքի:

Դարձվածներ	Իմաստներ
Ինչպես ձուկը ջրում	Շրջապատողներին շփոթեցնել, խորամանկել, շահադիտական նպատակով իրար խառնել իրադարձությունները:
Շատ ջրեր են հոսել	Իր միջավայրում է, իր ոլորտում, ազատ է զգում իրեն, լավ, անկաշկանդ:
Ջուր պղտորել	Օգտվելով ուրիշների դժվարությունից, շփոթմունքից, խառը վիճակից՝ շահ քաղել:
Պղտոր ջրում ձուկ որսալ	Շատ ժամանակ է անցել:

4 Խմբավորիր հետևյալ բառերը և լրացրու աղյուսակը.

թագավորություն, ջրանցք, լճակ, անհանգիստ, կարմրակատար, ձուկ, ձագուկ, լիճ, հսկայական, տխրություն, դժբախտ:

պարզ	բարդ	ածանցավոր

Խնդրանք

– Մա՛մ, եղինջը կծո՞ւմ է:
– Այո՛:
– Իսկ ո՞նց է հաչում...

5 ԶՎԱՐԹ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ի՞նչ ենք լսում դասի սկզբում:
- Թվարկի՛ր շաբաթվա հինգ օր՝ առանց անունները տալու:
- Ո՞ր բառի մեջ է ս տառը չոր:

Սևանա լիճը մեր հրաշալիքներից է, աշխարհի ամենագեղեցիկ լճերից մեկը, մեր հպարտությունն է, մեր հույսի ու լույսի աղբյուրը:
Աչքի լույսի պես պահենք-պահպանենք այն:

– Այս դյուցազնը մեր պայքարի, հերոսության խորհրդանիշն է,– ասաց Վարդուհին:

– Մենք նրան ծանոթ ենք դեռևս «Այբբենարանից»,– շարունակեց Հայկը:

– Մեր բոլոր դասագրքերում էլ նրա մասին գրված է,– ասաց Գոռը:

Դուք, իհարկե, կռահեցիք, թե որ հերոսի մասին էին զրուցում երեխաները: Նրա կատարած ի՞նչ սխրանքներ կարող եք հիշել:

Իբրև ընծա այս գրվածքս նվիրում եմ քեզ,
ո՛վ իմ բարեկամ:

«Սասունցի Դավիթ» դյուցազներգությունն առաջին անգամ գրառել է ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԸ:

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ ԿՌՎՈՒՄ Է ԴԵՎԵՐԻ ԴԵՄ

- **Ուշադիր դիտի՛ր նկարը: Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ:**
- **Կարդա՛ բնագրի առաջին հատվածը և բովանդակությունը համեմատի՛ր քո հորինած պատմության հետ:**

Գարուն էր: Դավիթը նախրորդ էր:
Նախիրը քշեց Սպիտակ քարի տակ՝ աղբյուրի մոտ:
Տեսավ՝ յոթ գյուղի նախրորդներ հավաքվել են:
Մի նախրորդ ասաց.
– Ո՞վ կգնա հարիսա բերի՝ ուտենք:
Դավիթն ասաց.
– Դուք իմ նախիրը պահեք, ես կգնամ:
Ու Դավիթը ելավ-գնաց հարիսատեղ:

Տեսավ՝ հարիսայով լի չորսունկանի* մի հսկա պղինձ թոնրի մեջ:
Պղինձը շալակեց, եկավ-հասավ ընկերներին.
– Եկե՛ք, տղեկնե՛ր, հարիսա՛ կերեք:
Է՛յ, ինչո՞ւ չեք գալիս:
Տղեկներն ահից ցամաքել էին:
Նրանցից մեկն ասաց.
– Դավի՛թ, դու որ գնացիր, քեզանից հետո
Քառասուն ավազակ դևեր եկան,
Նախրից քառասուն տավար տարան:
Դավիթն ասաց.
– Բան չկա, տղեկնե՛ր,
Եկեք նստեք՝ կուշտ ուտենք:
Տղեկներն ահից չկարողացան ճաշ ուտել:
Դավիթն ասաց.
– Գիտե՞ք, թե որ ճամփով տարան:
Ասին.
– Հա՛: Ա՛յ էս սարով զարկին, անցան վերև:

1. Բնագրից ընտրի՛ր և կարդա՛ այն տողերը, որտեղ դրսևորվում են Դավթի հետևյալ հատկանիշները.

– ուրիշին օգտակար լինելու պատրաստակամությունը,
– հսկայական ուժը,
– ներողամտությունը թույլերի նկատմամբ,
– վստահությունն իր ուժերի նկատմամբ,
– հոգատարությունը թույլերի նկատմամբ:

2. Քո կարծիքով՝ ի՞նչ տեղի կունենա Դավթի ու դևերի միջև:

Դավիթը կոպալը դրեց ուսին,
Ճամփան տվեց առաջ,
Սարեր-ձորեր փնտրեց, դևերին չգտավ:
Գնաց-հասավ մի սարի,
Տեսավ՝ քարափների միջից ծուխ է դուրս գալիս:
Բռնեց էդ ծուխը՝ գնաց:
Տեսավ՝ քառասուն ավազակ դևեր
Քառասուն կովերը բերել, մորթել են,
Լցրել քառասունկանթանի պղնձի մեջ,
Օջախ են արել, դրել օջախին,
Քլթքլթալեն եփում են:
Դավիթը վերցրեց քառասունկանթանի պղինձը,

Շուռ տվեց օջախի վրա,
Քառասուն կաշին հավաքեց-լցրեց պղնձի մեջ,
Մի մեծ քար վերցրեց, գրկեց,
Գնաց մտավ դևերի քարայրը,
Քարով փակեց քարայրի դուռը,
Որ դևերը չփախչեն:
Դավիթն էդտեղ մեկ որ բոռաց,
Սարսափ թափվեց ավազակ դևերի վրա,
Դևերի մեծը ձայնը լսեց, ասաց.

– Ելե՛ք, ծառայությո՛ւն արեք, որ չսպանի մեզ՝
Էնի Դավիթն է, ելեք վե՛ր:
Համա Դավիթը բռնեց,
Դևերի վզերը մեկ-մեկ ոլորեց,
Կտրեց, գցեց քարայրից դուրս:
Մեկ էլ տեսավ՝ մի դև
Մի կողմ նստել, բերանը բացել ծիծաղում է:
Ասաց.
– Ես Դավիթն եմ, դեռ տասներկու տարեկան եմ,
Ի՞նչ ամոթալի բան տեսար ինձ վրա,
Որ ծիծաղում ես:
Ասաց ու ուժեղ ապտակեց դևին.
Դևի գլուխը գլորվեց-գնաց, մարմինը՝ մնաց:
Դու մի ասի, էդ դևը մեռած էր արդեն:
Դավթի ուժ, զորություն որ տեսել էր,
Տեղն ու տեղը ահից մեռել, չորացել էր,
Բերանը բաց էր մնացել, ատամները՝ դուրս:
Դավիթը նայեց-տեսավ՝ քարայրը լիքն է
Ոսկի, արծաթով,

Ինչ որ մարդուն պետք է՝ լիքն է.
Դևերն ավազակություն էին արել,
Սասնա ողջ հարստությունը բերել-լցրել էին քարանձավի մեջ:
Դավիթն իր խուրջինը* ոսկի լցրեց,
Մորթված տավարի գլուխ ու ոտք լցրեց պղինձը,
Ոսկի լցրեց պղինձը,
Եկավ-հասավ հարիսատեղ:
Ամեն մեկին տվեց իր տավարի կաշին,
Ոտ ու գլուխ, ոսկի, արծաթ:

• Դու ճանաչում ես Դավթին: Մտածի՛ր՝ Դավիթն ինչո՞ւ է ոսկի վերցնում:

Դարձավ-եկավ իր յոթ նախորդների մոտ:
Էկավ տեսավ՝ դեռ հարիսան չեն կերել:
Ասաց.
– Ի՞նչ եք նոթներդ կիտել,
Դարդ եք անում, որ աղ չե՞մ բերել,
Ելե՛ք, կերե՛ք հարիսան, գնացե՛ք,
Իրիկունն էլ աղը ձեր տանը կերեք:
Ասին.
– Դավի՛թ, բա ի՞նչ անենք,
Էդ կովերի տերերին ի՞նչ պատասխան տանք:
Ասաց.
– Տարել եմ, կովերի կաշին տվել եմ տերերին,
Ոսկի ու արծաթ եմ տվել,
Էս յոթ դևի ականջներն էլ առեք,
Ձեր գյուղին ասեք, թող ջորիներ* վերցնեն,
Գնան քարայրից ապրանք տանեն:

Ինքը՝ Դավիթը, ելավ,
Նախիրը գցեց առաջը,
Բերեց-հասցրեց քաղաք, ասաց.
– Առե՛ք ձեր տավարը, ձեր նախիրը,
Ձեր նախիրը էլ չեմ պահի:
Թողեց-գնաց Սասուն, իր տուն:



Եկավ-հասավ քեռի Թորոսին, ասաց.
– Քեռի՛, մեր տանը քանի՞ տղամարդ կա:
– Քեզ հետ միասին՝ քառասուն:
– Քելե՛,– ասաց Դավիթ,–
Վերցրո՛ւ քառասուն ձի, ջորի, ավանակ,
Գնանք-բերենք ոսկին,
Մինչև ե՞րբ ես նախրորդ մնամ:
Վախկոտ Վերգո, Քեռի Թորոս, Ձենով Օհան,
Բոլորով ընկան Դավթի հետևից, գնացին:
Հասան քարայրին,
Տեսան՝ դևերն ուռել են,
Ամեն մեկը՝ մի սարի չափ,
Վերգոն վախեցավ, փախավ,
Մյուսներն էլ ուզեցան փախչել,
Դավիթն ասաց.
– Հե՛յ, հե՛յ, տնավերնե՛ր,
Ո՞ւր եք փախչում, սպանե՛լ եմ:
Ինչ կար-չկար լցրին պարկերը՝
Ոսկի, արծաթ, հարստություն,
Բերեցին Սասուն:
Դավիթն իր համար միայն մի ձի վերցրեց:

1. Դավիթն ի՞նչ արեց դևերի կողոպտած հարստությունը:
2. Բնագրից առանձնացրու այն տողերը, որոնք քեզ.
– զարմացրին,
– ծիծաղեցրին,
– հիացրին,
– հետաքրքրեցին,
– ոգևորեցին:
3. Սասնա տան քառասուն տղամարդկանցից ո՞ւմ գիտես. պատմի՛ր նրանց մասին:
4. Բնագրի ընդգծված տողերը Դավթի ո՞ր հատկանիշներն են բնութագրում:

1 Բնագրից դո՛ւրս գրիր բարբառային ձևերը և դարձրո՛ւ գրական:

2 – Ելե՛ք, կերե՛ք հարիսան, գնացե՛ք,
Իրիկունն էլ աղը ձեր տանը կերեք:
Այս տողերով բնութագրվում է Դավթի.
– միամտությունը,
– անտարբերությունը,
– բարկությունը և ծաղրը վախկոտության և անգործության նկատմամբ:
Ընտրի՛ր ճիշտ պատասխանը:

3 Դավիթն իր համար միայն մի ձի վերցրեց:
Այս տողերով բնութագրվում է Դավթի.
– ագահությունը,
– սակավապետությունը՝ քչով բավարարվելը,
– ըմբոստությունը:
Ընտրի՛ր ճիշտ պատասխանը:

Շուտասելուկ
Քեռու ջորու ձախ ճուռը* ծուռ է:

ԴԱՐՁՎԱԾ
Ճամփան տալ առաջը – ճամփա ընկնել, ճանապարհվել:

4 **Փոխակերպում**
Մեկ քայլով ավազակի մեջ մի բան փոխեցին, և նա դարձավ էշ: Ինչպե՞ս:

5 ա) Դարձվածներից դո՛ւրս գրիր հականիշ բառերը.
Ծանր ու թեթև անել, կյանքի-մահվան հարց է, փոքր ու մեծ չճանաչել, գնալ-գալ ունենալ, աչքերը փակել, բերանը բանալ, գրի սևն ու սպիտակը ջոկել, գույն տալ, գույն առնել, դրսից հայելի, ներսից ածելի:
բ) Բացատրի՛ր դարձվածների իմաստը:

6 Օտար բառերը փոխարինիր հայերեն համարժեք բառերով.

կոմպյուտեր	ուղղաթիռ
մագնիտոֆոն	համացանց
տելեվիզոր	համակարգիչ
ինտերնետ	հեռուստացույց
վերտոլյոտ	ինքնաթիռ
սամոլյոտ	ձայնագրիչ

7 Չորսունկանի, չորսոտնանի, չորսգլխանի բառերում գտի՛ր ընդհանուր արմատը, մեծացրո՛ւ տասն անգամ և բնագրից գտի՛ր ստացված բառով բառակապակցությունները:

8

մարդասիրություն
արդարամտություն
հայրենասիրություն
խիզախություն
համարձակություն
հոգատարություն
ազնվություն
սակավապետություն

Սասունցի Դավթի այս հատկանիշներն են հերոսացրել և սխրանքների մղել բոլոր ժամանակների մեր հերոսներին:

Հիշի՛ր մի քանի հերոսի:

ՈՒՋՈ՞Ւ ԵՍ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԼ

Սասունցի Դավթի պապը Սանասարն էր, որն իր Բաղդասար եղբոր հետ հսկա ժայռակտորներով կառուցեց Սասնա Բերդը:

Սանասարի տղան՝ Միհրը, Դավթի հայրն էր: Նա մեն-մենակ, մերկ ձեռքերով հաղթեց առյուծին և այդ պատճառով նրան կոչեցին Առյուծ Միհր:

Արդեն չորս տարի դու Դավթի հետ ես,
Ինչպիսին է նա՝ արդեն լավ գիտես,
Նրան սիրեցիր, նա էլ սիրեց քեզ.
Դու արդեն, կարծես, մի քիչ Դավիթ ես:

ԱՄՓՈՓԻ՛Ր ԻՄԱՑԱԾԴ, ՍՏՈՒԳԻ՛Ր ԻՆՔԴ ՔԵԶ

1. Ինչո՞ւ է թեմատիկ շարքը կոչվում «Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները»:

2. Գրի՛ր՝ ի՞նչ հրաշալիքների հանդիպեցիր:

3. Հրաշալիքներից ընտրի՛ր յոթը և նշի՛ր արևի շողերի վրա:

4. Խմբային աշխատանքի միջոցով ընտրե՛ք որևէ հրաշալիք, որին չհանդիպեցիք ճանապարհորդության ընթացքում, պատրաստե՛ք հաղորդում և ներկայացրե՛ք շնորհանդեսի ձևով:

5. Գտի՛ր ընդհանուր սկիզբը և վերջը:





Ստացված բառերից որի՞ն ո՞ր բնագրում ես հանդիպել:

ՈՒՋՈ՞ՒՄ ԵՍ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԼ

Խաչքար կերտելը բնորոշ է միայն հայ ժողովրդին: Նա դարերի ընթացքում խաչքարեր է կանգնեցրել ճանապարհների խաչմերուկներում, բարձունքների վրա, աղբյուրների ու կամուրջների մոտ, վանքերի, եկեղեցիների ու մատուռների* շրջապատում՝ ի նշանավորում այս կամ այն կարևոր իրադարձության:

Մեծ վարպետությամբ կերտված խաչքարերի գլխավոր մասը զարմանահրաշ նախշերով քանդակազարդված խաչն է:

Խաչի ներքևի մասը խորհրդանշում է Երկիրն ու մարդուն, իսկ վերևի մասը՝ Երկինքն ու Արարչին:

ԽՈՍՈՒՄ ԵՆ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐԸ



1. Պատմիր՝ ինչի մասին են զրուցում fo նշանավոր նախապապերը:

2. Ո՞ր հրաշալիքն է ասում.

• Հին ափերս եմ որոնում:

• Տաք ձմեռ է, որոշեցի մնալ Հայաստանում:

• Տեսամ, որ երբ միասին եք լինում, հաղթում եք:

• Պատկերս հայրենիքում է, ես՝ օտարության մեջ:

• Մթան մեջ լույսը պահեցի:

• Հայոց անմահ զինվորներն ենք ձեր հոգու:

3. Քո կարծիքով՝ ինչ կասեին մյուս հրաշալիքները: Հիմնավորիր պատասխանդ:

Ա՛Յ ՔԵԶ ԲԱՆ. ԻՆՉ ԿԱ-ՉԿԱ, ԻՆՉ ԵՐԵՎՈՒՄ-ՉԻ ԵՐԵՎՈՒՄ՝ ՀԱ՛Յ-ՐԵ՛-ՆԻ՛Ք Է



Նկարը՝ Մարտիրոս Սարյանի

Դու նման ես քո ծնողներին, իսկ նրանք՝ իրենց ծնողներին: Իսկ ո՞ւմ է նման եղել Հայկ Նահապետը:

Կյանքը մանուկ է մի հրաշալի...

ՌԱԶՄԻԿ ԴԱՎՈՅԱՆ

ԹՈՐԳՈՄ ՆԱՀԱՊԵՏԻ ԵՎ ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԻ ԶՐՈՒՅՑԸ

Ավանդությունն ասում է, որ մի օր Թորգոմ Նահապետն իր մոտ է կանչում որդուն՝ Հայկ Նահապետին, և շատ մտահոգ ասում.

– Դու իմ որդին ես, Հա՛յկ: Ես ու դու ապրում ենք միասին: Ես քեզ եմ ճանաչում, դու էլ՝ ինձ, բայց ես շատ մտահոգ եմ: Երբ ես մահանամ, ու քո զավակները չտեսնեն ինձ, նրանք ինչպե՞ս պիտի իմանան, թե ինչպիսին եմ եղել ես, ինչ տեսք եմ ունեցել. հայա՛ցքս, մարմի՛նս, բազուկնե՛րս, թիկո՛ւնքս...

– Ճիշտ որ, ինչպե՞ս կիմանան,– մտահոգվեց Հայկը նույնպես, բայց հորը մխիթարելու համար ասաց.– մի՛ տխրիր, հա՛յր, ես նրանց կպատմեմ քո մասին, կնկարագրեմ, թե ինչ ահռելի ուժ ունեիր և ինչ իմաստուն խելք:

– Է, Հա՛յկ,– այնքան էլ չմխիթարվեց հայրը,– բա խոսքով ասվածը տեսնելուն հավասա՞ր է:

– Ճիշտ է,– համաձայնեց Հայկը, մտածելով, որ նույն ճակատագիրն էլ իրեն է սպասում,– իմ հեռավոր զարմերն* էլ ինձ չեն ճանաչի, չեն իմանա, թե ինչ տեսք է ունեցել իրենց նախապապ Հայկը:

– Ի՞նչ լավ կլիներ,– հառաչեց Թորգոմը,– եթե մարդիկ մեր պատկերները պահելու մի հնար գտնեին:

Անցան տարիներ, անցան դարեր, անցան հազարամյակներ...

Հայկը վազում էր տանն ու ճչում.
– Ես չե՛մ ճանաչում, չե՛մ ճանաչում,
Հայկ Նահապետին չե՛մ տեսել ես
Եվ ոչ էլ Թորգոմ Նահապետին:
Հայրիկն ասաց.
– Շրջվի՛ր ու տե՛ս.
Մի հայելի կա՝ կախված պատից...
Նայիր ուշադիր և կգտնես
Այն պատասխանը, որ հուզեց քեզ:

Հայելուց քեզ է նայում, տղա՛ս,
Հայկ Նահապետի
Պատկերը պարզ,
Նա էլ նման է եղել հորն իր,
Այսինքն՝ Թորգոմ Նահապետին:

1. Ի՞նչն էր մտահոգում Թորգոմ Նահապետին, և ո՞ւմ հետ զրուցեց նա այդ մասին:
2. Ինչպե՞ս փորձեց մխիթարել Հայկը Թորգոմ Նահապետին:
3. Արձակ խոսքով ներկայացրո՛ւ հայրիկի ասածը և մեկնաբանի՛ր:

1

ա) Բառախմբից առանձնացրո՛ւ հոմանիշները.
խոհեմ, ահեղ, ուժգին, վշտանալ, բանիմաց, մտասույզ, գիտուն, ողջամիտ, մտախոհ:
բ) Բնագրի մեջ գտի՛ր միակ չառանձնացված բառի հոմանիշը:

2

Տրված բառերն արտահայտի՛ր բառակապակցությամբ.
բարձրահասակ, սևաչյա, շիկահեր, թիկնեղ, գեղեցկադեմ, սրամիտ, փոքրամարմին:
Օրինակ՝ բարեսիրտ – բարի սիրտ ունեցող:

3

Հայկը հուր է, հրեղեն,
Հայկը հող է, հողեղեն,
Հայկը՝ հերոս հաղթական,
Հայկը՝ հրաշք հայկական:

Հիշի՛ր «Հայկը և Բելը»:

ա) Երկու խմբով առանձնացրո՛ւ և գրի՛ր գոյականներն ու ածականները:
բ) Գտի՛ր և գրի՛ր ածանցավոր բառերը, որոշի՛ր արմատն ու ածանցը:

4

Նայի՛ր հայելու մեջ և նկարագրի՛ր քեզ: Ընդգծի՛ր ածականները:

5

Փոխակերպում

Ծոռ – □առ – տ□ռ – տա□ – պապ:

Առած

Ծառն արմատով է ծառ:

Մենք մեր նախնիների արժանի հետնորդներն ենք:

Դու հպարտ ես, որ հայ ես, և գիտես, որ մենք՝ հայերս, գալիս ենք դարերից: Դու շատ բանաստեղծություններ գիտես հայ ժողովրդի մասին: Ընթերցենք ևս մեկը:

Հիշի՛ր՝ այնտեղ է լոկ* սխրանքն* սկսվում,
Ուր վերջանում է ամեն մի հնար...

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ՔԻՉ ԵՆՔ, ԲԱՅՑ ՀԱՅ ԵՆՔ

Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում:
Մենք մեզ ո՛չ մեկից չենք գերադասում:
Պարզապես մենք էլ պիտի ընդունենք,
Որ մենք, միայն մենք Արարատ ունենք,
Եվ որ այստեղ է՝ բարձրիկ Սևանում,
Երկինքը իր ճիշտ պատճենը հանում:
Պարզապես Դավիթն այստեղ է կռվել,
Պարզապես Նարեկն այստեղ է գրվել,
Պարզապես գիտենք ժայռից վանք կերտել,
Քարից շինել ձուկ և թռչուն՝ կավից,
Ուսուցման համար և աշակերտե՛լ
Գեղեցկին,
Բարո՛ւն,
Վսեմին,
Լավին...
Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում:
Մենք մեզ ոչ մեկից չենք գերադասում:
Պարզապես մեր բախտն ուրիշ է եղել,
Պարզապես շատ ենք մենք արյուն հեղել,
Պարզապես մենք մեր դարավոր կյանքում,
Երբ եղել ենք շատ
Ու եղել կանգուն,
Դարձյա՛լ չենք ճնշել մեկ ուրիշ ազգի,
Ո՛չ ոք չի տուժել զարկից մեր բազկի:
Եթե գերել ենք՝
Լոկ մեր գրքերով,
Եթե տիրել ենք՝
Լոկ մեր ձիրքերով*...
Մենք մեզ ոչ մեկից չենք գերադասում,
Բայց մեզ էլ գիտենք –
Մեզ հա՛յ են ասում:
Եվ ինչո՞ւ պիտի չհպարտանանք...
Կանք: Պիտի լինենք:
Ու դեռ շատանանք:

1. Ըստ բանաստեղծության՝ ո՞ր հատկանիշներն են բնորոշ հայ ժողովրդին:

2. Ի՞նչ հրաշալիքների հանդիպեցիր բանաստեղծության մեջ: Ընթերցի՛ր այդ տողերը:

3. Մենք փոքրաթիվ ենք, սակայն մեծ՝ ինչո՞վ...

1

Բանաստեղծության ընդգծված տողերը հայ ժողովրդի ո՞ր հատկանիշներն են բնութագրում:

Գույների հաջորդականությունը քեզ ի՞նչ է հիշեցնում:

2

Բնագրի **Արարատ, Սևան, բարձր, դարավոր, կանգուն, վսեմ, գեղեցիկ, վանք, ժայռ** բառերով կազմի՛ր նկարագրական բնույթի տեքստ և ներկայացրո՛ւ ընկերներիդ:

3

Բարձրիկ, գեղեցիկ, բարի, վսեմ, լավ ածականներից կազմի՛ր բայեր:

Օրինակ՝ վսեմ – վսեմանալ:

4

Փոխակերպում	Քչից՝ շատ

Քիչ – քի□ – կ□թ – կա□ – կար – պա□ – պա□ – շատ:

Կազմի՛ր մի նախադասություն՝ օգտագործելով քիչ, շատ բառերը:

Հիշի՛ր

Հայ – հատ – շատ:

ԿԱՐՄԻՐ ԿՈՎԸ ԿԱՇԻՆ ՉԻ ՓՈԽԻ, ԲԱՌԸ՝ ԿՓՈԽԻ

5

Բացատրի՛ր ընդգծված բառերի իմաստները յուրաքանչյուր նախադասության մեջ:

Գայլը ոռնում էր՝ դունչը մեկնած լուսնին:
Քամին ոռնում էր ծյունոտ դաշտերում:
Խոր ձորում վշշում էր գետը:
Շատ կարդաս՝ խոր գիտելիքներ կունենաս:

6

ա) Քաղցր, ոսկի, պայծառ բառերը տեղադրիր նախադասությունների մեջ:

1. Երգչուհին ուներ .... ձայն:
2. Ծիրանը .... պտուղ է:
3. Արարատյան դաշտում .... աշուն էր:
4. .... արևը փայլում է երկնքում:
5. Վիկտոր Համբարձումյանը .... միտք ուներ:
6. Գծուծ մարդը .... շատ է սիրում:

բ) Ինչ բառերի փոխարեն կարող են օգտագործվել պայծառ, ոսկի բառերը:

«Ծիրանը քաղցր պտուղ է» նախադասության մեջ քաղցր բառն օգտագործվում է իր սովորական, ուղիղ իմաստով: Քաղցր բառը նախադասությունից դուրս դարձյալ նույն իմաստն է արտահայտում:

U

«Երգչուհին ուներ քաղցր ձայն» նախադասության մեջ քաղցր բառն օգտագործվում է **դուրեկան, հաճելի, իմայիչ** բառերի փոխարեն՝ **փոխաբերական իմաստով:**

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

7

ՀԱՅԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԱՍԻՆ ԱՍԵԼ ԵՆ

Հայերը մինչև օրս աջակցել և կրթել են իրենց շրջապատող հարևաններին:

Գերհարդ Քլինգե, գերմանացի պատմաբան

Հայոց այբուբենը մի գլուխգործոց է:

Անտուան Մեյե, ֆրանսիացի լեզվաբան

Հայ ժողովրդի թանկագին հրաշալիքը հայոց լեզուն է:

Վիկտոր Համբարձումյան, հայ աստղագետ

Պատմահայր Մովսես Խորենացին հայ ժողովրդի մասին 5-րդ դարում գրել է.

«Թեպետ մենք փոքր ածու* ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորության տակ ընկճված, բայց և այնպես մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան գործված՝ գրելու և հիշատակելու արժանի»...

Մարդիկ երջանիկ են իրենց ընտանիքում: Երբևէ մտածե՞լ ես, թե ինչու...

Ձեզ համար նաև,
Իմ ժի՛ր մանուկներ,
Հույս, Հավատ ու Սեր:

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ

ՕՁԱԽԻ ՀԻՄՔԸ

Հայաստանի հին գյուղերից մեկում տանտիկինն առավոտյան դուրս է գալիս տան չորս կողմը մաքրելու և տեսնում է, որ երեք ծերունի են կանգնած՝ երկար մորուքներով ու բարի դեմքերով:

– Համեցե՛ք տուն, հյուր կլինեք,– դիմում է նա ծերունիներին:

– Բարի՛ տիրուհի, ամուսինդ տա՞նն է,– հարցնում են ծերունիները:

– Չէ՛, բայց դուք եկե՛ք, կհանգստանաք, կճաշեք, մինչև ամուսինս գա:

– Չէ՛, աղջի՛կ ջան, մենք կսպասենք, մինչև ամուսինդ գա:

Կինը ներս է մտնում, հարսի հետ տան գործերով զբաղվում ու մոռանում ծերունիների մասին:

Երեկոյան ամուսինը հոգնած վերադառնում է դաշտից: Երբ սեղան են գցում ճաշելու համար, կինը հիշում է, որ ծերունիները դեռ դրսում են:

– Ա՛յ մարդ,– ասում է,– առավոտվանից տան մոտ երեք ծերունիներ են կանգնած: Հրավիրեցի տուն, չեկան:

– Ա՛յ կնիկ, հյուրն Աստծունն է, հրավիրի՛ր, թող տո՛ւն գան:

Կինը դուրս է գալիս ու հրավիրում ծերունիներին՝ ասելով, որ ամուսինն արդեն տանն է: Սակայն ծերունիները կրկին չեն գալիս՝ ասելով, որ իրենցից մեկը կարող է ներս գալ, որ իրենք սրբեր են. մեկը սերն է, մյուսը՝ հաջողությունը, երրորդը՝ հարստությունը:

- Ի՞նչ ես կարծում՝ տանտերերն ո՞ւմ ներս կհրավիրեն: Իսկ դո՞ւ...

Կինը վերադառնում է տուն ու ասում.

– Ա՛յ մարդ, ծերունիները սուրբ են, ու նրանցից ամեն մեկը մի բան է խորհրդանշում՝ հաջողություն, հարստություն, սեր: Նրանցից միայն մեկը կարող է գալ մեր տուն, եթե կանչենք:

Ամուսինը, որ ամբողջ կյանքում աշխատել էր ու որևէ բանի չէր հասել, ասում է.

– Ա՛յ կնիկ, բախտը հազիվ իր ոտով մեր դուռն է եկել: Արի՛ հարստությունը կանչենք ու մի քիչ մարդավայել ապրենք:

Կինը թե՝

– Ավելի լավ չի՞ լինի հաջողությունը կանչենք. օտարության մեջ որդի ունենք:

– Թո՛ղ քո ասածը լինի,– համաձայնում է ամուսինը:

Իսկ հարսը խնդրում է.

– Հայրի՛կ, մայրի՛կ, ի՞նչ կլինի՝ սե՛րը կանչեք, թող սե՛րը գա:

Մարդ ու կին իրար են նայում, հարսին են նայում, ու կինը, դուրս գալով, դիմում է ծերունիներին.

– Մենք սերն ընտրեցինք, թող սե՛րը գա մեր տուն:

Ծերունիներից մեկն առաջ է գալիս, մյուս երկուսը՝ նույնպես:

– Ես սերը կանչեցի,– ասում է կինը:

– Սիրելինե՛ր,– ասաց ծերունիներից մեկը,– մի տեղ, որ սեր եղավ, այնտեղ հաջողությունն ու հարստությունն անպակաս կլինեն:

1. Ո՞ւմ տեսավ տանտիկինը տան մոտ: Ովքե՞ր էին նրանք:

2. Ընտանիքի յուրաքանչյուր անդամ ի՞նչ էր ուզում և ինչո՞ւ: Կարդա՛ բնագրի համապատասխան տողերը:

3. Ընտանիքն ընտրեց սերը. ինչո՞ւ մտան բոլորը: Այս հարցի պատասխանը վերընթերցի՛ր բնագրից և մեկնաբանի՛ր:

4. Ինչո՞ւ հենց սկզբից ծերունիները չընդունեցին հրավերը:

5. Զրույցն ինչո՞ւ է վերնագրված «Օջախի հիմքը»:

ԿԱՐՄԻՐ ԿՈՎԸ ԿԱՇԻՆ ՉԻ ՓՈԽԻ, ԲԱՌԸ՝ ԿՓՈԽԻ

1

Փակագծերում տրվածներից ընտրիր այն բառը, որը նախադասության մեջ կունենա փոխաբերական իմաստ:

Ձորակով հոսում էր (լեռնային, զայրացած, վճիտ) գետակը:

Քաղաքի վրա հանդարտ իջավ (ցուրտ, ձմռան, վախվորած) երեկոն:

Փարթամ կանաչի մեջ (աճել էր, ժպտում էր, երևում էր) մի գեղեցիկ կակաչ:

(Ջինջ, կապուտակ, զվարթ) երկինքը լավ եղանակ էր խոստանում:

2 Ինչե՞րն են հաշվում, ջարդում, ցույց տալիս, սրում: Պատասխան բառն օգտագործի՛ր ուղիղ և փոխաբերական իմաստներով:

3 ՉՎԱՐԹ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մի մարդ ապրում էր ծնողների հետ և ուներ երկու զավակ: Նա ամեն օր հինգ լավաշ էր գնում: Մի անգամ հացավաճառը հարցրեց, թե ինչ է անում հինգ լավաշը:

– Մեկը ես եմ ուտում, երկուսը պարտքս եմ տալիս, երկուսը պարտքով եմ տալիս:

Հացավաճառը խնդրեց բացատրել: Դու կարո՞ղ ես բացատրել հացավաճառին:

4 ԴԱՐՁՎԱԾ

ԱԿԱՆՋՆԵՐԸ ՍՐԵԼ – մեծ ուշադրությամբ լսել, ուշադրությունը լարել լավ լսելու համար, ականջները չորս անել:

Հորինի՛ր մի պատմություն նկարների շուրջ՝ օգտագործելով «ականջները սրել» կամ «ականջները չորս անել» դարձվածները:

☺ Խնդրակ

– Երեկ ինչո՞ւ դպրոց չէիր եկել:
– Ատամս ցավում էր:
– Հիմա չի՞ ցավում:
– Չգիտեմ. հիմա ատամնաբույժի մոտ է:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

Մյուս
խորհրդանշել
Մարդավայել

Այսպիսով, պատմվածքը սովորեցնում է, որ ընտանիքի հիմքը....
Քո դասարանն էլ մի մեծ ընտանիք է, ուրեմն....

Հիշիր

Երբ նեղն եմ ընկնում, երբ հույսս է հանգչում,
Նախ մորս, ապա Աստված եմ կանչում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Երիտասա՛րդ հայություն,
Դո՛ւ ես հույսը մեր միակ:

ՄԱՅՐՍ

Մեր հույսի դուռն է մայրս,
Մեր տան մատուռն է մայրս,
Մեր օրորոցն է մայրս,
Մեր տան ամրոցն է մայրս,
Մեր հերն ու մերն է մայրս,
Մեր ճորտն ու տերն է մայրս,
Մեր տան անտունն է մայրս,
Մեր արծվաբույնն է մայրս,
Մեր տան ծառան է մայրս,
Մեր տան արքան է մայրս,
Մեր տան անճարն է մայրս,
Մեր դեղ ու ճարն է մայրս,
Մեր տան աղբյուրն է մայրս,
Մեր ծարավ քույրն է մայրս,
Մեր տան անքունն է մայրս,
Մեր անուշ քունն է մայրս,
Մեր տան ճրագն է մայրս,
Մեր արեգակն է մայրս:
Մայրս, մեր հացն է մայրս,
Մեր տան Աստվածն է մայրս...

1. Ո՞վ էր մայրը բանաստեղծի համար: Բանաստեղծն ո՞ւմ և ինչի՞ հետ է համեմատում մորը:

2. Հովհաննես Շիրազն իր սերն արտահայտել է բանաստեղծությամբ: Իսկ դո՞ւ ինչպես ես արտահայտում:

3. Ո՞ր տողերը կընտրես քո մայրիկին բնութագրելու համար:

4. Բանաստեղծության ո՞ր տողը կընտրես որպես վերնագիր և ինչո՞ւ:

1 Բանաստեղծության օրինակով հորինի՛ր մի քառատող հայրիկի մասին:

2 ա) Տրված բառերից ստացի՛ր բայեր.

օրոր – ....

ծարավ – ....

բ) Տրված բառերն օգտագործի՛ր նախադասությունների մեջ ուղիղ և փոխաբերական իմաստներով:

3 Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր փոխաբերական իմաստով գործածված բառերը:

4 Բառերը և դրանց բացատրությունները համապատասխանեցրո՛ւ իրար և գրի՛ր.

մատուռ – վիշտն ամոքելու* միջոց,

ամրոց – փոքրիկ եկեղեցի, աղոթատեղի,

ճորտ – լամպ, կանթեղ,

դեղ ու ճար – անազատ մարդ, ծառա,

ճրագ – բերդ, ամրություն:

5 ԳԱՂՏՆԱԳԻՐ

Ա	Ն	Մ	Ռ	Ք
Շ	Ա	Ա	Ե	ՈՒ
Գ	Գ	Յ	Զ	Մ
Ի	Ա	Ր	Ի	Է
Ա	Պ	Ե	Ր	:

Այստեղ ծածկագրված է ֆրանսիացի գրող Բալզակի միտքը մոր մասին: **Վերծանի՛ր և գրի՛ր:**

6 Դատարկ վանդակներում մտովի դի՛ր քեզ համար սիրելի մի բառ և գրի՛ր ստացված բառերը:

				Ի	Կ					
				Ե	Ն	Ի				
				Ա	Հ	Ա	Մ			
				Ա	Ս	Ի	Ր	Տ		
				ՈՒ	Թ	Յ	ՈՒ	Ն		
				Ա	Ք	Ա	Ղ	Ա	Ք	
				Հ	Ա	Յ	Ա	Ս	Տ	Ա	Ն

«Մայր Հայաստան»
Քանդակագործ՝
Արա Հարությունյան

Առած

Որդին բռան մեջ ձվածեղ էլ անի, մոր երախտիքի* տակից չի կարող դուրս գալ:

Մայրերի ափի մեջ պետք է փնտրել ազգերի ճակատագիրը:
Գարեգին Նժդեհ

Կյանքում հարազատ ու թանկ բաներ կան, որոնք չես կարող կորցնել, եթե...

Հայի քո տեսակը մեր հաղթանակների պտուղն է՝ ուսումնատենչ, ինքնավստահ և հավատավոր: Հպա՛րտ նայիր աշխարհին:

ՎՐԵԺ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ՉՆՎԱՃՎԱԾ ԱՇԽԱՐՀԱՄԱՍ

Ով-ով, բայց պապն ու թոռը միմյանց հասկանում էին: Երբ պապը նստում էր ճռճռան թախտին և թիկնում բարձին, Հակոբիկն զգում էր, որ խոսելու կարիք ունի: Գնում էր ու կատվի պես կծկվում ոտքերի մոտ: Աշխարհի բոլոր պապերն էլ գեղեցիկ հեքիաթներ գիտեն: Բայց Արշակ պապն ուրիշ էր: Նա միայն մեկ հեքիաթ գիտեր. «Լինո՛ւմ է, չի՛ լինում լեռների մեջ մոլորված մի գյուղ է լինում: Էս գյուղը միայն մի ճանապարհ է ունենում, էն էլ տանում էր լեռան գագաթ...»:

Դա մի տխուր ու անվերջանալի պատմություն էր հեռվում թողած ծննդավայրի, հարազատ մարդկանց, տան ու լեռների մասին. «Ձեռքդ գցո՛ւմ էիր, ու քիչ էր մնում աստղերը մնային ափիդ մեջ...»:

Երբ մամը* հուզմունքից ծածկում էր արտասվախառն աչքերը, Հակոբիկն ըմբոստացած* վեր էր թռչում. «Պա՛պ, ո՞վ հնարեց այդ հեքիաթը, ո՞վ»:

Արշակ պապը լռում էր:

Այսօր պապի հեքիաթն այլ ընթացք ունեցավ, որովհետև Հակոբիկն ասաց.

– Պա՛պ, ասե՞մ քանի աշխարհամաս կա:

– Ասա՛, գա՛ռ ջան:

– Եվրոպա, Ասիա, Ամերիկա, Աֆրիկա, Ավստրալիա, է՛, մեկը մոռացա, դժվար անուն էր:

– Տո՛ւն,– համարյա գոռալով ասաց պապը:

– Ի՞նչ,– զարմացավ Հակոբիկը:

– Տուն, Հակոբի՛կ, տո՛ւն: Էդ աշխարհամասի անունը ոչ մի գրքում գրված չի, բայց ամենամեծ աշխարհամասն է, ամենասիրունը, ամենա-

իսկականը: Գրքում գրում են էն աշխարհամասի անունը, որը նվաճել են, իսկ տունը չնվաճված աշխարհամաս է:

Հակոբիկը հավատում էր, որ կա այդպիսի աշխարհամաս՝ չնվաճվա՛ծ, ամենասիրո՛ւն, ամենաիսկակա՛ն...

– Նկարելուց ո՞նց ես,– հանկարծ հարցնում է պապը:

– Նկարչությունս «հինգ» է դպրոցում,– հպարտ-հպարտ ասում է Հակոբիկը:

– Տո՛ւն նկարիր:

– Դրանից հեշտ բա՞ն,– ասում է Հակոբիկն ու վազում թուղթ բերելու: Նկարն ավարտելուց հետո պապին է հանձնում այն:

– Չէ՛, էդ չէ: Ի՛մ ուզած տունը նկարիր: Էնպե՛ս նկարիր, որ հա՛մ դուրսը երևա, հա՛մ էլ ներսը:

– Ախր ո՞նց կլինի, պա՛պ:

– Գա՛ռ ջան, տուն ասածը միայն պատերը չեն: Էնպե՛ս նկարիր, որ արար աշխարհն իմանա, որ շեն տուն է: Որ իմանան՝ պատերից էն կողմ յոթ թախտ է, հինգ օրորոց: Օջախի սալը շիկացած է, Ձեյրան, Շեկո կովերը, Կարմիր եզը կուշտ են: Իմանան, որ Իսրո պապը քնած է, ճիշտ է, բայց ամբողջ օրը ձիու վրա է եղել: Նկարի՛ր, Հակոբի՛կ, քո հոգուն մեռնեմ...

Հակոբիկը նորից է սկսում:

– Չեղա՛վ, Հակոբի՛կ, քո տունը տուֆ քարով է շինված: Քանդի՛ր, նորի՛ց սկսիր: Պատերը շարի՛ր անտաշ քարով, ծեփի՛ր հարդախառն* ցեխով: Դուռը փոխի՛ր, դարձրո՛ւ մեկփեղկանի: Թախտերը սենյակից տեղափոխի՛ր պատշգամբ, իբր ամառ է: Իսրո պապը թող հեծնի ձին: Օրորոցները հանի՛ր բակ: Մերս էլ թող դրսում երկանք աղա...

Արշակ պապը գորովանքով դիտում է թոռանն ու հրճվում:

– Հակոբի՛կ,– ասում է նա,– դու Չնվաճված աշխարհամասի բնակիչ ես:

Ով-ով, բայց պապն ու թոռը միմյանց հասկանում էին:

1. Ընտրի՛ր և կարդա՛ այն տողերը, որտեղ խոսվում է.
– պապի և թոռան մտերմության մասին,
– հեռվում թողած տան նկատմամբ պապի կարոտի մասին:

2. Ինչո՞ւ չէին համընկնում պապի և թոռան պատկերացումները տան և աշխարհամասի մասին:

3. Պատմվածքն սկսվում և ավարտվում է նույն նախադասությամբ: Քեզ համոզե՞ց այդ միտքը: Հիմնավորի՛ր:

1

Հիշի՛ր «Ամենից լավ տունը»: Համեմատի՛ր խրճիթը պապի շեն տան հետ:

2 Հիշի՛ր հայրենիքի հերոսներին և գրի՛ր, թե նրանք ինչպես են անառիկ ու շեն պահել մեր հայրենիքը:

3 Կազմի՛ր նախադասություններ՝ կծկվել բառն օգտագործելով ուղիղ և փոխաբերական իմաստներով:

4 **Բառքամոցի**

Բնագրի մի բառից «քամվել» են հետևյալ գոյականները. հարս, համ, շահամաս, մարխ, աշխարհ: Գտի՛ր այդ բառը և շարունակի՛ր նոր բառեր «քամել»:

5 Գտի՛ր աշխարհամաս, արտասվախառն, հարդախառն, ամենասիրուն բառերի բաղադրիչները և դրանցով կազմի՛ր նոր բառեր:

ԿԾԿՎԵԼ — **ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ**

Մարդն ուրախությունից ժպտում է, ծիծաղում, թռչկոտում: Իսկ ի՞նչ է անում, երբ ցուրտ է, ցավում է ինչ-որ տեղը, տհաճ անակնկալի է հանդիպում, վախենում է, վատ տրամադրություն է ունենում, ընկճված է լինում: Ճի՛շտ է՝ կծկվում է: Իսկ կծկվել՝ բառացի նշանակում է կծիկ դառնալ: Իսկ կծիկը հավասար փաթաթած և գունդ կազմած թելն է կամ գնդի նման փաթաթած որևէ բան: Գունդուկծիկ դառնալ՝ ինքն իր վրա փաթաթվելով, կուչ գալով՝ կծիկ, գունդ կազմել:

6 ԶՎԱՐԹ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հին կամրջով Աշտարակի
Անցնում էին անշտապ
Երկու հայր, երկու որդի
Եվ մի պապ՝
Բռնած թոռան ձեռքից:

Ասա՛, քանի՞ հոգով
Անցան կամրջով:
Ով որ շուտ գտնի,
Կստանա երեք
Հեքիաթի խնձոր:

7 Հիշի՛ր **«Թորգոմ Նահապետի և Հայկ Նահապետի զրույցը»:** Ըստ այդ զրույցի՝ նախապապերի արտաքինն արտացոլվեց հայելու մեջ:

Իսկ նրանց «ահռելի ուժի» և «իմաստուն խելքի» մասին մենք տեղեկացել ենք ժողովրդական բանահյուսությունից.

դյուցազներգություն, հեքիաթ, առած, ավանդություն, զրույց, առակ,...

Ընտրիր բանահյուսության թվարկված նմուշներից մեկը և պատրաստիր հաղորդում նախնիներից մեկի մասին:

8 Այս շարքի քեզ ծանոթ ստեղծագործությունների հեղինակները հյուր են եկել: Նրանք պատասխանել են գրքի տված հարցերին:

Կռահի՛ր, թե որ պատասխանը որ հեղինակինն է.

– Պտուղը ծառից հեռու չի ընկնի:
– Մայրն աշխարհում միակ Աստվածն է, որն ուրացող չունի:
– Քիչ ենք, բայց համ ենք տալիս ճաշին:
– Ինչ չես կարող անել սրով, կանես սիրով:
– Խոսք կա՝ սարի գլուխ կհանի, խոսք կա՝ սարից ներքև կբերի:

Քո չնվաճված աշխարհամասն էլ Հայաստանն է: Ի՞նչն է նրան անառիկ պահում:

Աստվածաշնչյան խրատ

Իմաստության սկիզբը խրատը սովորելու ճշմարիտ ցանկությունն է:

Խորհի՛ր այս մասին:

ԳՐԻԳՈՐ ԳԵՎՈՒՆՑ

ՀԱՅՐՍ

Հաճախ էր հայրս ինձ բարեմաղթում.
– Գլուխդ սա՛ռը պահիր,
Սիրտդ, սակայն, տա՛ք,
Ձեռքդ բա՛ց պահիր,
Ճակատդ՝ հպա՛րտ,
Աչքդ չո՛ր պահիր,
Հայացքդ՝ հանդա՛րտ,
Որ խաղաղ անցնես
Քո բաժին ճամփադ...

Հաճախ էր հայրս ինձ բարեմաղթում.
– Մեջքդ պի՛նդ պահիր՝
Այլոց չճկես*,
Փորդ կո՛ւշտ պահիր՝
Մուրող չլինես,
Վիզդ ձի՛գ պահիր՝
Բնավ չթեքես,
Քո բաժին քչով
Գոհունակ լինես...

Հաճախ էր հայրս ինձ բարեմաղթում.
– ՈՒնկդ* բա՛ց պահիր,
Որ շատ բան լսես,
Լեզուդ հե՛տ քաշիր,
Որ քիչ բան խոսես,
Դունչդ քե՛զ պահիր՝
Չգայթակղվես,
Քիթդ աշխատիր
Ամեն տեղ չխոթել...

Ինչ էլ որ լինի հետո՝ գալիքում,
Ինչ էլ պատահի այս գնդի վրա,
Թող հայն ապրի իր Հայրենիքում,
Եվ Հայրենիքը միշտ հային մնա...

– Հա՛յր, չեմ մոռացել մաղթանքները քո,
Որ պահ տվեցիր իմ սրտին հատ-հատ,
Այժմ էլ ես եմ նոր սերունդներին
Ավանդում դրանք...

1. Մ՞ր բարեմաղթանքը քեզ ամենից շատ դուր եկավ: Կարդա՛ և պատճառաբանի՛ր:

2. Բանաստեղծության հերոսն ինչպե՞ս է վերաբերվել հոր բարեմաղթանքներին: Վերընթերցի՛ր այդ տողերը:

3. Ի՞նչ բարեմաղթանքներ և խրատներ ես լսել քո մեծերից: Գրի՛ առ դրանք:

1 Օգտվելով բանաստեղծությունից՝ փոխաբերական և ուղիղ իմաստով բառակապակցությունները համապատասխանեցրո՛ւ միմյանց և գրի՛ր.

առատաձեռն լինել	ունկը բաց պահել
հպարտ լինել	լեզուն իրեն քաշել
սակավապետ լինել	սիրտը տաք պահել
շատախոս չլինել	ձեռքը բաց պահել
ջերմ ու հոգատար լինել	մեջքը պինդ պահել
ուշադիր և լսող լինել	գոհանալ քչով

2 Փոխաբերական իմաստով արտահայտված օրհնանք-բարեմաղթանքները ներկայացրո՛ւ ուղիղ իմաստով.

Յոթ որդով սեղան նստես – ....
Աղ ու հացով լինես – ....
Ճամփադ միշտ կանաչ լինի – ....

3 **Բառքամոցի**

Բարեմաղթանք բառով ընկերոջդ հետ խաղա՛ «բառքամոցի»:

Խնդրակ

– Հայրիկն օգնե՞լ է քեզ այս խնդիրը լուծելիս:
– Ո՛չ:
– Ճի՛շտն ասա:
– Ճիշտ եմ ասում, ինքը մենակ է լուծել:

Առած

Մարդը՝ մարդով, որդին՝ հորով:

Բարիքնե՛ր գործիր, ուր էլ որ լինես.
Այդ բարիքները զինվորների պես,
Որտեղ էլ լինես, կպաշտպանեն քեզ...

Աջ եմ նայում՝ հայրենիք է,
Ձախ եմ նայում՝ հայրենիք է,
Մոտ եմ նայում՝ հայրենիք է,
Հեռուներում հայրենիք է:

Հրաչյա Մաթևոսյան

ՀՐԱՉՅԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ես հավատում եմ հավերժ հին ու հավերժ նոր մեր ժողովրդի ու նոր եկող սերնդի զորավոր ճակատագրին:

Մ՛Յ ՔԵԶ ԲԱՆ. ԻՆՉ ԿԱ-ՉԿԱ, ԻՆՉ ԵՐԵՎՈՒՄ-ՉԻ ԵՐԵՎՈՒՄ՝ ՀԱ՛Յ-ՐԵ՛-ՆԻ՛Ք Է

...Երբ մանուշակները բուրում են, ու բուրմունքը մատնում է թփերի տեղը, երբ քարապուտերը* կարմի՛ր-կարմիր զարդարում են քարաթմբերը, երբ երկինքների կապույտներից բաժանված ամպերը ձոր են որոնում, դու ամբողջ մարմնով դողում ես, նայում հորդ ճակատին, նայում հորդ երեսին, աչքերդ հառում նրա քթին, որ հասկանաս մեծերի խոսքը՝ հոր քթից է ընկել:

– Մեծացել ես, տղա՛ս,– ձեռքը դրեց ուսիս, շոյեց ճլորած վիզս:

– Բա ի՞նչ անեի... Ուշանում էիր, հայրի՛կ:

– Ես եկել եմ, տղա՛ս, չեմ ուշացել: Ուշացել են նրանք, ովքեր զոհվեցին:

– Ինչո՞ւ զոհվեցին, հայրի՛կ:– Ես զգացի, որ աչքերս չռված են, իսկ լեզուս թառ եմ տվել:

– Կռվում էին,– տնքաց ու հոգոց հանեց հայրս:

– Իսկ դու չէի՞ր կռվում:

– Կռվում էի: Իսկ կռվում բոլորը չէ, որ զոհվում են: Բոլորը որ զոհվեն, ո՞ւր կհասնենք: Էլ հասնելու տեղ չենք ունենա:

– Մեր ամեն ինչի դասատուն ասում է՝ կռվում են հանուն հայրենիքի, զոհվում են հանուն հայրենիքի, զոհվում են իրենց պատվի, արժանապատվության համար: Ճիշտ է ասում, է՞, հայրի՛կ:

– Ճիշտն էլ բա՞ն է,– ծոր տվեց հայրս:– Կռվի օրերին օր չի եղել, որ մոռանամ ձեզ՝ իմ մեծին, քեզ, իմ պուճուրին, տունը, տեղը, այ, էս քարափը, տես, է՛, քարապուտերը ո՞նց են ալավ-բոցին տալիս: Բա մեր ծմակը*: Ես էն հեռուներում, էն կրակ ու պատիժ որոտների մեջ լսում էի մեր անտառի

ձայնը, թռչունների համերգը, մտքով մեր սարերի ճամփան էի ընկնում ու գնում, գնում, թե պիտի հասնեմ իմ սիրած աղբյուրի ջրերին:

Հայրս հանկարծ ինձ սեղմեց կրծքին, աչքերը փակեց, արցունքի կաթիլները քամվելով ընկան: Ես զարմացա: Երեխա՞ է: Բանակ գնացածը, կռվածը, բարով-խերով եկածը արցունք կունենա՞, լաց կլինի՞:

– Տղա՛ս, շա՞տ եք սոված մնացել:

– Չէ՛, մաման ասում էր՝ խաղո՛վ ընկեք, դասո՛վ ընկեք, գործո՛վ ընկեք, որ սովը մտահան անեք:– Բռնեցի հորս ձեռքը:– Ա՛յ հեր, ասա՛, հասկանամ, էդ մեր ամեն ինչի դասատուն որ ասում է, թե հանուն հայրենիքի, դա ո՞րն է...

– Ա՛յ ապրես... Նայի՛ր վերև: Ի՞նչ է: Երկինք: Մեր տան, մեր գյուղի, մեր սարի, մեր ծմակի երկինքն է, մեր ամեն օրվա, մեր գիշեր-ցերեկվա երկինքը. արև անի՝ մերն է, կարկուտ անի՝ մերն է: Էս ծաղկած հողը, որին հեր ու տղա նստել ու իրար կարոտ ենք առնում, էս հողը, որ մեզ հաց է տալիս...

– Ես լծին նստել եմ, հոտաղություն* եմ արել, «Ալվան ջան», «Ծիրան ջան» եմ ասել, խաշիլ եմ կերել...

– Գիտեմ,– ասաց հայրս,– նաև հենց դա՝ ակոսում նստել, քո, եզան, մաճկալի*, խոփի բացած ակոսում նստել ու խաշիլ ուտելը, էս, էս, էս անուշ օրը, էս կորուստները հիշելը, էգուց ի՞նչ է լինելու... Ամեն, ամեն ինչ, ինչ տեսնում ու չես տեսնում, հայրենիք է, ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հա՛յ-րե՛-նի՛ք է:

– Ես ջաղացի տեղն էլ գիտեմ: Աղուն* եմ տարել, աղացել ենք:

– Ջաղացն էլ է հայրենիք:

– Հայրի՛կ, ինչո՞ւ ես հեռուները հասել, էստե՛ղ կռվեիր:

– Էստեղ կռիվ չկար: Աստված չաներ: Կռիվն ահավոր բան է: Ոտի տակ կկորչենք: Բեզարած* եմ: Կռվից չխոսենք:

Հորս ձեռքը թուլացած ընկավ ծնկիս: Քիչ հետո զգացի, որ նա քնած է: Տեսնես մեկ էլ ե՞րբ է էսպես քնել: Երեխա ժամանա՞կ: Պատերազմ գնալուց առա՞ջ: Ես նայեցի կապո՛ւյտ-կապույտ երկնքին, մեր ծմակին, սարի ճամփին, քարափի կարմի՛ր-կարմիր պուտերին, հորս շունչն առա, նայեցի նրան, զգացի, որ ամեն ինչ՝ հայրս էլ հետը, հայրենիք է:

1. Որտեղի՞ց էր վերադարձել տղայի հայրը, ինչո՞ւ էր ուշացել:

2. Ինչպե՞ս էին բացատրում «հանուն հայրենիքի» արտահայտությունը.

– ամեն ինչի դասատուն,

– հայրիկը:

Կարդա՛ բնագրի համապատասխան հատվածները:

3. Հիշի՛ր՝ ովքեր են մարտնչել հանուն հայրենիքի:

4. Հոր և որդու զրույցում ի՞նչ զգացմունքներ են արտահայտված:

5. Դու համաձա՞յն ես, որ՝

ա. պատերազմը միայն հեռու մարտադաշտում էր,

բ. «Էստեղ»՝ գյուղում, կռիվ չկար,

գ. պատերազմին մասնակցում էին տղան, ամեն ինչի դասատուն, մայրիկը, ջրաղացը... Հիմնավորի՛ր:

1 Բնագրի դարձվածները և արտահայտությունները համապատասխանեցրու իրար.

լեզուն թառ անել	շատ նման լինել հորը
հոր քթից ընկնել	զարմանալ, հուզվել
ալավ-բոցին տալ	լուռ մնալ, համրանալ
հոր շունչն առնել	խայտաբղետ, վառվռուն դառնալ
աչքերը չռել	հոր ներկայությունն զգալ

2 Ճի՛շտ լրացրու խաչբառը և նրա ընդգծված տողերում կկարդաս «հայրենիք» բառի հոմանիշները:



Տողեր.

2. Բույն + օրրան = ...
6. Ծնունդ + վայր = ...
8. Տաք է պահում գլուխը:
9. Տոն, երեկույթ, համերգ, ներկայացում:

Սյուներ.

1. Նանիկ:
2. Բույն + աշխարհ = ...
3. Օտար մարդ:
4. 365 հատիկ ունեցող պտուղ:
5. Ցնծությամբ լի:
7. Սխրանք, հերոսություն անող:

Առած

Ով հայրենիքի համար չի անում ամեն ինչ, նա չի անում ոչինչ:

Դու քո երկրին սրտի՛ց նայիր,
Սիրո ծոցի՛ց, ձորի՛ց նայիր,
Արագածի լույս գագաթի՛ց,
Սրտիդ միջի՛ց նորից նայիր:

Եվ դու կզգաս, ով էլ լինես,
Որ մեծ է մեր Հայաստանը,
Ուր էլ լինես՝ քո սրտի մեջ
Քեզ հետ է միշտ Հայաստանը:

Հրաչյա Մաթևոսյան

Անհիշելի ժամանակներից սկսած մինչև մեր օրերը հայ բանաստեղծները գովերգել են մեր մայր լեզուն. իզուր չէ, որ ժողովուրդն ասում է. «Լեզու ունես՝ ընդմիշտ կապրես, լեզուդ կորավ՝ հետը կորար»:

Կարդանք և տեսնենք, թե հեղինակը՝ Հովհաննես Շիրազը, ինչպես է մեզ հասցրել Մաշտոցի պատգամը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ

Մի սփյուռքահայ պատանու

Մեսրոպ Մաշտոցն ասաց՝ որդի՛ս,
Էլ ինչո՞վ ես հույսը բերդիս.
Էլ հայրենիք ինչո՞ւ եկար,
Թե պիտ խոսես օտար լեզվով:
Իրավ, քանի լեզու գիտես,
Այնքան մարդ ես, իրավն ասին,
Բայց որ քո հայ լեզուն չունես,
Էլ ի՞նչ հույս ես քո Մասիսին:
Բայց նա հայ է, ով հովազի
Արնախում* երախումն էլ
Իր մայրենի լեզվով խոսի,
Խոսի լեզվով իր հայրենի,
Հայոց լեզվով, որ միշտ ջահել,
Մեզ բյուր դարեր հայ է պահել:

Տառերի պուրակում

1. **Ո՞Ւմ է ուղղված բանաստեղծի խոսքը: Ինչո՞ւ:**
2. **Ի՞նչ է պատգամում Մեսրոպ Մաշտոցը սփյուռքահայ պատանուն: Պատմի՛ր քո բառերով:**
3. **Ինչպե՞ս ես հասկանում բանաստեղծության ընդգծված տողերը:**
4. **Մենք գիտենք, թե ինչու է մեր լեզուն կոչվում հայերեն: Մտածի՛ր՝ ինչո՞ւ ենք այն կոչում նաև մայրենի:**

1 Լեզվին փակ դնել, լեզուն բռնվել, լեզուն կապ ընկնել, լեզվին տալ, լեզվի կապերն արձակել, լեզվին զոռ տալ, լեզուն կծել, գլխի ընկնել:

ա) Բացատրի՛ր դարձվածների իմաստը:
բ) Ընտրի՛ր հոմանիշ դարձվածները:
գ) Գրի՛ր մեկ բառով:

2

ա) Լրացրու առածները՝ օգտվելով տրված բառերից.

Լեզվի կծածին .... չկա:
Ցորեն հաց չունես, ցորեն լեզու .....:
Լավ է .... կաղ լինել, քան լեզվից:
Օձի կծածը ...., լեզվի կծածը չի լավանա:
Անուշ լեզուն մեղրից .... է:
.... լեզուն կարճացնում է կյանքը:
Քանի լեզու գիտես, այնքան .... ես:
Աշխարհը շինողը և .... լեզուն է:
(մարդ, քաղցր, դեղ, ոտք, լավանալ, քանդել, երկար, ունենալ)

բ) Խմբավորիր փակագծերի բառերը և տեղադրիր աղյուսակում.

գոյական	ածական	բայ
. . . . .	. . . . .	. . . . .

3

«Ինչից է սկսվում հայրենիքը» երգում ասվում է.
Գուցե նկարներից քո այբուբենի,
Ընկերներից քո՝ մոտ ու բարի,
Որ ապրում են բակում մեր կողքի,
Իսկ գուցե հայրենիքն սկսվում է
Մայրիկի երգած օրորներից...

Իսկ ինչ է հայրենիքը քեզ համար: Ինչպես է դրսևորվում քո սերը հայրենիքի նկատմամբ:

4 ՉՎԱՐԹ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մաղով ջուր կրել դարձվածը ցույց է տալիս մի անօգուտ, անիմաստ, անհնարին բան անելը:

ա) Դու երբևէ մաղով ջուր կրե՞լ ես:

բ) Իսկ կարո՞ղ ես մաղով ջուր կրել:

Դու դեռ շատ լեզուներ ես սովորելու և իրավունք կունենաս հպարտանալու դրանով: Սակայն հիշի՛ր՝ շատ լեզուների իմացությամբ հպարտանալու իրավունք չունի նա, ով չգիտի իր մայրենին:

Մեծ Մեսրոպ Մաշտոցն ստեղծեց հայոց այբուբենը, որով արարվեց մեր հոգևոր հայրենիքը: Իսկ ովքե՞ր են սովորեցնում այդ հայրենիքում արժանապատվորեն ապրելու արվեստը:

ԼԻՊԱՐԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Սիրենք մեր հողը,
Սիրենք լեզվի նման մայրենի,
Հիշենք՝ դրախտն իսկական
Տո՛ւն-օջախն է հայրենի:

ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՑԻՉ

Ես՝ մի խոնարհ աշակերտ, Դու՝ վեհ ու վսեմ,
Ի՞նչ բառերով արժանի քեզ ներբող* հյուսեմ,
Քեզ, որ դարեր մեր հոգու խավարը վանել,
Սիրո, լույսի, բարության սերմեր ես ցանել:

Որ երբ խրճիթ ես մտել զանգի ղողանջով,
Դպրոց է դարձել և լցվել արարման շնչով,
Նոր ոգի ես հաղորդել մեր արյան հոսքին,
Ու պահողն ես դարձել մայրենի խոսքի:

Դու, բռնած մեր ձեռքը ամուր, այսօր էլ, ահա,
Նոր բարձունքներ ես տանում խիզախ ու անահ,
Սովորեցնում օտարից ոչինչ չհայցել,
Եվ երազած տունը մե՛ր ձեռքով կառուցել:

Ես՝ մի խոնարհ աշակերտ, Դու՝ վեհ ու վսեմ,
Ի՞նչ բառերով սրտագին քեզ ներբող հյուսեմ,
Որ պարզ լինի, քեզ վայել՝ իբրև հուշարձան,
Քեզ՝ մեր հոգու հերկերի անմահ սերմնացան:

1. Կարդա՛ այն տողերը, որոնք բնութագրում են ուսուցչին և նրա կատարած գործը: Մեկնաբանի՛ր:

2. Սերմնացան բառի բաղադրիչներով բացատրի՛ր բառի իմաստը: Ինչո՞ւ է հեղինակն ուսուցչին համարում «հոգու հերկերի սերմնացան»:

3. Հեղինակն իր վերաբերմունքն արտահայտել է բանաստեղծական խոսքով: Իսկ դո՞ւ...

1 Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր հոմանիշ և հականիշ բառազույգեր: Կազմի՛ր նախադասություններ՝ օգտագործելով այդ բառերը:

2 Բնագրից դո՛ւրս գրիր փոխաբերական իմաստով գործածված բառակապակցությունները: Դրանք դարձվածներ են: Որոշ ի՞նչ դարձվածներ ես հիշում:

3 Տրված հոմանիշներից յուրաքանչյուրից ընտրի՛ր մեկ տառ և գտի՛ր ներքևի գծապատկերում թաքնված և այդ բառերին հոմանիշ մի բառ:

վ	ս	ե	մ

ս	ե	գ

հ	պ	ա	ր	տ

4 Հարցազրույց անցկացրու ձեր դպրոցի ուսուցիչների հետ «Դժվա՞ր է ուսուցիչ լինելը» թեմայով:

Գրառիր:
Ի՞նչ նոր բան իմացար:
Ի՞նչը քեզ զարմացրեց:
Ի՞նչը քեզ ոգևորեց:
Ես հասկացա, որ....



5 **ՉՎԱՐԹ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ուսուցիչը դասարանում ներկա-բացակա արեց: Դասին ներկա էին 8 աղջիկ, 7 տղա: Ընդամենը քանի՞ մարդ կար դասարանում:

6 Գրի՛ր, թե որ անվանումը որ առարկայինն է. **պտուտակ, հարթաշուրթ, ունելի, պտուտակիչ, շղթա, ապարանջան:**

Դու իմացար, որ քո մեջ մի կայծ վառելու համար ուսուցիչն իր մեջ լույսի մի ամբողջ ծով է կուտակում:

Դու աշնանը տեսել ես, թե ինչպես են կաղինը, խնձորը, տանձը ծառից ընկնում: Երբևէ մտածե՞լ ես, թե ինչ են լինում այդ պտուղները. թռչունն՞ն են ուտում, մրջունն՞ը, թե՞...

Կարդա՛ և կիմանաս, թե ինչ զարմանալի բան պատահեց մեր հերոսին:

ՎԱՍԻԼԻ ԲԻՐՅՈՒԿՈՎ

ԿԱՂԻՆԸ

Ճյուղից կախված կաղինն ուրախանում էր.

– Ա՛յ թե գեղեցիկն եմ ես: Շապիկս դիմացկուն է, ոչ մի անձրև ինձ չի թրջում: Գլխարկս ամուր է: Այսպես իմ հարազատ ծառի վրա կձմեռեմ:

Ուրախանում էր նա, ուրախանում, և հանկարծ մի կատաղած քամի սկսվեց:

– Վա՛յ,– բղավեց կաղինը և պոկվեց ու ընկավ գետնին:

Պառկած ստուգեց գլխարկը, շոշափեց կողերը. ամեն ինչ տեղում էր:

– Հիմա ի՞նչ պիտի անեմ,– շուրթերը սեղմելով՝ վշտացավ կաղինը:– Հարազատ ծառից տես թե ուր եմ թռել: Այնտեղ գոնե տերևների տակ էի թաքնվում, իսկ այստեղ...

Պառկել էր կաղինը և տխուր մտքերի մեջ ընկել: Իսկ քամին պոկում էր ոսկեգույն տերևները և նետում թաց գետնին:

– Սկսեց տաքանալ,– ասաց կաղինը և ծածկվեց տերևներով:

Շրջվեց, հարմար պառկեց և քնեց:

Շատ էր քնել, թե քիչ՝ արևն սկսեց տաքացնել: Առվակները քչքչացին:

Կաղինը, թաց գետնին պառկած, վատ էր զգում: Շուռումուռ եկավ և վեր կացավ:

– Մի տես, է՛, կեչին տերևակալել է,– զարմացավ նա:

Փորձեց գլորվելով մոտենալ կաղնուն, բայց ինչ-որ բան խանգարեց նրան: Նայեց ներքև ու բղավեց.

– Վա՛յ, ինձ ոտքեր են աճել:

Ուզեց գլխարկն ուղղել, տեսավ՝ այնտեղ տերևներ են աճել:

Կաղինը դարձել էր կաղնի:

1. Կաղինն իրեն ինչպե՞ս էր զգում հարազատ ծառի վրա: Հիմնավորի՛ր կարծիքդ պատմվածքի տողերով:

2. Ինչո՞ւ: Ի՞նչ պատահեց: Հետո փոխվե՞ց կաղինի տրամադրությունը:

3. Ինչպե՞ս ավարտվեց պատմվածքը: Արդյո՞ք քո մտածածը և այս ավարտը համընկնում են:

4. Ըստ քեզ՝ պատմվածքի ավարտին ինչպիսի՞ն էր կաղինի տրամադրությունը: Ի՞նչ է արտահայտում «Վա՛յ, ինձ ոտքեր են աճել» նախադասությունը. ա) ուրախություն, բ) վախ, գ) զարմանք, դ) տխրություն: Ընտրի՛ր այս տարբերակներից մեկը, հիմնավորի՛ր և նախադասությունը կարդա՛ համապատասխան հնչերանգով:

5. Ի՞նչ կապ ես տեսնում պատմվածքի վերջին նախադասության և նկարի միջև:

1 «Հանկարծ մի կատաղած քամի սկսվեց» նախադասության մեջ կատաղած բառը փոխարինիր ա՛յն բառերով, որոնք նախադասության իմաստը չեն փոխի.

ջղայնացած, բարկացած, կորացած, մոլեգնած, սարսափած, գազազած, զայրացած:

2 ա) Բնագրից ընտրի՛ր ո՞վ (ի՞նչ), ինչպիսի՞ (ո՞ր), ի՞նչ է անում (ի՞նչ է լինում) հարցերին պատասխանող հինգական բառ և գրի՛ր առանձին սյունակներով:

բ) Ի՞նչ անուն կդնես սյունակներից յուրաքանչյուրի վերևում:

3 Բնագրից ընտրի՛ր սիրուն, խոնավ, ջերմացնել, տրտում բառերի հոմանիշները:

4 Վերծանի՛ր խառնագիրը:

Հիշի՛ր մի առած ծառ-ով և ստացված բառով:



ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

5 Այս երգը երգում են հայոց բանակի զինվորները: Դու էլ երգիր:

Ես մի բուռն եմ քո հողի,
Ես մի ծիլն եմ քո արտի,
Ես մի զարկն եմ քո բազկի,
Հայրենի՛ երկիր, Հայաստան:

ՇՈՒՐԹ, ՇՈՒՐՋ

ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ

Բնագրի մեջ դու հանդիպեցիր **շրջել** և **շուրթ** բառերին: Ինչքան էլ զարմանալի թվա, այս երկու բառն էլ **շուռ** արմատից են ծագել: Սկզբում՝ **շուռ** + **թ** = **շուռթ**, իսկ հետո **թ**-ն դարձել է **ջ**, **ռ**-ն՝ **ր**, բառը՝ **շուրջ**:

ՈՒՋՈ՞ՒՄ ԵՍ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԼ

Վարդան Զորավարը, Իջևանում կանգ առած ժամանակ, մի կաղնի է տնկել Ակնաղբյուրի մոտ: Կաղնին, 1500 տարի ապրելուց հետո, 1974 թվականին կայծակնահար եղավ և տապալվեց (բարձրությունը 50 մետր էր, ուներ փչակ, որտեղ կարող էր տեղավորվել 25–30 մարդ):

1975 թվականին Ակնաղբյուրում մի նոր կաղնի տնկեց մարշալ Բաղրամյանը: Ծառն օրեցօր աճում է ու զորանում:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

թրջել

տերևակալել

6

Հիշիր

«Մաթեմատիկա–2, 3»

21 – քսան + մեկ = քսանմեկ

104 – հարյուր չորս

1951 – հազար ինը հարյուր հիսունմեկ

«Ուզո՞ւմ ես ավելին իմանալ» տեքստից դուրս գրիր թվերը, դասավորիր աճման կարգով և գրիր բառերով:

7

Երկու արմատից կազմված հայերեն ի՞նչ բառեր նկատի ուներ արտասահմանցին, երբ դրանք արտասանում էր այսպես. **տեսել համ, ընկալել հյուր, նկարել լույս, հարել թմբուկ**:

Դու էլ հիմա կաղնու մի ծիլ ես, որը հետո հայրենիքի համար դառնալու է հզոր կաղնի:

Ծնված օրվանից մեզ օրորում են երազները: Պարզվում է՝ ոչ միայն մեզ...

Կարողացիր զմայլվել ու զարմանալ և մի օր դու էլ կդառնաս զմայլելի ու զարմանալի:

ՂՈՒԿԱՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ԵՂԵԳԸ, ՈՐԸ ՇԱՏ ԷՐ ՈՒԶՈՒՄ ԴԱՌՆԱԼ ՍՐԻՆԳ

Հազարավոր եղեգների մեջ կար մի նուրբ, կարմրավուն եղեգ, որն իր բոլոր ազգակիցների նման ցանկանում էր դառնալ սրինգ: Որովհետև եղեգները սրնգից բացի դառնում են նաև զամբյուղ, խսիր, տան ծածկ և ուրիշ այլ բաներ: Դե, բնական է, որ այդքանի մեջ ամենատպավորիչը սրինգ դառնալն է:

Մեղմ քամու դեմ հեզանազ* ճոճվող եղեգնուտում ամենանրբագեղը Կարմիր եղեգնիկն էր:

Ամեն անգամ, երբ գյուղացին գալիս էր եղեգնուտ՝ եղեգ տանելու, սա ձգվում էր ոտքի վրա, բարակ տերևներով ծափ զարկում ու գեղանի ճոճվում, որպեսզի նկատվի: Բայց ջանքերը զուր էին անցնում. գյուղացին ուրիշների էր տանում:

Իսկ մեկ անգամ աշնանը Կարմիր եղեգնիկի բախտը բերեց: Նրան նկատեց մարդը, հատեց սուր դանակով, խնամքով դրեց կապոցի մեջ, շալակն առած տարավ տուն: Կապոցի եղեգները կարծես անտարբեր էին իրենց ճակատագրի հանդեպ: Տարուբերվելուց նրանք խուլ ձայներ էին հանում, ոմանք նույնիսկ դժգոհում էին այս ուղևորությունից: Իսկ Կարմիր եղեգնիկն անչափ երջանիկ էր, աշխատում էր դարձյալ գեղանի երևալ ու քամու շունչն իր միջով անցկացնելով՝ վերածել հուզիչ երգի:

Գյուղացին եղեգները հասցրեց տուն, դասդասեց, թե որից ինչ պիտի սարքի, ու անցավ գործի:

Բայց ի՜նչ դժբախտություն. Կարմիր եղեգնիկը չդրվեց նրանց մեջ, որոնք պիտի սրինգ դառնային: Նրա վշտին չափ ու սահման չկար: Լեզու չուներ, որ խնդրեր, բացատրեր, համոզեր: Իր միակ «զենքը» գեղեցիկ մարմինն էր ու հաճելի երգը: Բայց դրանք չօգնեցին. գյուղացին որից սրինգ պատրաստեց, որից զամբյուղ ու խսիր* հյուսեց, մնացածն էլ դարձրեց տանիքի ծածկ:

Ամենատարօրինակ բախտը բաժին ընկավ Կարմիր եղեգնիկին: Գյուղացին նրանից մի շերտիկ անցկացրեց զամբյուղի մեջ, մի շերտիկ հյուսեց խսիրին, իսկ մնացած մասը դրեց ծածկի մեջ:

...Հետագայում ոչ մեկը գլխի չէր ընկնում, թե այգուց միրգ բերելիս ինչու է երգում զամբյուղը, կամ ինչու է նվագում խնձորենու տակ փռված խսիրը: Իսկ ամենատարօրինակը՝ ո՞վ էր տեսել, որ տանիքը երգի գեղեցիկ ու հուզիչ երգեր...

1. Ի՞նչ էր երազում Կարմիր եղեգնիկը: Ընթերցի՛ր համապատասխան հատվածը:

2. Ի՞նչ պատահեց եղեգնիկին:

3. Ինչո՞վ էր տարօրինակ Կարմիր եղեգնիկին բաժին ընկած բախտը:

4. Բնագրից գտի՛ր այն բառերն ու արտահայտությունները, որոնց միջոցով արտահայտվում է հեղինակի համակրանքը եղեգնիկի նկատմամբ:

5. Քո կարծիքով՝ իրականացա՞վ, արդյոք, եղեգնիկի երազանքը: Հիմնավորի՛ր:

6. Ըստ քեզ՝ ինչի՞ մասին կարող էր նվագել խսիրը, ի՞նչ կարող էին երգել զամբյուղն ու տանիքը:

1 Բնագրից դուրս գրիր ածականները և լրացրու հետևյալ աղյուսակը.

պարզ	բարդ	ածանցավոր
. . . . .	. . . . .	. . . . .

ԵՂԵԳ, ՍՐԻՆԳ — ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ

Կա այսպիսի մի զրույց: Սրինգը հավերժահարս էր: Հին հունական Պան աստվածն ուզեց բռնել նրան: Սրինգը փախավ և տեսնելով, որ Պանը շուտով հասնելու է, կանգնեց ու դարձավ եղեգ: Պանը կտրեց եղեգը, սրինգ պատրաստեց և նվագեց:

Երազանքիդ հասնելուն քեզ կօգնեն հայրենի հողն ու ջուրը, արևն ու երկինքը:

Ճիշտ է, Հայաստանը ծովեր չունի, բայց գետերով հարուստ է: Գիտե՞ս, նույնիսկ Հայաստանի հին անուններից մեկը եղել է Նաիրի, որը նշանակում է գետերի երկիր: Այդ պատճառով մեր գրողներից շատերն են գրել բանաստեղծություններ գետերի մասին:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Ինձ համար ծով է մի կաթիլ ցողը...

ԳԵՏԸ

Գետը լեռներից շառաչով գալիս
Եվ անց է կենում դաշտերի միջով,
Կանչում, կարկաչում, հորձանք է տալիս,
Ափերն է զուգում զմրուխտ կանաչով:

Պաղ ջուր է տալիս մարդուն ու բույսին
Եվ կաթիլն անգամ զուր չի կորցնում,
Կյանքի է կոչում կայաններ լույսի
Եվ ինքն իր ճամփին լույս տալով գնում...

Այսպես, վաստակած նա ծով է մտնում,
Եվ ծովն է վերջին կայանը նրա,
Բայց ծովի մեջ էլ հանգիստ չի գտնում,
Նավեր է պահում իր կրծքի վրա:

Դու էլ գետի պես անցիր քո ճամփան
Եվ նմա՛ն եղիր գետի հորձանքին,
Որ կյանքիդ վերջին կայանում անգամ
Ինչ-որ մի բանով պետք լինես կյանքին:



1. Ըստ բանաստեղծության՝ նկարագրի՛ր լեռնային գետի ճանապարհը և կատարած գործերը:

2. Քո կարծիքով՝ ինչո՞վ է մարդու կյանքը նման գետի հոսանքին:

Հիշի՛ր «Գետակը»:

3. Համեմատի՛ր գետի և գետակի կատարած գործերը:

1 Գետ բառով կազմիր այնպիսի՛ բառակապակցություն, որը դառնա բանաստեղծության նոր վերնագիր:

ՀԱՆԳԵՐ-ՁԱՆԳԵՐ

2 Հեղինակը՝ Համո Սահյանը, բանաստեղծության մեջ գործածել է այսպիսի հանգաբառեր.

գալիս – տալիս
մտնում – գտնում

Շարունակի՛ր հանգավորել.

կանչող – .... լացել – ....
գալիս է – .... եղան – ....
իմացիր – .... աղալ – ....

3 **Գետ** բառով կազմի՛ր բարդ և ածանցավոր բառեր:

4 **Փոխակերպում**

Գետ – □ետ – կե□ – կ□ր – կո□ – ծով:

5 7, 2, 1, 1000 թվերը գրի՛ր բառերով ու տեղադրի՛ր առածների մեջ:

Մի խելքը լավ է, ... ավելի:
.... անգամ չափիր, ... անգամ կտրիր:
Մի գնդակով .... նապաստակ չես խփի:
Խելոքին .... ասա, անխելքին՝ .... ու մեկ:

Հանելուկ

Ի՞նչ մայր է, որ իր ձագերի կաթով է սնվում:

ՈՒՁՈ՞ՒՄ ԵՍ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԼ

ՇԱՔԱՐԱՁՈՒՐ ԳԵՏԱԿԸ

Ավանդություն

Մի հովիվ ունենում է Շուշան անունով մի աղջիկ, որի նմանը չկար աշխարհում: Նա որ ծիծաղում էր, սարերում շուշաններ էին բացվում, որ լաց էր լինում, արտասուքներն աղբյուրներ էին դառնում: Ասում են, թե այս գետակը Շուշանի արտասուքներից է գոյացել: Ձրի քաղցրահամ լինելու պատճառով գետակը կոչվել է Շաքարաջուր:

Հիշո՞ւմ ես՝ Սևանի մեջ թափվում է 28 գետ ու գետակ:
Ծովին խառնվող գետի նման դո՛ւ էլ պիտանի եղիր քո հայրենիքին:

Այսքան մոտ եմ,
Բայց կարոտ եմ Մասիսին...
Հովհաննես Շիրազ

Մենք փո՛քր ենք, այո՛,
Ձեզ ո՞վ էր ասում,
Մեզ սեղմեք այնքան,
Որ մենք ստիպված... աղամանդ դառնանք:

ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ

Ա՛Խ, ԱՅՍ ՄԱՍԻՍԸ

Ա՛խ, այս Մասիսը...

Որից փափկում են սրտերը բոլոր,
Երբ ինքը... քար է:

Որ ջերմացնում է սրտերը մոլոր,
Երբ ինքը... սառն է:

Որ աշխարհներից հեռավոր-հեռու,
Բոլոր հայերին այստեղ է բերում,
Երբ ինքն... այստեղ չէ:

Միաբանության քարոզ է կարդում
Աշխարհում ցրված հայերին անտուն,
Երբ որ... կիսված է:

Որ մեծ սիրո պես
Ո՛չ հեռանում է,
Ո՛չ էլ գալիս է...

Ա՛խ, այս Մասիսը:

1. Ըստ բանաստեղծության՝ ամբողջացրո՛ւ միտքը և մեկնաբանի՛ր.
Մասիսը.
– քար է, բայց....
– սառն է, բայց....
– այստեղ չէ, բայց....
– կիսված է, բայց....
– ո՛չ հեռանում է, ո՛չ էլ....

2. Ի՞նչ ես կարծում՝ հայերն ինչո՞ւ են այդքան սիրում Մասիսը և ինչպե՞ս են այդ սերը դրսևորում:

1 ա) Օգտվելով տառերի թվային արժեքների աղյուսակից (էջ 5)՝ վերծանի՛ր ծածկագրված բառերը.
8690, 6690, 4690, 2801, 4091, 4609, 2640:
Օրինակ՝ 9690 = 9000 + 600 + 90 = ք + ո + ղ = քող:

բ) Վերծանի՛ր նախադասությունը.
4609 7, 401 720 9420:

2 ա) Գրի՛ր այբուբենի երեսուներորդ տառի անունը: Փոխելով անվան վերջին տառը՝ ստացի՛ր նոր բառեր: Քանի՞ բառ կազմեցիր: Համեմատի՛ր ընկերոջդ գրած բառերի հետ:
բ) Բառարանից օգտվելով՝ գտի՛ր այդ բառերի բացատրությունը:

3 **Շարունակի՛ր**
փափուկ – փափկել
մոլոր – ....
սառը – ....
ջերմ – ....
հեռու – ....

ՀԱՆԳԵՐ-ՁԱՆԳԵՐ

4 Լրացրո՛ւ վերջավորությունները և ստացի՛ր իրար հետ հանգ կազմող բառեր.
ա) քան–, վան–, ման–, խան–,
բ) չա–, թա–, լա–, ճամ–,
գ) աս–, պաս–, կայ–, պա–:

ՈՒՁՈ՞ՒՄ ԵՍ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԼ

Մասիս լեռան բարձրությունը հինգ հազար հարյուր վաթսունհինգ մետր է: Այն աշխարհի ամենաբարձր լեռն է՝ հաշված ստորոտից մինչև գագաթ՝ չորս հազար երեք հարյուր մետր: Փոքր գագաթը հաճախ անվանում են Սիս. նրա բարձրությունը երեք հազար ինը հարյուր քսանհինգ մետր է: Սիսի և Մասիսի գագաթների հեռավորությունը մոտ տասը կիլոմետր է:

Սիս + Մասիս = Արարատ

Նշված թվերը գրե՛ք թվանշանների օգնությամբ և գտե՛ք, թե Մեծ Մասիսը քանի՞ մետրով է բարձր Փոքր Մասիսից՝ Սիսից:

Մեծ և Փոքր Մասիսները ձեռք ձեռքի տված կարոտով սպասում են քո հայրենանվեր գործերին:

Երևի հայրենիքը հենց այն է, որ դու տեսնում ես, ուրիշը չի տեսնում:

Երևի հայրենիքը հենց այն է, որ կորցնելուց հետո այլևս ոչինչ չես ունենա կորցնելու:

Վարդգես Պետրոսյան

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔ

Լեռները հպարտ վե՛ր են բարձրանում,
Որ փառքդ վերև՛ տանեն, հայրենի՛ք:
Արծիվները վես* երկինք են հասնում,
Որ փառքդ երկի՛նք տանեն, հայրենի՛ք:
Հովերն ու հողմերն աշխա՛րհ են շրջում,
Որ փառքդ չորս կողմ տանեն, հայրենի՛ք:
Աղբյուր ու գուսան ե՛րգ են կարկաչում,
Որ փառքիդ գովքը անեն, հայրենի՛ք:
Իսկ զավակնե՛րդ, զավակներդ անգին
Իրենց արյո՛ւնն են տալիս սրտագին,
Որ փառքդ անմա՛հ պահեն, հայրենի՛ք...

1. Ըստ բանաստեղծության՝ ի՞նչ են անում.

լեռները, արծիվները, հովերն ու հողմերը, աղբյուրն ու գուսանը:

Պատմի՛ր:

2. Ըստ բանաստեղծության՝ ի՞նչ են անում զավակները: Հայրենիքի փառքի համար ուրիշ ի՞նչ կարելի է անել:

3. Նամա՛կ գրիր սփյուռքահայ քո հասակակցին՝ նկարագրելով ծննդավայրդ:

1 Բառակապակցություններն արտահայտի՛ր մեկ բառով.

2 թև ունեցող,
7 գլուխ ունեցող,
8 ոտք ունեցող,
4 հարկ ունեցող:

2 ա) Թվային բաղադրիչով դարձվածներն արտահայտի՛ր մեկ բառով.

հավասարեցնել գրոյի,
յոթ սարից այն կողմ,
երկու քայլի վրա:

բ) Դարձվածներն օգտագործի՛ր նախադասությունների մեջ:

Դու տեսնում ես երեք սլացիկ բարդի:

Առաջին բարդու վրա կանգնած է մեկ արագիլ: Երկրորդ բարդու վրա տեսնում ես երկու արագիլ: Երրորդ բարդու վրա արագիլները երեքն են:

Մեկ, երկու, երեք բառերը ցույց են տալիս յուրաքանչյուր բարդու վրա եղած արագիլների թիվը, քանակը:

Առաջին, երկրորդ, երրորդ բառերը ցույց են տալիս բարդիներից յուրաքանչյուրի թվային կարգը, դասը, այսինքն՝ թե տվյալ բարդին շարքում որերորդն է:

Ս Առարկաների թիվ (1, 2, 3....) և թվային կարգ (առաջին, երկրորդ, երրորդ....) ցույց տվող բառերը կոչվում են թվական կամ թվական անուն: Թվականը պատասխանում է քանի՞, որքա՞ն, ինչքա՞ն, քանի՞երորդ հարցերին:

Ս Առարկայի թիվ, քանակ ցույց տվող թվականները քանակական թվականներ են: Առարկայի կարգ, դաս ցույց տվող թվականները դասական թվականներ են:

3 Քար, առաջին, փափկել, սիրտ, տասնհինգ, հինգերորդ, ջերմացնել, կարդալ, քառասուն, անտուն, չորրորդ, մոլոր, հազար, բարձր, հեռավոր, սար, երկու, աշխարհ, կանչել բառերը բաժանի՛ր չորս խմբի: Ի՞նչ են ցույց տալիս յուրաքանչյուր խմբի բառերը: Ի՞նչ անուն կդնես խմբերից յուրաքանչյուրին:

4 **Որոշի՛ր՝ որ բառերի հետ են գործածվել թվականները, և այդ բառակապակցությունները գրի՛ր տետրում:**

Դու սովորում ես չորրորդ դասարանում:
Արագածն ունի չորս գագաթ:
Հայ շախմատիստները գրավեցին առաջին տեղը:
Սևանա լիճ թափվում է քսանութ գետ ու գետակ:

Հայրենիքը հենց այն է, որ անհնար է հասկանալ խելքով, չափել մետրերով, նրան կարելի է և պետք է հավատալ միայն:

Վարդգես Պետրոսյան

Երբ հնչում են Ամանորի զանգերը, երկնքից մեր սրտերին երազանքներ են իջնում, որոնք բարեմաղթանքների միջոցով հասնում են մեր սիրելիներին...

ՄԵՏԱՔՍԵ

Գրքի նկատմամբ անտարբեր լինել նշանակում է անտարբեր լինել մարդու նկատմամբ:

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԳԻՇԵՐ

Թե աշխարհում փակ դռներ կան, թո՛ղ որ բացվե՛ն այս գիշեր,
ՈՒ Նոր տարին նոր խնդությամբ թող նե՛րս մտնի այս գիշեր,
Թե կան դատարկ, համր տներ, մանկան ճիչո՛վ թող լցվեն,
Ով փնտրում է սրտանց մեկին, հանկարծ գտնի այս գիշեր:

Թե կան տխուր, լացող աչքեր, թող ծիծաղե՛ն այս գիշեր,
Կանչող ձեռքերն իրար հասնեն, հրաշք ապրեն այս գիշեր,
Թե կան սրտեր՝ չար նախանձով, դառնան բարի ու ներող,
Եվ ուրիշի ուրախ կյանքով խանդավառվեն այս գիշեր:



Թե մոլորված անցորդներ կան, դարձի՛ թող գան այս գիշեր,
Սրբագործված սիրով մտնեն իրենց օջախն այս գիշեր,
Թե կան բախտի փշոտ ճամփեք, թող ծաղկունքո՛վ կանաչեն,
ՈՒ երջանիկ սպասումով բոլորն արբե՛ն այս գիշեր...

Թե աշխարհում պանդուխտներ* կան, թող տո՛ւն դառնան այս գիշեր,
Հայրենական հավերժությամբ ողջագուրվե՛ն այս գիշեր,
Արարչագո՛րծ իմ ժողովուրդ, թո՛ղ որ խմենք մինչև լույս
Թափվող ձյունի նման մաքուր խղճիդ կենա՛ցն այս գիշեր...

1. Անգի՛ր սովորիր բեզ դուր եկած քառատողը:
2. Հայրենիք, սեր, ընտանիք, հայրենադարձություն բառերից ո՞րը ո՞ր քառատողին կվերագրես: Ինչո՞ւ:

ԹՎԱԿԱՆԻ ԵՐԳԸ

Թվականն եմ խորհրդավոր,
Խոսքի մաս եմ շատ պատվավոր,
Ցույց եմ տալիս մինչև անհուն,
Թե՛ թվի կարգ, թե՛ թվանուն:

ՉՎԱՐԹ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թվականներն անվերջ են:
Կարո՞ղ ես ասել, թե ինչու:

1 Բարեմաղթանքնե՛ր գրիր ընկերոջդ և փոխանցի՛ր նրան:

Հանելուկ

Եկավ օրով, գնաց տարով:

Հիշի՛ր

«Երկնքի բոլոր աստղերը ճանաչում էին նրան»:

2 Լրացրու խաչբառը և ընդգծված սյունակում կկարդաս, թե որն է հրաշալիքների հրաշալիքը:

ԽԱՉԲԱՌ «ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐ»



1
.... Նահապետ

7 
Սուրբ ...

5
... Մաշտոց

4

8

6
.... լիճ

3

2
Սասունցի ....

Լավ բան մտածիր, որ լավ բան կատարվի:
Հայ ժողովրդական առած

ԱՄՓՈՓԻ՛Ր ԻՄԱՑԱԾԴ, ՍՏՈՒԳԻ՛Ր ԻՆՔԴ ՔԵԶ

1. Ամբողջացրու միտքը և ասա, թե որ բնագրից է:

Մեր ամեն ինչի դասատուն ասում է....
Նա է հայը, ով....
Դու բռնած մեր ձեռքը՝ տանում ես....
....., որովհետև կաղինը կաղնի էր դարձել:
Դու էլ գետի պես անցիր քո ճամփան, որ....
...., որ փառքդ վերև տանեն, Հայրենի՛ք:
Բոլոր հայերին այստեղ է բերում, որովհետև....
Թող որ Նոր տարվա այս գիշերը....

2. Քեզ ծանոթ ո՞ր հեղինակներին հանդիպեցիր այս բաժնում:

Հիշի՛ր նրանց ստեղծագործություններից:

3. «Ուզո՞ւմ ես ավելին իմանալ» բնագրից (էջ 71) այնուկներով գրի՛ր գոյականները, ածականները, բայերն ու թվականները:

4. Գրի՛ր բառեր, որոնց մի տառը փոխելով՝ կստանաս թվականներ:

Օրինակ՝ մեգ – մեկ, մեխ – մեկ:

5. Իմաստային ի՞նչ ընդհանրություններ ես տեսնում հետևյալ ստեղծագործություններում:

Թորգոմ Նահապետի և Հայկ Նահապետի զրույցը	↔	Չնվաճված աշխարհամաս
Ա՜խ, այս Մասիսը	↔	Հայոց լեզուն
Հայրենիք	↔	Ա՜յ քեզ բան. ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հա՛յ-րե՛-նի՛ք է
Գետը	↔	Հայոց ուսուցիչ
Հայրս	↔	Նոր տարվա գիշեր
Կաղինը	↔	Եղեգը, որ շատ էր ուզում դառնալ սրինգ

ԵՍ ԱՅՍՊԵ՛Ս ԱՍԵՄ, ԴՈՒ ԱՅՆՊԵ՛Ս ՀԱՍԿԱՑԻՐ

Երկու հաստլիկներ, համով-համով ուտելով, խոսում էին: Նրանցից մեկը, հերթական կարկանդակը բերանը դնելով, ասաց.

– Հիշո՞ւմ ես մեր դասարանցի Արայիկին:

– Այո՛, հիշում եմ:

– Երկու օր առաջ տեսա՝ **ցամաք ձորի աղվես** էր դարձել:

– Չի՛ կարող պատահել: Մարդը աղվես չի դառնում: Համ էլ ի՞նչ իմացար, որ ցամաք ձորի աղվես է:

– Ինձ ճիշտ չհասկացար: Ուզում եմ ասել՝ **ոտքի վրա հալվել էր, վիզը տանձի պոչ էր դարձել**:

– Ձնեմա՞րդ է, ի՞նչ է, որ հալվի: Վիզը որ տանձի պոչ դառնա, գլուխը վրան չի մնա:

– Է՛, լավ չես հասկանում: **Ոտքի վրա չորացել էր, մենակ քիթն էր մնացել:**

– Ինչքան էլ չորանա, մարդուց միայն քիթը չի կարող մնալ:

– Ինձ լավ չես հասկանում: Ասում եմ՝ շատ խիստ նիհարել էր. **քթից բռնեիր՝ շունչը կտար:**

– Քեզ պե՞տք է նրա շունչը, որ ուզում ես քթից բռնել:

Այսպես զրուցում էին երկու հաստլիկները:

Ինչո՞ւ իրար չէին հասկանում ընկերները:

ՎԱՀԱԳՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Դու կարդացիր երկու ընկերների երկխոսությունը և կռահեցիր, թե նրանք ինչու իրար չհասկացան:
Այժմ կարդանք և տեսնենք, թե ինչ պատահեց, երբ ընկերացան արջն ու օձը:

Սիրեցե՛ք հայ լեզուն, և հայ ժողովուրդը չի՛ կորչի:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՋՆ ՈՒ ՕՁԸ

Ինչպես եղավ, որ մի անգամ
Արջն ու օձը դարձան ընկեր,
Ընկեր դարձան ու բարեկամ:
«Մեկս քնի,
Մեկս հսկի,
Իրար շահենք,
Իրար պահենք,
Ընկերովի կյանք վայելենք»:
Այսպես ասին, երդվեցին,
Իրար ազնիվ խոսք տվեցին,
Օձը՝ արջին, արջը՝ օձին:
Անցավ այս կերպ մի ժամանակ:
Եվ շարունակ
Երկու ընկեր սիրով, սրտով
Նստան-ելան ու քուն մտան
Կարգով, հերթով:
Սակայն օձի սողքը* բեկբեկ*
Դուր չէր գալիս արջին երբեք:
Ու մի օր էլ արջը ժայռին
Թիկն էր տվել արևկողի,
Հանկարծ օձը՝ ոլոր-մոլոր
Եկավ, ասես, գաղտագողի:
Վախն ու կասկածն առավ արջին,
Ելավ կանգնեց նստած տեղում:
«Ես ծուռումուռ գնացողին,
Ընկեր լինի, թե կաթնախպեր*,
Չէ՛, չեմ սիրում, ես չե՛մ ուզում»:
Գոռաց այսպես և թաթն ուժգին
Դրեց, սեղմեց օձի գլխին
Ու մյուս թաթը օձի մարմնով
Մինչև պոչը քաշեց թափով.
Ապա մոտիկ հոսող գետին
Հանձնեց օձի անկենդան դին:
Եվ նայելով ջրերի հետ
Նետի նման սուրող օձին՝
Գոհ մրթմրթաց բեղերի տակ.
«Ա՛յ, ընկերը էսպես շիտակ
Պիտի լինի,
Դե՛հ, շիփ-շիտակ գնա՛ հիմի»:

1. Ի՞նչ պայմանավորվեցին արջն ու օձը:
2. Ի՞նչը դուր չեկավ արջին, և ինչպե՞ս վարվեց նա:
3. Ընտրի՛ր քո կարծիքով ճիշտ տարբերակը և քննարկի՛ր ընկերներիդ հետ.

- Արջը մեղավոր էր (մեղավոր չէր), որովհետև....
- Օձը մեղավոր էր (մեղավոր չէր), որովհետև....

4. Առակի հիմնական միտքն է.

- Ընկերության մեջ պետք է շիտակ ու ազնիվ լինել:
- Երբ ցանկանաս, կարող ես հրաժարվել ընկերոջից:
- Դիմացինի նկատմամբ պետք է լինել հանդուրժող. ընդունել նրան այնպիսին, ինչպիսին նա կա:
- Ոմ հետ ուզես, կարող ես ընկերանալ:
- Եթե կասկածներ ունես, պարզաբանի՛ր ընկերոջդ հետ:

Հիմնավորի՛ր ընտրությունդ:

1 Առակը բաժանի՛ր դրվագների, վերնագրի՛ր և շարադրի՛ր արձակ:

2 «Ծուռումուռ գնալ» և «շիփ-շիտակ գնալ» հականիշ արտահայտություններն օգտագործի՛ր նախադասությունների մեջ:

3 Հիշի՛ր և գրի՛ր առածներ և ասացվածքներ ընկերության վերաբերյալ:

4 Գրի՛ր, թե որ անվանումը որ առարկայինն է. ջահ, անվադող, երկժանի, վարդակ, համակարգիչ, սրճեփ, ամրակ:

5 **ՉՎԱՐԹ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

- Քանի՞ ոտք ունեն արջն ու օձը միասին:
- Քանի՞ օր են քնում ձմռան երեք ամսում արջն ու օձը միասին:

Պատասխանները (թվականները) գրի՛ր բառերով:

Առած

Օձն իր շապիկը կփոխի, բնույթը* չի փոխի:

Ընկեր ընտրիր առանց շտապելու: Առավել ևս մի՛ շտապիր փոխել նրան:

Պարզվում է, որ աղվեսն ու գայլն էլ հաշվել գիտեն, բայց արի ու տես, որ «ուղտի պարը կամրջին է բռնում»:

Մաղթում եմ, որ ուրիշների և ինքդ քեզ հետ վիճելու քիչ պատճառներ ունենաս:

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՎԵՃԸ

– Ղա՛, ղա՛, փախե՛ք-փրկվե՛ք,– անտառով մեկ աղմկեց ագռավը,– որսորդներ են մտել անտառ, փախե՛ք-փրկվե՛ք...

Գազաններն իրար հրմշտելով նետվեցին անտառի խորքերը:

Գայլը, դուրս գալով ծառի հետևից, բռնեց փախչող աղվեսի վզից.

– Ի՞նչ է պատահել, ի՞նչ ես իրար անցել:

– Որսորդներ են մտել անտառ, ինձ են որոնում:

– Իսկ ինչո՞ւ են հենց քե՛զ որոնում:

– Բա էլ ո՞ւմ,– զարմացավ աղվեսը,– նրանք եկել են իմ մորթու համար:

– Հա՛, հա՛, հա՛,– խռպոտ ու մրսած ձայնով ծիծաղեց գայլը,– եթե դու աղվես ես, ես քո պոչն եմ, ուրեմն ես՝ անտառի տիրակալս, քո կարծիքով՝ ոչինչ չարժե՞մ, որ որսորդներն ինձ թողած ընկել են մի ինչ-որ քնձռոտ աղվեսի հետևից:

– Այո՛, հենց ի՛մ հետևից:

– Գիտե՞ս ինչ: Ինձ խաբելը հեշտ չէ, գնա հա՛վ գտիր, խաբի՛ր,– զայրացավ գայլը:

– Այո՛, իմ մորթու համար են որսորդներն անտառ եկել, ի՛մ, ի՛մ մորթու,– ասաց աղվեսը:

– Իսկ ի՞նչ է, մենք մորթի չունե՞նք, տկլո՞ր ենք: Քանի՛ անգամ են բուրդս գզել գյուղի շները, բայց դե չլինի-չլինի, մի երկու աղվեսի մորթու չափ վրաս մնացած կլինի:

– Է՛, մի՛ ծիծաղեցրու,– քթի տակ խնդաց աղվեսը,– բոլորին է հայտնի, որ ամբողջ անտառում իմ մորթուց լավը չկա:

– Թո՛ւ,– զայրացավ գայլը,– դե որ այդպես է, եկ հաշվե՞նք, թե ով է ավելի թավամազ:

Գայլն սկսեց աղվեսի մորթու մազերը հաշվել, իսկ աղվեսը՝ գայլի: Նրանք հաշվում էին, հաշվում, իսկ որսորդների շների հաչոցները գնալով ավելի ու ավելի մոտիկից էին լսվում:

–...Հազար հարյուր տասը, տասնմեկ, տասներկու,– հաշվում էր գայլը, երբ շատ մոտիկից լսվեց շների ձայնը: Նա ցցեց ականջները, շուրջը նայեց և աղվեսին ասաց.

– Լսո՞ւմ ես, արի՛ փախչենք...

– ...Ութ հարյուր երեսունհինգ, երեսունվեց. ի՞նչ է, տեսար, որ վրադ մազ չկա, շների՞ն ես պատճառ բերում, ասա՛, որ ի՛մ մորթին է ավելի լավը,– ասաց աղվեսը:

– Ո՛չ մի դեպքում, երբե՛ք,– ասաց գայլը, և նրանք շարունակեցին հաշվել:

Ագռավը, որ այս ու այն կողմ էր թռչում, բոլորին զգուշացնում, նրանց տեսնելով, կանչեց.

– Հե՛յ, ժամանա՞կ եք գտել վիճելու, փախե՛ք-փրկվե՛ք, շները հասա՛ն...

Բայց գայլն էլ, աղվեսն էլ նրա վրա ուշադրություն չդարձրին և շարունակեցին հաշվել: Մեկ էլ ծառերի հետևից վրա պրծան որսորդների շները և գայլին ու աղվեսին այնպե՛ս գզեցին, նրանց բուրդն այնպե՛ս քամուն տվեցին, որ նրանք հազիվհազ մազապուրծ փախան:

– Ա՛յ թե շները ձեր մազերը լավ հաշվեցին,– նրանց հետևից կռավեց ագռավը:

1. **Ի՞նչ իրարանցում էր անտառում: Պատմի՛ր:**
2. **Ինչո՞ւ վիճեցին գայլն ու աղվեսը:**
3. **Ինչո՞վ ավարտվեց վեճը:**
4. **Քո կարծիքով՝ ինչո՞ւ պատժվեցին վիճաբանողները:**
5. **Աղվեսի ու գայլի մասին քո պատկերացումները համեմատի՛ր պատմության հերոսների վարքագծի հետ և դրան համապատասխան հորինի՛ր նոր ավարտ:**

1 Հերոսների արարքներում ի՞նչ դատապարտելի հատկանիշներ նկատեցիր: Գրի՛ր: Քեզ կօգնեն հետևյալ առածները.

- Հիմար գլխի պատճառով տուժում են ոտքերը:
- Ձուրն էկել, ջրաղացն է տարել, դու չախչախն* ես փնտրում:
- Ի՞նչ ես կորցրել, ի՞նչ ես ման գալիս:
- Կռվի մեջ փլավ չեն բաժանում:
- Ուղտի պարը կամրջին է բռնում:

2 **«Մազերը հաշվել»** արտահայտությունը բնագրի տարբեր նախադասություններում գործածվել է ուղիղ և փոխաբերական իմաստներով: Գտի՛ր և գրի՛ր այդ նախադասությունները:

3 Առակում դատապարտվում է.
– վախկոտությունը,
– սնապարծությունը,
– ստախոսությունը,
– դավաճանությունը:
Ընտրի՛ր ճիշտ պատասխանը. դրան համապատասխան հիշի՛ր առածներ և գրի՛ր:

4 Բնագրից դո՛ւրս գրիր թվականները և շարունակիր բառերով գրել մինչև շների վրա հասնելը.
- գայլինը՝ մինչև 1116-ը,
- աղվեսինը՝ մինչև 840-ը:

Ս 11–99 թվականները գրվում են միասին՝ մեկ բառով:
Օրինակ՝ տասնհինգ, երեսունմեկ, իննսունինը:
100-ից բարձր թվերը գրվում են առանձին բառերով:
Օրինակ՝ հարյուր քսանչորս, հազար վեց հարյուր երեսունութ, հինգ հազար վեց հարյուր քառասունինը:

ԴԱՐՁՎԱԾ

Թե դու աղվեսն ես, ես քո պոչն եմ արտահայտությունն օգտագործում են, երբ ուզում են ասել, որ իրենք էլ պակաս հասկացող և խորամանկ չեն, գիտեն, թե դիմացինն ինչ է ուզում անել, ինչ կա դիմացինի մտքում, որ իրենց խաբելն այդքան էլ հեշտ չէ:

ՄԱԶԱՊՈՒՐԾ — ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ

Մազապուրծ նշանակում է հազիվ-հազ պրծած, մի կերպ փորձանքից, աղետից ազատված: Իսկ ի՞նչ արմատներից է կազմված **մազապուրծ** բառը: Թվում է, թե՝ **մազ** և **պրծնել**: Սակայն բառի արմատներն են **մազ**-ը և **ապուր**-ը: **Ապուր**-ը **ապրել** բառի արմատն է: Իսկ **ապրել** սկզբնապես նշանակել է ճողոպրել, ազատվել:

Սնապարծությունն ու հիմարությունը նույն տանն են բնակվում:
Մի՛ թակիր այդ տան դուռը:

Աշխատասեր մարդկանց հաճախ համեմատում են մեղուների ու մրջյունների հետ: Քանի որ դու ոչ միայն աշխատասեր ես, այլև ընթերցասեր, կարդա՛ այս առակը:

Միասին աշխատեք, միասին վայելեք,
հաշտ ու խաղաղ ապրեք:

ԱԹԱԲԵԿ ԽՆԿՈՅԱՆ

ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

Թռի-վռի մի ճպուռ,
Ողջ ամառը շուռումուռ,
Երգեց, ճռռաց,
Ճռճռաց:
Մին էլ, ըհը՛, ձմեռը
Փռեց իր ցուրտ թևերը:
Բացեց գորգը սպիտակ,
Դաշտերն առավ ձյունի տակ:
Անցան պայծառ օրերը,
Էլ ո՞րն ասեմ, էլ ո՞րը,
Երբ ամեն մի թփի տակ
Թե՛ սեղան կար, թե՛ օթյակ*:
Եկան օրեր ցրտաշունչ,
Ճպուռն ընկավ լուռումունջ,
Քաղցած փորին էլ ի՞նչ երգ,
Ցուրտը տարավ ոտ ու ձեռք:
Զընգր-զընգր դողալով,
Ծանր-ծանր սողալով՝
Նա մրջյունին ասում է.
– Գլխի՛դ մատաղ, սանամե՛ր*,
Մի ճա՛ր արա՝ շունչ առնեմ,
Ցրտից, սովից չմեռնեմ.
Կերակրի՛ր, տաքացրո՛ւ,
Մինչև գարուն ապրեցրո՛ւ:
– Էս ի՞նչ բան է, սանի՛կս,
Զարմանում եմ, ջանի՛կս,
Չաշխատեցի՞ր ամառը,
Ասա՝ ի՞նչն էր պատճառը:
– Այդպես բանի, սանամե՛ր,
Էլ ժամանակ ո՞վ ուներ.
Այն խոտերում բուրավետ
Երգում էինք մերոնց հետ:
– Ուրեմն՝ դո՞ւ...
– Այո՛, ե՛ս...
Ողջ ամառը դեն ու դես,
Երգում էի մշտապես:
– Երգո՞ւմ էիր... Շա՛տ բարի,
Այժմ էլ բռնի՛ վերվերի*,
Քամին ծափ տա, դու պարի՛:

1. Վերընթերցի՛ր այն տողերը, որտեղ նկարագրվում են ճպուռի ամառային օրերը, և պատմի՛ր:

2. Ինչո՞ւ է ճպուռը խնդրում մրջյունին «ապրեցնել» իրեն հատկապես մինչև գարուն:

3. Բնութագրի՛ր առակի հերոսներին և համեմատի՛ր:

4. Ճպուռին ներս չընդունելու համար փորձի՛ր մրջյունին.
- արդարացնել,
- մեղադրել:

5. Համառոտ պատմի՛ր առակը՝ դեպքերը փոխելով այնպես, որ մրջյունը ճպուռին ներս թողնի:

6. Արձակ շարադրի՛ր առակի բովանդակությունը՝ փոխելով ավարտը:

1 Գրի՛ր, թե ո՞ր միջատը ո՞րերորդ տեղում է նստած:
Օրինակ՝ ճպուռը նստած է երկրորդ կարգի տասնմեկերորդ տեղում:

2 Կարդա՛ առակի գլխավոր մտքին համապատասխանող այս առածները և մեկնաբանի՛ր:
- Ամռան փուշը՝ ձմռան նուշը:
- Այսօրվա գործը վաղվան չեն թողնի:
- Լավությո՛ւն արա, ջո՛ւրը գցիր:
- Ինչ որ ցանես, էն էլ կհնձես:
- Ժամանակը ոսկի է:
- Ձյունն ի՞նչ գիտի, թե աղբատը փետ չունի:

3 Անձայն, միշտ, սուսուփուս, պատշգամբ, անուշահոտ, հնար, պարել բառերի փոխարեն ի՞նչ հոմանիշներ է ընտրել հեղինակը:

4 Հորինի՛ր մի հանելուկ մրջյունի մասին:

5 Բնագրից դո՛ւրս գրիր փոխաբերական իմաստ ունեցող արտահայտություններ:

6 Ըստ տրված նմուշի լրացրու աղյուսակը՝ քո ընտանիքի անդամների ծննդյան թվերով:

	Ծննդյան թիվը	
Անունը	թվանշաններով	բառերով
Գագիկ	1992	հազար ինը հարյուր իննսուներկու
.....	.....	.....

7 Ամբողջացրու ասացվածքները՝ ընտրելով սկզբին համապատասխան ավարտ:

Աջով տուր, այն էլ կինձես: որ ձախով առնես:

Ինչ որ ցանես, ջո՛ւրը գցիր: մարդը մարդուն կհանդիպի:

Լավությո՛ւն արա, Սարը սարին չի հանդիպի,

Ս

Շարունակի՛ր

մեկ – առաջին	հինգ – հինգերորդ	ինը – իններորդ
երկու – երկրորդ	վեց –	11 – ....
երեք – երրորդ	յոթ –	25 – ....
չորս – չորրորդ	ութ –	68 – ....

Ինչպես տեսնում ես, քանակական թվականներին ավելացնելով -րորդ կամ -երորդ ածանցները՝ ստանում ենք դասական թվականներ:

Օգտվելով տրված օրինակներից՝ որոշի՛ր՝ քանակական որ թվականների վրա է ավելացել -րորդ ածանցը, որոնց վրա՝ -երորդ:

8 **ՁՎԱՐԹ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

ա) Լրացրո՛ւ Ճպուռի օրակարգը:

Օրվա ընթացքում ճպուռը երգում ու պարում է .... ժամ, ուտում է .... րոպե, աշխատում է .... ժամ, քնում է .... ժամ:

բ) Կազմի՛ր Մրջյունի օրակարգը:

Առած

Ամռանը պառկես հովերը,
Ձմռանը սատկեն կովերը:

Ով աշխատի, նա կուտի:
Ով ալարի, ոչ դալարի:
Ով՝ մրջյուն, ով՝ ճպուռ. ընտրի՛ր ինքդ:

Դու ծանոթ ես Եզոպոսի ստեղծած մի քանի առակի:

Հիշո՞ւմ ես «Առակի ծնունդը», «Հնարամիտը»:

Այժմ կարդանք Եզոպոսի առակներից ևս մեկը, որի հերոսը պըստիկ է, բայց ճստիկ է:

ԵԶՈՊՈՍ

Հիշի՛ր. անհաղթահարելի է համերաշխությունը, և նույնքան անզոր է անմիաբանությունը:

ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ՄՈՒԿԸ

Քնած առյուծի մարմնի վրայով մի մուկ վազեց: Առյուծը զարթնեց, բռնեց նրան և, այն է, ուզում էր խժռել, բայց մուկը խնդրեց բաց թողնել իրեն՝ հավատացնելով, որ բարությամբ կհատուցի իր փրկության համար: Առյուծը քահ-քահ ծիծաղեց ու բաց թողեց նրան:

Բայց, շատ չանցած, այնպես պատահեց, որ առյուծն ընկավ որսորդների ճանկը, և նրան պարանով կապկպեցին ծառին: Մուկը, լսելով նրա հառաչանքները, իսկույն ևեթ վազեց, կրծեց պարանը և ազատեց նրան՝ ասելով. «Այն ժամանակ դու ծիծաղեցիր ինձ վրա և կարծես թե չհավատացիր ինձ, իսկ հիմա իմացի՛ր, որ մո՛ւկն էլ կարող է երախտահատույց* լինել լավության համար»:

Առակը ցույց է տալիս, որ նույնիսկ ամենից ուժեղներին ճակատագիրը երբեմն ստիպում է ամենից թույլերի կարիքն զգալ:

1. **Ի՞նչ պատահեց առյուծին:**
2. **Մուկն ինչո՞ւ օգնեց առյուծին:**
3. **Նկարագրի՛ր առյուծին ու մկանը:**
4. **Մտածի՛ր՝ ուժեղը և թույլը ե՞րբ կարող են միմյանց կարիք զգալ:**

1 Ինչպես արդեն գիտես, առակի հիմնական իմաստը սովորաբար արտահայտվում է առակի վերջին տողերում:

Արտագրի՛ր այդ տողերը և այդ մտքին համապատասխան հորինի՛ր մի փոքրիկ պատմություն:

2 Փակագծերից ընտրիր ճիշտ բառը և լրացրու նախադասությունները: Գրիր տետրում:

- Հայ .... տպագիր գիրքը լույս է տեսել 1512 թ.: (առաջի, առաջին)
- Հայաստանը հզոր է եղել Տիգրան ... թագավորի օրոք: (Երկրորդ, Եկրորդ)
- Հայկական լեռնաշխարհի .... մեծ լիճը Սևանն է: (երորդ, երրորդ)
- Հաղպատի ճարտարապետական համալիրը կառուցվել է .... դարում: (տասներորդ, տասերորդ)

3 Երախտիք և հատուցել բառերով կազմի՛ր մի բարդ բառ և ստացված բառով ընկերներիդ հետ խաղա՛ «բառքամոցի»:

4 Օգտվելով բառաշարքերից՝ կազմիր բարդ բառեր և գրիր տետրում:

Արագ, ահեղ, քաջ, դանդաղ, թավ, արքա:
Մազ, վազել, քայլ, վայել, գոչ, սիրտ:

Ստացված բառերն առակի ո՞ր հերոսին են բնութագրում: Ո՞ւզում ես ավելին իմանալ այդ հերոսի մասին: Կարդա՛:

ՈՒԶՈ՞ՒՄ ԵՍ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԼ

Առյուծին անվանում են կենդանիների արքա: Ուժով, ճարպկությամբ, համարձակությամբ դժվար թե մեկը համեմատվի առյուծի հետ: Առյուծներն առաջին հերթին ոչնչացնում են հիվանդ, թույլ կենդանիներին և դրանով թույլ չեն տալիս, որ վարակիչ հիվանդությունները տարածվեն: Առյուծը որսին հետապնդում է ժամում 50 կիլոմետր արագությամբ: Նա այդ արագությամբ կարող է վազել ընդամենը 900 մետր: Առյուծներն ապրում են ընտանիքներով: Առյուծի նորածին ձագուկները՝ կորյունները (սովորաբար 3-ն են լինում), շատ փոքր են՝ մոտ 80 սմ, և կշռում են 1200–2100 գրամ:

5 «Ուզո՞ւմ ես ավելին իմանալ» տեքստի բանական թվականները գրիր բառերով: Դրանք դարձրու դասական թվականներ:

Բնության մեջ հարազատ
Ապրում են պարզ ու ազատ

Մեծ ու փոքր միասին՝
Ամեն մեկը՝ իր հոգսին:

Այս անգամ առակի հերոսը ոչ թե մարդ կամ որևէ կենդանի է, այլ, պատկերացնո՞ւմ ես, տակառ, այն էլ՝ դատարկ:

Լա՛վ ականջ արեք իմ այս խրատին.
Խելոք մարդն ընկեր չի՛ դառնա վատին:

ՀՐԱՉԻԿ ՍԵՎՈՅԱՆ

ՏԱԿԱՌԻ ԼՈՂԸ

Հսկա գետում հոսանքն ի վար
Քշվում էր մի դատարկ տակառ
Եվ մեծամիտ ձայն էր տալիս.
– Ճամփա՛ տվեք, ե՛ս եմ գալիս՝
Իմ մեծ լողով հաղթ ու անշեղ,
Նավերն իմ դեմ ի՞նչ են՝ տաշեղ...
Սակայն դեմից եկող մի նավ
Քմծիծաղով նրան ասաց.
– Ո՛վ բթամիտ, դատա՛րկ տակառ,
Կյանքը գործ է և ոչ թե ճառ.
Դու որպեսզի ապացուցես,
Որ իսկապես լողալ գիտես
Եվ հզոր ես՝ մեծ ուժի տեր,
Պիտի լողաս հոսանքն ի վեր...

1. Ի՞նչ մեծամիտ ձայն էր հնչում տակառից:
2. Ի՞նչ արձագանք լսվեց նավից:
3. Ինչպե՞ս ես հասկանում «Կյանքը գործ է և ոչ թե ճառ» տողը:
4. Մեկնաբանի՛ր «Պիտի լողաս հոսանքն ի վեր...» արտահայտությունը և դատի՛ր՝ կարո՞ղ էր, արդյոք, տակառը հոսանքն ի վեր լողալ:
5. Ինչպիսի՞ մարդկանց են խորհրդանշում տակառը և նավը:

1

ա) Տրված բառաշարքից ընտրի՛ր հաղթ, անշեղ բառերի հոմանիշները.

հաղթական, ուղիղ, չշեղվող, ուղղագիծ, մեծամիտ, սրընթաց, հզոր, ուղղամիտ, զորավոր:

բ) Ընտրված հոմանիշներից երկուսի համար ընտրի՛ր համապատասխան գոյականներ:

2

Բառքամոցի

Դատարկախոս բառով ընկերոջդ հետ խաղա՛ «բառքամոցի»:

3 Փակագծերից ընտրիր ճիշտ բառը և լրացրու նախադասությունները: Գրիր տետրում:

- Մեկ ժամը .... վայրկյան է: (վացուն, վաթսուն)
- Մեկ դարը .... տարի է: (հարուր, հարյուր)
- ....ը բաղկացած է ութ արմատից և սուն ածանցից: (ութսուն, ութանասուն)
- ....ն ոչ թե օղակ է չնչին, այլ նշանն է ոչնչի: (զերո, զրո)

4 Առածների մասերը խառնվել են: Վերականգնիր առածները և գրիր:

ՈՒՆՔը շինելու տեղ գլորվեց խուփը*:
Կուլա՛, դո՛ւ լսիր ամանում չկա:
Կո՛ւժ, քեզ ասեմ, անունը կա:
Գտավ պուտուկը*՝ աչքը հանեց:

Առած

Դատարկ տակառի ձայնը բարձր կլինի:

5 ԶՎԱՐԹ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդիկ հաշվել սովորել են մատներով: Կան լեզուներ, որոնցում 5-ը նշանակում է մեկ ձեռք, 10-ը՝ 2 ձեռք, 20-ը՝ ձեռքեր ու ոտքեր կամ մարդ:

Օրինակ՝ 38 = 20 + 10 + 5 + 3 = մեկ մարդ + երկու ձեռք + մեկ ձեռք + երեք մատ:

Նույն կերպ գրիր հետևյալ թվերը.

125, 205, 46, 127:

6 Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ՝ օգտագործելով հոսանքն ի վար, հոսանքն ի վեր արտահայտությունները:

Ես ճա՞ռ ասեմ,
Թե՞ զանգ կախեմ...

Կարդա՛ Աթաբեկ Խնկոյանի «Մկների ժողովը»:

Ինչպես մի շերեփ ջուրը հեղեղ դարձավ:

Բոլորդ միասին և մի կողմի վրա ձգեք, որ քարը տեղից շարժվի:

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ

ԱՅՐԻ ԿԻՆԸ ԵՎ ՈՐԴԻՆ

Մի այրի կին ուներ տասը այծ և մի որդի: Եվ ամեն օր որդին այծերը տանում էր արոտ, և մայրն ամեն օր մի շերեփ ջուր էր լցնում կաթի մեջ և փոխ էր տալիս հարևաններին: Եվ որդին մորն ասաց.

– Ինչո՞ւ ես այդպես ջուր լցնում կաթի մեջ և փոխ տալիս հարևաններին:

Մայրն ասաց.

– Որդի՛, մեր կաթը քիչ է, դրա համար եմ անում, որ մեր կաթը մի քիչ ավելի լինի, որ ձմռանը մեզ թացան լինի:

Իսկ մի օր, երբ որդին այծերն արոտ էր տարել, երկնքում ծնվեց մի փոքր ամպ, և անձրև եկավ, և հեղեղ եղավ, և այծերը սրբեց-լցրեց գետը: Որդին տուն եկավ արևով և դատարկ և ձեռքին՝ միայն փայտը: Մայրն ասաց.

– Որդի՛, ո՞ւր են այծերը, և ինչո՞ւ դու այսօր արևով եկար:

Որդին ասաց.

– Մայրի՛կ, այն մի շերեփ ջուրը, որ խառնում էիր կաթին և փոխ տալիս* հարևաններին, հավաքվեց և հեղեղ դարձավ և եկավ մեր այծերը տարավ, լցրեց գետը:

1. Ի՞նչ էր անում այրի կինը և ինչպե՞ս բացատրեց իր արարքը:
2. Ինչո՞ւ որդին շուտ եկավ տուն և ի՞նչ պարզաբանում տվեց մորը:
3. Ի՞նչ կցանկանաս ասել այրի կնոջը և նրա տղային:
4. Քո կարծիքով՝ իսկապես մի շերեփ ջո՞ւրն էր հեղեղ դարձել, թե՞...
5. «Առյուծն ու մուկը» առակում հիմնական միտքն արտահայտված է նրա վերջին երկու տողում: Այս առակի համար ինքդ հորինիր այդ տողերը:

1 **Փոխակերպում**

Կաթ – □աթ – թ□թ – □ուր – ջուր:

2 Կարդա՛ նախադասությունը, գտի՛ր ավելորդ բառերը: Գրի՛ր ճիշտ ձևով:

Արան ու Աշոտը իրար հետ միասին գնում էին դպրոց:

Մի երիտասարդ պատանի ու մի ծեր ծերունի մտան անտառ:

Նոր բնակարանի համար մենք գնել ենք սեղան, բազմոց, կահույք, պահարան:

Խնդրանք

Ուսուցիչը.
– Մի շնչավո՛ր գոյական ասա:
Աշակերտը.
– Այծ:
– Մի անշո՛ւնչ գոյական ասա:
– Խեղդված այծ:

ԹԱՑԱՆ — ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ

Թացան նշանակում է կաթնեղեն, հատկապես՝ կաթ, մածուն, թան: Բառի արմատն է **թաց**-ը: Նկատի է առնվում այն, որ ուտելու ժամանակ հացը թաց էր արվում և ոչ թե ցամաք էր ուտվում:

Առած

Ազնիվ մարդու հացը չի կտրվի,
Անազնիվ վաստակը հեղեղը կտանի:

Եթե փորձես դու խաբել ուրիշին,
Լոկ քե՛զ կխաբես, մշտապես հիշի՛ր:

ԽԱՌՆԱԳԻՐ

3 Վերականգնի՛ր խառնագիրը և գտի՛ր, թե ինչն է թափվում երկնից և դառնում հեղեղ: Գրի՛ր այդ բառի հականիշները:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

սրբել
հեղեղ

4 Գրի՛ր մինչև 20 երկնիշ կենտ թվերը և դրանք դարձրո՛ւ դասական թվականներ:

Մի գնդակով երկու նապաստակ չես խփի:

ԵԶՈՊՈՍ

ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ՆԱՊԱՍՏԱԿԸ

Առյուծը գտավ քնած նապաստակին և ուզում էր խժռել, երբ հանկարծ տեսավ, որ կողքով փախչում է եղջերուն: Նապաստակին թողեց ու ընկավ եղջերվի հետևից, իսկ նապաստակն աղմուկից զարթնեց ու փախավ: Առյուծը շատ վազեց եղջերվի հետևից, բայց չկարողացավ բռնել և վերադարձավ դեպի նապաստակը: Բայց տեսնելով, որ նա էլ արդեն չքացել է, ասաց. «Տե՛ղն է ինձ, ձեռքիս որսը բաց թողեցի և դատարկ հույսի հետևից ընկա»:

Այդպես էլ որոշ մարդիկ, ընկնելով շատի հետևից, չեն նկատում, որ կորցնում են նաև իրենց ունեցածը:



1. Առյուծն ինչո՞ւ հանդիմանեց ինքն իրեն:

2. Ո՞րն է այս առակի հիմնական միտքը: Ըստ դրա հորինի՛ր մի պատմություն մարդկանց մասին:

1 (Ո՞ր) առյուծը (ինչպե՞ս) վազում էր եղջերվի հետևից:
(դանդաղաշարժ, հզոր, արագ, շնչակտուր, անզոր)

Բառաշարից ընտրի՛ր համապատասխան բառերը և տեղադրի՛ր նախադասության մեջ: Ըստ կազմության ինչպիսի՞ն են բառաշարի բառերը:

2 Խմբավորի՛ր թվականները. քանակական թվականները դարձրո՛ւ դասական և՝ հակառակը.

չորրորդ, երեք, տասը, իններորդ, իննսուն, երեսուն, քառասուն, տասնչորս, տասներեք, հարյուրերորդ, ութսուներորդ:

ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ

Զարմանալի է, բայց **չքանալ** բառն արմատ չունի. համենայն դեպս, այդպես է երևում: Հասկանալի է, որ բառը կազմված է **չիք** արմատից: Իսկ **չիք** բառի մեջ **չ**-ն և **ք**-ն ածանցներ են: Մնաց **ի**-ն, որն իրոք արմատ է, նշանակում է մի բան:

Իսկ **չքանալ** բառի մեջ **ի**-ն չկա, այն դարձել է **ը**, որն էլ չի գրվում:

3

Մտածի՛ր շարունակություն

Եթե առյուծը մռնչում է, ապա....

Եթե աքաղաղը ծուղրուղու է կանչում, ապա....

Եթե արագիլները չվում են, ապա....

Եթե շունը հաչում է, ապա....

Եթե կատուն «լվացվում է», ապա....

4

Ինչ կարող ես ճորինել ըստ նկարի: Պատմիր:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

եղջերու

փափչել

Մի ձեռքով երկու ձմերուկ չես բռնի:

Կարդանք մի խաղի մասին, որը սովորեցնում է ապրել:

Որքան շատ սովորես, այնքան շատ կհամոզվես, որ դեռ շատ բան ունես սովորելու:

ՌԱՖԱՅԵԼ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՇԱԽՄԱՏ

Շախմատ խաղալիս Գոռն ասաց. «Վաչե՛,
Գործերդ ոնց որ այնքան էլ լավ չեն»:
– Իսկ ինչո՞ւ, ա՛յ Գոռ, ի՞նչ է եղել որ,
Ես ունեմ երեք անցունակ զինվոր:
– Բայց իմ փղերը՝ խենթ ու համարձակ,
Նրանց կճզմեն հաստ ոտքերի տակ:
– Քո փղերը, Գո՛ռ, մեկտեղ չեն գործում,
Միմյանց պաշտպանել նույնիսկ չեն փորձում,
Իսկ զինվորներն իմ շատ են քաջարի,
Տե՛ս՝ ոնց են մեկտեղ ելել պայքարի:
Իսկ որտեղ որ կա սեր ու միություն,
Այնտեղ չի լինի երբեք պարտություն:

Տղաներից յուրաքանչյուրն ինչպե՞ս էր մեկնաբանում խաղը:

ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ

Մենք՝ հայերս, **շախմատ** բառը միայն վերջին ժամանակներում ենք գործածում: **Շախմատ = շախ + մատ**, որը նշանակում է մահ շահին (արքային):

Մենք նախկինում գործածել ենք **ճատրակ** բառը:

Խաղը հնարել են Հնդկաստանում անհիշելի ժամանակներում: **Ճատրակ**-ը կազմված է հին հնդկերեն **ճատր** (չորս) և **անգ** (մաս) բառերից և թարգմանվում է **քառանդամ** կամ **չորեքմասնյա**:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

համարյակ

երբեք

1 Գրի՛ր առակի հիմնական միտքը և դրան համապատասխան հիշի՛ր առածներ:

2 Հորինի՛ր մի պատմություն, որտեղ հաղթանակում են սերն ու միությունը:

Հիշի՛ր «Անտառն ու քամին»:

3 Խաղա՛ Վաչեի փոխարեն և հաղթի՛ր:

4 Քանի՞ խաղաքարով են շախմատ խաղում: Դրանցից քանի՞սն են զինվոր: Գրի՛ր բոլոր խաղաքարերի անվանումները: Դրանցով կազմի՛ր մի փոքրիկ պատմություն:

5 Լրացրու խաչբառը և ընդգծված սյունակում կկարդաս, թե հայերն ինչ բառ են գործածել շախմատ բառի փոխարեն:



1. Հայոց այբուբենի տառի անուն, որի թվային արժեքը 100 է:
2. Թագ ունեցող խաղաքար, որին կարող են մատ հայտարարել:
3. Հաղթանակ կամ պարտություն շախմատում:
4. Խաղաքար, որից ամենաշատը կա խաղատախտակի վրա:
5. Թեկուզ նա թագ ունի, բայց արքայի համար կզոհի իրեն:
6. Ե՛վ ջրում է լավ լողում, և՛ խաղատախտակի վրա:

ՈՒԶՈ՞Ւ ԵՍ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԼ

2006 թվականին Հայաստանի շախմատի հավաքականի վեց դյուցազուններ հաղթանակի բերկրանքով լցրին միլիոնավոր հայ սրտեր: Նրանք հաղթեցին բոլորին և աշխարհում առաջինը դարձան, բարձրացրին հայի դրոշը և հայի միտքը:

2008 թվականին կրկնվեց նույնը. շախմատի համաշխարհային օլիմպիադայում մենք դարձյալ առաջինն էինք: Մի՞թե հրաշք չէ: Մեկ անգամ ևս համոզվում ենք, որ երբ միասնական ենք և միակամ, ապա ուժեղ ենք և անպարտելի:

Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է:

Եղիշե Չարենց

ԱՄՓՈՓԻ՛Ր ԻՄԱՑԱԾԴ, ՍՏՈՒԳԻ՛Ր ԻՆՔԴ ՔԵԶ

1. Օգտվելով նկարներից և բառասյուներից՝ տետրում լրացրու աղյուսակը:

Առակի վերնագիրը								
Դատապարտելին								
Գովելին								

Դատապարտելին
թեթևամտություն
խարդախություն
մեծամտություն
անմիաբանություն
թերահավատություն
սնապարծություն
անհանդուրժողականություն
ագահություն

Գովելին
միասնություն
սակավապետություն
արդարություն
վճռականություն
երախտագիտություն
աշխատասիրություն
շիտակություն
համեստություն

2. Բուսական և կենդանական աշխարհից ընտրելով հերոսներ՝ հորինի՛ր առակ:

Հիշի՛ր «Առակի ծնունդը»:

3. Ամիսների շարքում որերորդն են հետևյալ ամիսները. դեկտեմբեր, հունվար, հունիս, օգոստոս, հուլիս, մարտ:

4. Գրի՛ր, թե այս տարի շաբաթվա որերորդ օրն է.
հունվարի 28-ը,
մայիսի 9-ը,
հունիսի 1-ը,
հուլիսի 5-ը,
սեպտեմբերի 21-ը:

Ի՞նչ տոներ են նշվում այդ օրերին: Ուրիշ ի՞նչ տոներ գիտես:

5 ՉՎԱՐԹ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐՃ ԱՄԻՍԸ

– Ամենակարճ ամի՛սն ասա,–
Հայկին դիմեց Սանասարը:
– Փետրվարն է,– ասաց Հայկը:
– Իսկ ես կասեմ մարտն է, մարտը:
Երկուսն էլ ճիշտ են, կարծես,
Իսկ թե ինչու, դու էլ գիտես:

ՅՈԹ ՍԱՐԻՑ, ՅՈԹ ՁՈՐԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ



Իհա՛րկե, կարելի է ամեն ինչ ասել, բայց կարելի՞ է ամեն ինչ ասել:

ԱՄԵՆԱԹԱՆԿԸ ՀԱՎԱՍԱՐՆԵՐԻ ՄԵՋ

(Հայկական հեքիաթ)

Մի թագավոր, որ իր երկրին կառավարիչ էր փնտրում, հանեց երեք միանման ոսկե արձանիկ, դրեց ի ցույց և ասաց.

– Ով այս միանման արձանիկների մեջ գտնի ամենաթանկը, նա էլ կլինի իմ երկրի կառավարիչը:

Սկսեցին գալ. հերթով մոտենում, առնում, տակուգլուխ նայում, տնտղում*, ոմանք կշռում էին, ոմանք չափսերն էին առնում, բայց երեք ոսկե արձանիկներն արտաքնապես ոչնչով չէին տարբերվում, կշռով էլ հավասար էին, հղկվածությամբ, գեղեցկությամբ՝ նույնը:

Եվ ահա, ի վերջո, հայտնվում է նաև մեր հեքիաթի իմաստունը:

Ասում է.

– Մի թե՛լ տվեք:

Թելն առնում է, մտցնում արձանիկներից մեկի ականջը: Թելի ծայրը մյուս ականջից դուրս է գալիս: Առնում է թելը, մտցնում երկրորդ արձանիկի ականջը: Թելի ծայրը դուրս է գալիս արձանիկի բերանից: Թելը մտցնում է երրորդ արձանիկի ականջը. ծայրը գնում, ներսում կորչում է, մնում է խորքերում:

– Սա՛ է,– ասում է,– հավասարների մեջ ամենաթանկը:

– Դե դրա բացատրությունն էլ տո՛ւր:

– Շատ լավ, թագավո՛ր,– ասում է իմաստունը:– Առաջինը նման է այն մարդուն, որի ականջից ինչ մտնում, մյուսից նույնությամբ դուրս է գալիս, լսածից ոչինչ չի ըմբռնում: Երկրորդը նման է այն մարդուն, որի ականջից մտածը լեզվի ծայրին է, դրան գաղտնիք հայտնել չի կարելի: Իսկ երրորդն էլ նման է այն մարդուն, որն իր ամեն լսածը խոր ըմբռնում է, պահում ներսում:

– Ապրե՛ս,– ասում է թագավորը, իսկ ժողովուրդը կանգնած լսում է:– Հենց դո՛ւ կլինես իմ երկրի կառավարիչը:

1. Ի՞նչ պայման դրեց թագավորը երկրի կառավարիչ ընտրելիս:
2. Իմաստունն ինչպե՞ս բացատրեց իր ընտրությունը:
3. Խմբում ընկերներիդ հետ քննարկի՛ր և հետևյալ բառերից ընտրի՛ր հոմանիշ զույգերն ու գրի՛ր առանձին շարքերով. չընկալել, խորհրդապահ, շատախոսել, գաղտնապահ, շաղակրատել, գաղտնամիտ, չըմբռնել: Այդ բառաշարքերն իմաստով բնագրի ո՞ր նախադասությունների հետ են կապվում: Կարդա՛:

1 Արտագրի՛ր միայն նախադասությունները: Կարդա՛ համապատասխան հնչերանգով:

Փայլող աստղեր
Աստղազարդ երկինք
Աստղերը փայլում էին երկնքում:
Երկնքի փայլող աստղեր
Որքա՜ն սիրուն են երկնքի աստղերը:
Ի՞նչ են հուշում աստղերը:
Վառվել երկնքի աստղեր
Վառվե՛ք, երկնքի՛ «աչքեր»:

2 ԲԱՌԸ՝ ԲԱՌԻ ՄԵՋ

Կառավարիչ բառի մեջ գտի՛ր այլ բառեր:

3 Գրի՛ր առարկաների հայերեն անվանումները:



4 ԲԱՌԱԳՈՒՄԱՐ

Գավաթ + որ = ...

Գտի՛ր ստացված բառի արմատը և ածանցը: Այդ ածանցով կազմի՛ր նոր բառեր:

5 Մի ականջից մտնել, մյուսից դուրս գալ:
Ականջից մտածը լեզվի ծայրին է:
Շատ գիտես, քի՛չ խոսիր:
Լռությունը ոսկի է:

Մեկնաբանի՛ր արտահայտությունները և դրանցից մեկի շուրջ ստեղծի՛ր մի հեքիաթ:

Եղի՛ր համբերող ու եղի՛ր ուշիմ.
Մի՛ շտապիր լսածդ ասել ուրիշին:

«Ով ալարի, ոչ դալարի»:

Պարզվում է, որ յոթ սարից, յոթ ձորից այն կողմ ոչ բոլորը գիտեն այս առածը:

ԹՈՂ ՈՒՐԻ՛ՇՆ ԱՆԻ

(Չինական հեքիաթ)

Ամայի ճանապարհով իրար հետևից քայլում էին երեք ճամփորդ: Եղանակն սկսեց վատանալ, ուժեղ քամի բարձրացավ, ձյուն տեղաց, բուք ու բորան սկսվեց: Քանի գնաց, բուքն ուժեղացավ, փոխվեց մրրիկի, իսկ մինչև ամենամոտիկ գյուղը դեռ ահագին ճանապարհ կար:

Ի՞նչ անեին ճամփորդները: Առջևից գնացողը որոշեց մտնել մի լքված տնակ և այնտեղ սպասել, մինչև եղանակը հանդարտվի: Երկրորդ և երրորդ ճանապարհորդներն էլ հետևեցին նրան:

Իջավ երեկոն: Ճամփորդները սաստիկ մրսեցին:

– Ի՞նչ ցուրտ է, դիմանալ չի լինում,– ասաց առաջինը:

– Ձեռքերս ու ոտքերս փայտացել են,– ասաց երկրորդը:

– Եթե այսպես շարունակվի, մենք բոլորովին կսառչենք,– ասաց երրորդը:

Հետո երեքն էլ լռեցին, բայց քիչ անց առաջինը նորից խոսեց.

– Եթե մի քիչ փայտ բերվի, կրակ կանենք, կտաքանանք:

– Այո՛, շա՛տ լավ կլիներ,– ասաց երկրորդը:

– Այո՛, այո՛, իհա՛րկե,– համաձայնեց երրորդը,– եթե փայտ բերվեր, կարելի էր այստեղ գիշերել:

Երեքն էլ միասին խոսում էին, բայց ոչ ոք տեղից չէր շարժվում, որ գնար փայտ բերեր: Իսկ սառնամանիքը գնալով սաստկանում էր:

Առաջին ճամփորդը դիմեց երկրորդին.

– Հարևա՛ն, գնա՛ փայտի: Ես կգնայի, բայց ոտքերս ցավում են, չեմ կարող:

Երկրորդն ասաց երրորդին.

– Փորս շատ է ցավում, դո՛ւ գնա փայտի:

Երրորդն էլ դիմեց առաջինին.

– Ավելի լավ է դո՛ւ գնաս, գլուխս պտտվում է, հազիվ եմ ոտքի վրա կանգնած մնում:

Երեքն էլ առողջ էին, բայց ամեն մեկը մտածում էր, որ մյուս երկուսը պետք է անեն այդ գործը:

Առաջինը մտածում էր. «Ես հո սրանց ծառան չեմ, որ փայտի գնամ»:

«Դուք չեք գնում, ես էլ չեմ գնա»,– մտածում էր երկրորդը:

«Ինչո՞ւ ես պետք է փայտի գնամ, թող ուրիշը գնա»,– մտածում էր երրորդը:

Արդեն կեսգիշեր էր, բուքը ոռնում էր, սառնամանիքը՝ սաստկանում, իսկ ճամփորդներից յուրաքանչյուրը մտածում էր. «Այլևս հնարավոր չէ դիմանալ այս սառնամանիքին, վերջապես ե՞րբ պետք է որևէ մեկը փայտի գնա»:

Նրանք շարունակում էին սառչել, բայց ոչ մեկը տեղից չէր շարժվում...

1. **Ի՞նչ պատահեց ճամփորդներին:**
2. **Տնակում ինչպե՞ս էր իրեն պահում նրանցից յուրաքանչյուրը:**
3. **Բնութագրի՛ր ճամփորդներին:**
4. **Ի՞նչ ես կարծում՝ ինչո՞ւ է հեքիաթն այդպես ավարտվում: Մ՞րն է հեքիաթի հիմնական միտքը:**
5. **Շարունակի՛ր հեքիաթը:**

ԱՉՔԻ ԱՌԱՋ

Մրրիկ երրորդ

1 Ինչ պատճառներ էին բերում ճամփորդները գործը չանելու համար: Ինչու՞ ընտրի՛ր ճիշտ տարբերակները և հիմնավորի՛ր հեքիաթի տողերով.

ծուլանում էին,
ուզում էին գործն ուրիշի վրա բարդել,
ինքնարդարանում էին,
իրոք տկար էին,
վախենում էին մթից,
մեծամիտ էին:

ԱՌԱՋԻՆ — ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ

Շատ ժողովուրդներ, հայերը՝ նույնպես, աջը համարել են լավ, բարի, հաջողություն բերող, իսկ ձախը՝ հակառակը: Օրինակ, ասում ենք. «Գործը աջ գնալ»՝ գործերը հաջող ընթանալ, «աջ ձեռք»՝ ամենավստահելին ու ամենահավատարիմը, և այլն:

Աջ բառից **առ** մասնիկով կազմվել է **առաջ** բառը: Իսկ ով առաջ է գնում՝ դառնում է առաջինը: Ուրեմն՝ մեր **առաջին** բառի արմատն է **աջ**-ը, որով շատ ուրիշ բառեր էլ են կազմվել՝ **առաջնորդ, հաջող, հաջողություն, հաջորդ,** և այլն:

2 Այս բնագիրն ընթերցելիս դու տեսար, որ հերոսները երբեմն հարցնում էին, երբեմն՝ հրամայում, երբեմն՝ բացականչում, երբեմն՝ հանգիստ պատմում:

Բնագրից դո՛ւրս գրիր մեկական նախադասություն, որտեղ ինչ-որ բան են հարցնում, ինչ-որ բան են հրամայում, ինչ-որ բան են բացականչում կամ ինչ-որ բան են պատմում:

3 Այս «ընկերներն» օգնեցի՞ն, որ դու ճիշտ հնչերանգով կարդաս նախադասությունները:


– Ինձ ճանաչո՞ւմ ես:

– Ճանաչի՛ր ինձ:

– Ճանաչեցի՛ր ինձ:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

4 ա) Հեքիաթը բաժանիր այնպիսի մասերի, որոնք վերնագրվեն այսպես.

«Բուքն սկսվեց»:

«Ճամփորդները սաստիկ մրսեցին»:

«Ճամփորդները վիճում են»:

«Ծույլերը պատժվեցին»:

բ) Այդ համառոտ նախադասությունները լրացրո՛ւ ինչպիսի՞, ինչպե՞ս, որտե՞ղ հարցերին պատասխանող անդամներով և գրի՛ր տետրում:

Այս առածները չգիտեին ճամփորդները: Դու իմացի՛ր:

- Ես՝ աղա, դու՝ աղա, մեր աղունը ո՞վ աղա:
- Գործի անունը տալիս գլխի ցավը բռնում է:
- Ուրիշի ձեռքին նայողը սոված կմնա:
- Մարդ ինչ որ իր ձեռքով կանի, աշխարհը չի անի:
- Ուրիշի ձեռքով ապուր ուտողի բերանը կվառվի:

Ավելի լավ է խավարի մեջ մի մոմ վառել, քան թե անվերջ խոսել խավարի դեմ:

Գիտե՞ս՝ սերն ու միությունը թեթևացնում են ամեն ծանրություն: Հենց այդ մասին է կորեացի եղբայրների հեքիաթը: Կարդանք:

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐ

(Կորեական հեքիաթ)

Մի ծերունի երկու տղա ուներ: Մեծ տղան ծնողների հետ էր ապրում, իսկ փոքրը՝ գյուղի ծայրին: Երկուսն էլ ընտանիքի տեր էին, երկուսն էլ՝ աղքատ:

Թեև երկու եղբայրն էլ շատ հոգսեր ունեին, սակայն համերաշխ էին իրար հետ, սիրում ու հարգում էին միմյանց:

Մի անգամ աշնանը մեծ եղբայրը հաշվեց իր ցորենի պաշարը և մտածեց. «Իմ ցորենը շատ է՝ ամբողջ տասը պարկ, իսկ եղբորս բերքն ավելի քիչ է: Պետք է օգնել նրան»:

Երբ մութն ընկավ, նա շալակն առավ ամենամեծ պարկը և գնաց դեպի կրտսեր եղբոր տունը: Ճանապարհին նա հանդիպեց մի մարդու, սակայն, քանի որ մութ էր, չճանաչեց նրան:

• Քո կարծիքով՝ ո՞վ էր այդ մարդը և ի՞նչ էր անում այդ ուշ ժամին:

Նա պարկը դրեց եղբոր տանը և շտապ վերադարձավ, որ մի պարկ էլ տանի: Սակայն երբ տուն հասավ, զարմացավ՝ տեսնելով, որ առաջվա պես տանը տասը պարկ ցորեն կա: Ժամանակ չուներ մտածելու: Նորից մի պարկ ցորեն շալակն առավ ու գնաց դեպի եղբոր տունը:

Ճանապարհին նա նորից մի մարդ տեսավ, բայց մթան մեջ չճանաչեց նրան: Երբ տուն հասավ, կրկին զարմանքով տեսավ, որ իր ունեցած տասը պարկն էլ նույնությամբ իրենց տեղում են: «Ա՛յ քեզ հրաշք»:

• Ի՞նչ ես կարծում՝ որտեղի՞ց հայտնվեցին այդ պարկերը:

– Եթե այդպես է,– վճռեց նա,– երկու պարկ էլ տանեմ եղբորս:

Եվ նա ծանոթ ճանապարհով նորից գնաց դեպի գյուղի մյուս ծայրը: Այդ ժամանակ լուսինն արդեն դուրս էր եկել ամպերի տակից և լուսավորել ճանապարհը: Մեծ եղբայրը հազիվ էր անցել ճանապարհի կեսը, երբ տեսավ, որ դիմացից մի մարդ է գալիս՝ իր պես պարկը շալակին:

Երբ այդ մարդը մոտեցավ, մեծ եղբայրն իսկույն ճանաչեց նրան. փոքր եղբայրն էր:

– Այդ ո՞ւր, եղբա՛յր,– հարցրեց նա:– Ուշ է, գնա՛ տուն:

• Գուշակի՛ր՝ ո՞ւր էր գնում կրտսեր եղբայրը:

– Իսկ դո՞ւ ուր ես գնում այս ուշ ժամին,– հարցրեց կրտսեր եղբայրը:

Պարզ էր, որ կրտսեր եղբայրը ևս նույն երեկոյան որոշել էր իր մեծ եղբորն օգնել: Նրանք միաժամանակ սկսել էին միմյանց տուն ցորեն տանել: Ահա թե ինչու ցորենի պարկերը չէին պակասում:

Եղբայրները գոհունակությամբ գրկախառնվեցին: Ցորենի պարկերը ծանր էին, բայց թեթև էին եղբայրների հոգիները:

Չէ՞ որ նախքան հեքիաթն ընթերցելը մենք իմացանք, որ....

1. Բնութագրի՛ր հեքիաթի հերոսներին:

2. Ի՞նչ առածներ կարող ես հիշել, որոնք համապատասխանեն հեքիաթի իմաստին:

3. Այս հեքիաթը համեմատի՛ր չինական «Թող ուրի՛շն անի» հեքիաթի հետ:

1 Բնագրի չորրորդ պարբերությունից դո՛ւրս գրիր ի՞նչ, ինչպիսի՞ և ի՞նչ արեց հարցերին պատասխանող բառերը:

2 Բնագրից ընտրի՛ր և կարդա՛ այն նախադասությունները, որտեղ գործածված են գյուղի ծայր, թեթև հոգի արտահայտությունները: Այդ արտահայտություններով կազմի՛ր ուրիշ նախադասություններ:

ԸՆՏԱՆԻՔ — ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ —

Բառերի մեջ շատ զարմանալի գաղտնիքներ են թաքնված: Այսօր թվում է, թե **ընտանիք** բառը պարզ է: Իրականում այն կազմված է **ընդ** մասնիկից և **տուն** բառից՝ **ընդտանի**, այսինքն՝ մի տան մեջ, միասին, ընտանիք՝ արյունակից մարդկանց (ծնողներ, երեխաներ և այլն) միասին ապրող խումբ, տան անդամներ: Նույնպիսի կազմություն ունի **ընկեր** բառը՝ **ընդ** + **կեր**, այսինքն՝ միասին ուտող:

3

Դու տեսնում ես, որ առաջին նկարում պատմում են, երկրորդում հարցնում, երրորդում հրամայում, չորրորդում բացականչում:

Ըստ յուրաքանչյուր նկարի՝ կազմի՛ր մի նախադասություն և կարդա՛ համապատասխան հնչերանգով:

U Ըստ արտասանության երանգի՝ նախադասությունները լինում են՝ պատմողական, հարցական, հրամայական, բացականչական:

4 Բնագրից ընտրի՛ր նախադասություններ և գրի՛ր համապատասխան նշանների դիմաց:

5 Կրակն ընկնել արտահայտությունը կիրառի՛ր նախադասության մեջ ուղիղ և փոխաբերական իմաստներով:

Օրինակ: Կացինը կրակն էր ընկել գյուղացու մեղքով:

Վարորդը կրակն էր ընկել հին ավտոմեքենայի ձեռքը:

Առած

Եղբայրը եղբոր աղբյուրն է,
Որ ծարավանա՝ պաղ ջուրն է:

«Ուս ուսի որ տանք,
Սարեր շուռ կտանք»:

Հիշի՛ր
«Արան ու Շարան»:

ՋԱՆՆԻ ՌՈԴԱՐԻ

Յուրաքանչյուր կենդանի խոսում է իր ցեղակիցներին հասկանալի լեզվով: Բայց արի ու տես, որ մեր հեքիաթի հերոս մկանը իր ցեղակիցները չեն հասկանում:

Ցանկացած դպրոցում կգտնվի մի տղա, որը կհարցնի, թե ինչպես են հեքիաթներ հորինում: Ասեմ, որ թե՛ մենակ, թե՛ ամբողջ դասարանով կարող եք դա անել:

ԳՐՔԻՑ ՓԱԽԱԾ ՄԿՆԻԿԸ

Մկնիկն ամբողջ կյանքում ապրել էր բարակ, էժանագին գրքույկում, որի մեջ նկարներով փոքրիկ պատմություններ կային: Մկնիկը շատ էր ձանձրացել և մի օր որոշեց փոխել բնակարանը: Նա ուզում էր գտնել այնպիսի տուն, որի թուղթը բանի պետք լիներ, գոնե նրանից պանրի հոտ գար: Նա հավաքեց ուժերն ու, որ չթռա՛վ, հայտնվեց իրական կյանքում՝ իսկական մկների մոտ:

– Սքաո՛ւշ,– շատ վախեցավ մկնիկը. կատվի հոտ էր առել:

– Ի՞նչ ասաց սա,– զարմացան կողքի մկները, որ ոչ մի բան չէին հասկացել նրա ասածից:

– Սփլո՛ւմ, բա՛խ փլում,– ասաց մկնիկը: Խեղճը միայն իր գրքի կենդանիների լեզվով էր խոսում:

– Երևի ուրիշ երկրից է եկել,– ասաց մի թոշակառու մուկ, որը երկար ժամանակ մի մեծ նավի վրա էր ծառայել:

Նա փորձեց անգլերեն խոսել նորեկի հետ: Մկնիկը ոչինչ չհասկացավ ու ասաց.

– Սիխի փնիշ, բրոի՛ք:

– Ո՛չ, սա անգլիացի չէ,– ասաց «նավաստին»:

– Բա ո՞վ է նա, որտեղի՞ց է հայտնվել:

– Դե արի՛ ու գլո՛ւխ հանիր, թե ով է:

Ու խեղճ մկնիկի անունը դրեցին Արի ու գլուխ հանիր:

Մկները միշտ խաղում էին նրա հոգու հետ, ձեռք առնում.

– Լսի՛ր, ա՛յ Արի ու գլուխ հանիր, դու ի՞նչ պանիր ես սիրում:

– Սփլինգ, քրոն սիսիցաիր,– պատասխանում էր գրքի մկնիկը:

– Դե լավ, բարի՛ գիշեր,– ծիծաղում էին մկները: Իսկ ամենափոքրերը քաշում էին նրա պոչը, որ բարկացնեն ու վրան ծիծաղեն:

– Սոո՛ւնգ, սփլաշ սքուա՛փ:

Մի անգամ մկները ջրաղաց գնացին, որտեղ պարկերով ալյուր կար: Նրանք ծակեցին պարկերը և սկսեցին ալյուր խժռել: Լսվում էր մկների ատամների համերաշխ խրթխրթոցը.

– Խը՛րթ, խը՛րթ, խը՛րթ:

Գիտե՞ք՝ ուտելիս մկներն այդպիսի ձայն են հանում: Բայց արի ու տես, որ գրքի մկնիկի ատամների ձայնն էլ էր տարբերվում մյուսների ատամների ձայնից:

Համեմատիր նկարի և բնագրի բովանդակությունները, նշիր տարբերությունները:

– Քրե՛ք, սքրե՛ք, սրե՛ք:

– Լսի՛ր, գոնե մկնավարի ուտե՛լ սովորիր,– փնթփնթում էր «նավաստի» մուկը:– Եթե դու նավի վրա լինեիր, քեզ վաղուց ծովը նետած կլինեին: Ախր քո չփչփոցը զզվելի է:

– Քրենգ,– պատասխանեց մկնիկն ու կրկին մտավ պարկի մեջ՝ ալյուր ուտելու:

«Նավաստին» նշան արեց, ու բոլորը սուսուփուս հեռացան ջրաղացից՝ գրքի մկնիկին թողնելով բախտի քմահաճույքին: Նրանք համոզված էին, որ սա չի գտնի տունդարձի ճանապարհը: Իսկ մկնիկը, էշի ականջում քնած, շարունակում էր ալյուր խժռել: Երբ նկատեց, որ մենակ է մնացել, արդեն շատ էր մութ. ինչպե՞ս տուն գնար: Մկնիկը որոշեց գիշերել ջրաղացում: Նա արդեն ննջում էր, երբ մթության մեջ երկու դեղին կրակ փայլեց, լսվեց չորքոտանի որսորդի ոտքերի թփթփոցը. դա կատուն էր:

– Սքաո՛ւշ,– սարսափած ծվաց մկնիկը:

– Գրագրա՛ն,– պատասխանեց կատուն:

Պարզվեց, որ նա էլ էր գրքից: Իսկական կատուները նրան դուրս էին արել, որովհետև նա չէր կարողանում սովորական «միաու» ասել: Վտարված մուկն ու կատուն երդվեցին երբեք չբաժանվել: Ամբողջ գիշեր նրանք զրուցում էին իրենց գրքային լեզվով ու շատ լավ էլ հասկանում էին իրար:

1. Որտե՞ղ էր ապրում մկնիկը և ինչո՞ւ որոշեց փոխել իր բնակարանը:

2. Շատ հետաքրքրական արկածներ պատահեցին մկանը.
- հանդիպում և զրույց ցեղակիցների հետ,
- ցեղակիցների վերաբերմունքը,
- կյանքը ջրաղացում:

Վերընթերցի՛ր համապատասխան հատվածները և պատմի՛ր:

3. Ինչո՞ւ մկանը չէին հասկանում իր ցեղակիցները, և ինչո՞ւ նրան հասկացավ գրքակից կատուն:

4. Քո կարծիքով՝ մուկն ու կատուն ինչպե՞ս էին հայտնվել գրքում:

1 Ի՞նչ էին խոսում մուկն ու կատուն: Ստեղծե՛ք երկխոսություն և կարդացե՛ք համապատասխան հնչերանգով:

2 Նկարագրի՛ր մի դեպք, երբ դու կամ որևէ մեկը հայտնվել է նման իրավիճակում:

3 Վերականգնի՛ր «խանդված» առածները: Գրի՛ր բնագրին համապատասխան առածը:

Մկան մահ:

Քան ոչխարի մի հոտը:

Հազար կա՝ մեկ չարժե:

Կատվի խաղ՝

Էծը էծին ավելի լավ է,

Մեկ կա՝ հազար արժե,

4 ԴԱՐՁՎԱԾՆԵՐ

Բնագրում օգտագործված ՈՐ երկու դարձվածներն են նկարված:

Դու գիտես, որ «նմանը նմանին է սիրում», բայց բոլորն իրար նման չեն. ընդունի՛ր նրանց այնպես, ինչպիսին կան:

Կառլո հայրիկը փայտից մի տիկնիկ է պատրաստում, անունը դնում Բուրատինո: Բուրատինոն դառնում է աշխույժ, արկածասեր, արդարամիտ ու ազնիվ մի մարտիկ:

Տիկնիկային թատրոնի չար ու դաժան տնօրեն Կարաբաս Բարաբասն ուզում է Բուրատինոյին էլ խաբեությամբ տանել իր տիկնիկային թատրոնը և դաժանաբար աշխատեցնել:

Սակայն Բուրատինոն փախչում է նրանից, բազմաթիվ արկածների հանդիպում, ընկնում է հիմարների աշխարհը: Մի օր էլ նրան նետում են գետը, բայց նա փայտից էր ու չէր խեղդվի: Հենց գետում էլ Տորտիլա կրիան նրան տալիս է Ոսկե բանալին: Բուրատինոն չգիտեր, թե դա ինչ բանալի է և ինչու է Կարաբաս Բարաբասը փնտրում այն:

Այստեղ դու կկարդաս, թե Բուրատինոն ինչպես է կարողանում Կարաբաս Բարաբասից կորզել Ոսկե բանալու գաղտնիքը:

Իսկ գաղտնիքն այն էր, որ Կառլո հայրիկի խցում՝ նկարված օջախի հետևում, գաղտնի թատրոնի դուռն էր, որտեղ բոլորը երջանիկ էին՝ և՛ մարդիկ, և՛ տիկնիկները:

Ես հիշեցի իմ հին բարեկամ Բուրատինոյին և որոշեցի ձեզ պատմել այդ փայտե մարդուկի անսովոր պատմությունը:

ԱԼԵՔՍԵՅ ՏՈԼՍՏՈՅ

ԲՈՒՐԱՏԻՆՈՆ ԻՄԱՆՈՒՄ Է ՈՍԿԵ ԲԱՆԱԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

Տիկնիկային թատրոնի դաժան տնօրեն Կարաբաս Բարաբասը պանդոկատիրոջն* ասաց.

– Այս գինին անպետք է, լցրո՛ւ այն փարչից*,– և ոսկորով ցույց տվեց այն փարչը, որի մեջ նստած էր Բուրատինոն:

– Սինյո՛ր, այդ փարչը դատարկ է,– պատասխանեց ճաշարանատերը:

– Սո՛ւտ ես ասում, ցո՛ւյց տուր:

Ճաշարանատերը փարչը վերցրեց և շուռ տվեց: Բուրատինոն ամբողջ ուժով սեղմվեց փարչի պատերին, որ վայր չընկնի:

– Այդ դեպքում փարչը դի՛ր սեղանին, մենք մեջը ոսկոր կլցնենք:

Եվ Բուրատինոյի գլխին սկսեցին կրծած ոսկորներ ու հացի չորուկներ տեղալ:

Կարաբաս Բարաբասը կուշտ խմելուց հետո ձեռքը խփեց սեղանին ու ասաց.

– Հենց գտա Բուրատինոյին, նրանից կխլե՛մ Ոսկե բանալին:

Պանդոկապետն ասաց.

– Իզուր եք ձեզ հոգնեցնում որոնումներով: Ես հիմա կկանչեմ երկու ճարպիկ տղաների, նրանք կխուզարկեն ամբողջ անտառը և Բուրատինոյին քարշ կտան այստեղ:

– Լա՛վ: Ուղարկի՛ր տղաներին,– ասաց Կարաբաս Բարաբասը:

Այդ ժամանակ Բուրատինոն փարչի խորքից երգեցիկ ձայնով կանչեց.

– Բա՛ց արա գաղտնիքը, դժբա՛խտ, բա՛ց արա գաղտնիքը...

Կարաբաս Բարաբասը, հանկարծակիի եկած, ատամները վախից չխկացրեց:

– Բա՛ց արա գաղտնիքը,– փարչի խորքից նորից լսվեց խորհրդավոր ձայնը,– թե չէ այդ աթոռից չես իջնի այլևս, դժբա՛խտ:

Կարաբաս Բարաբասը փորձեց վեր թռչել, բայց չկարողացավ նույնիսկ շարժվել:

– Ի-ի-ի՞նչ գ... գաղ... տնիք,– կակազելով հարցրեց նա:

Ձայնը պատասխանեց.

– Ոսկե բանալու գաղտնիքը:

Կարաբաս Բարաբասի ծնոտը սարսափից կախվեց:

– Որտե՞ղ է դռնակը, որտե՞ղ է դռնակը,– նվաց ձայնը, որ նման էր աշնանային գիշերը ծխնելույզի մեջ աղմկող քամու ձայնի...

– Կասե՛մ, կասե՛մ, լռի՛ր, լռի՛ր,– շշնջաց Կարաբաս Բարաբասը:– Դռնակը ծեր Կառլոյի խցում է, նկարված օջախի հետևում...

Հազիվ էր նա արտասանել այս խոսքերը, երբ ներս մտավ պանդոկապետը.

– Ա՛յ, վստահելի տղաներ են, սինյո՛ր, նրանք փողով սատանաներին անգամ ձեզ մոտ կբերեն...

Եվ նա ցույց տվեց շեմքին կանգնած Ալիսա աղվեսին ու Բազիլիո կատվին:

Աղվեսը հարգանքով հանեց իր հնամաշ գլխարկը:

– Սինյո՛ր Կարաբաս Բարաբաս, նվիրեցե՛ք մեզ տասը ոսկի, և մենք սրիկա Բուրատինոյին ձեզ կտանք առանց տեղից անգամ շարժվելու:

Կարաբաս Բարաբասը ձեռքը կոխեց մորուքի հետևում գտնվող բաճկոնակի* գրպանը և տասը ոսկեդրամ հանեց:

– Ահա՛ փողերը: Իսկ ո՞ւր է Բուրատինոն:

Աղվեսը մի քանի անգամ փողերը հաշվեց, հառաչելով կեսը տվեց կատվին և ասաց.

– Նա այդ փարչի մեջ է, սինյո՛ր, ձեր քթի տակ...

Կարաբաս Բարաբասը սեղանից վերցրեց փարչը և կատաղած խփեց քարե հատակին: Փարչի կտորտանքի ու կրծած ոսկորների միջից դուրս թռավ Բուրատինոն: Մինչ բոլորը շշմած, բերանները բաց կանգնած էին, նա պանդոկից նետի պես դուրս սլացավ բակ՝ ուղիղ աքլորի մոտ, որը հպարտորեն մերթ մեկ, մերթ մյուս աչքով նայում էր մի որդի:

– Այդ դո՛ւ ինձ մատնեցիր, դո՛ւ, կոտլետի պառաված միս,– քիթը կատաղի վեր քաշելով՝ ասաց Բուրատինոն:– Դե, հիմա ճղի՛ր ինչքան ուժ ունես...

Եվ նա պինդ կպավ աքլորի գեներալական պոչին: Աքլորը, ոչինչ չհասկանալով, թևերը ցցեց և սկսեց փախչել: Բուրատինոն, նրա պոչից կախված, թռավ մինչև սարի տակ, կտրեց-անցավ ճանապարհը և դաշտով սլացավ դեպի անտառ:

1. Ի՞նչ էր անում Կարաբաս Բարաբասը պանդոկում:

2. Ոսկե բանալու գաղտնիքն ինչպե՞ս իմացավ Բուրատինոն:

3. Ովքե՞ր խոստացան գտնել Բուրատինոյին և ինչպե՞ս գտան:

4. Ի՞նչ հնարամտությամբ Բուրատինոն ազատվեց հետապնդողներից: Կարդա՛ համապատասխան հատվածը:

5. Ինչո՞ւ էին համագործակցում Կարաբաս Բարաբասը, Ալիսա աղվեսը և Բազիլիո կատուն: Կարդա՛ նրանց բնութագրող տողերը:

6. Քո կարծիքով՝ ինչո՞ւ էին բոլորն ուզում ձեռք բերել Ոսկե բանալին:

Ս Պատմելու ձևով ասված նախադասությունը կոչվում է պատմողական նախադասություն:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

գաղտնիք

1 Հեքիաթում նկարագրված դեպքերի շուրջ կազմիր մի քանի պատմողական նախադասություն և գրիր: Սկսիր այսպես.

1. Կարաբաս Բարաբասը պանդոկում հանկարծ գտավ Բուրատինոյին:

2. .....

2 Ինչ հարցեր կտաս, որոնց պատասխանները լինեն հետևյալ պատմողական նախադասությունները: Գրիր:

Ո՛չ, ես վախենում եմ:
Այո՛, ես դա կարող եմ:
Ես դժվարանում եմ խոստովանել:
Այո՛, ինձ համար հաճելի է:

Օրինակ, առաջին նախադասության համար հնարավոր են այսպիսի հարցեր.
Դու մենակ կգնա՞ս անտառ:
Բարձր աշտարակից կթռչե՞ս ջրավազանի մեջ:
Դու չմուշկներով կսահե՞ս սահադաշտում:

Դու գրեցիր հարց պարունակող նախադասություններ:

3 Գտիր, թե ինչ կենդանիներ են պատկերված նկարում: Ճիշտ լրացրու խաչբառը և կտեսնես, թե ով է թաքնվել կենդանիների մեջ (իտալերեն նշանակում է փայտե տիկնիկ):

		ու	
			տ
ա			
		ու	
	ու		

4 ԶՎԱՐԹ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Երեք ընկեր, չորս սկյուռ

Երեք ընկերով՝ Գոռը, Սահակը
Ու Վաղարշակը, ուրախ երգելով,
Անտառ գնացին օրը ցերեկով:
Ծառի փչակում տեսան չորս սկյուռ,
Որ թաքնվեցին բնի մեջ իսկույն:
Իսկ եթե միայն Գոռն անտառ գնար,
Նա քանի՞ սկյուռ կտեսներ ծառին.
Եղի՛ր ուշադիր, չխաբվե՛ս բառին:

Չարերը որքան էլ համախմբվեն, միևնույն է, բարին միշտ հաղթում է:

Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ կար մի թագավորություն, որտեղ օձն իր պորտով, հավքն իր թևով չէր եղել: Եկեք մենք համարձակ մտնենք և բացահայտենք սև արկղի գաղտնիքը:

Այս աշխարհում գունավոր
Տոն է ապրած ամեն օր:

ԷԴՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ

ՍԵՎ ԱՐԿՂԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Կա՛ր, և հաստատ կար, մի դաժան թագավոր: Նրա իշխանության մեջ մարդը վախենում էր մարդուց, ձին՝ ձիուց, ծաղիկը՝ ծաղկից: Օձն իր պորտով, հավքն իր թևով չէին համարձակվում մտնել դաժան թագավորի տիրապետությունը: Մի անգամ նրա զորավարն ասաց.

– Օ՛, պայծառափայլ, արեգնատեսք, ամենազո՛ր տեր, հրաշալի բան եմ մտածել:

Թագավորը, ձեռքերը շփելով, ժպիտը երեսին ասաց.

– Դե, շո՛ւտ ասա, թե չէ ինչքան ժամանակ է ձանձրանում եմ, Ցախաքլո՛ր:

Թագավորն այդպես էր կոչում արքունիքի բոլոր անձանց, որովհետև հավես չուներ հիշելու նրանց անունները:

Եվ զորավարը, հաճույքից դողալով, ասաց.

– Ուրեմն այսպես. կպատրաստենք մի սև, փոքրիկ արկղ, նրա մեջ ոչինչ չենք պահի և կկանչենք երկրի իմաստուններին, թող գուշակեն՝ ի՞նչ կա և չկա արկղի մեջ: Համոզված եմ՝ նրանցից ոչ մեկը ճշգրիտ չի պատասխանի և, խնդրեմ, կցրենք ձեր ձանձրույթը, այսինքն՝ կգլխատվեն բոլորը: Հավատացե՛ք, Ձերդ մեծությանը միայն նրանցից է վտանգ սպառնում:

Թագավորը ցուցամատը դրեց ճակատին, մի պահ լռեց, իբր խորհում է, և ասաց.

– Վաղը երեկոյան բոլոր իմաստուններն այստե՛ղ լինեն: Գնահատում եմ հնարանքդ, Ցախաքլո՛ր, արի՛ կտտացնեմ գլխիդ, մտածող գլուխ է:

Զորավարը ոգևորված թռչկոտեց՝ շոյելով կտտոցներից խառնված մազերը:

Հաջորդ օրը թագավորը բազմել էր գահին, նրա առջև սև արկղն էր: Ծեր իմաստունները հերթով մոտենում, փորձում էին գուշակել, ապա գլխիկոր հեռանում կարմրազգեստ դահճի ուղեկցությամբ:

Թագավորի առջև կանգնեց վերջին, ամենագիտուն իմաստունը: Թագավորը հորանջեց ու ասաց.

– Ո՛վ ամենագիտուն, ես էլ մարդ եմ, քունս տանում է, վաղն առավոտյան կհավաքվենք գուշակությունդ լսելու:

Իմաստունին զինվորներն ուղեկցեցին պալատի բանտախուց, որպեսզի որևէ մեկի հետ չկարողանա զրուցել:

Իմաստունը երկար-բարակ խորհեց, հազար բան գուշակեց, մինչև գտավ իր փնտրածը:

Քնելուց առաջ քթի տակ մրմնջաց. «Եթե թագավորը դաժան է, ուրեմն՝ վախկոտ է»:

Առավոտյան թագավորական դահլիճում նույն պատկերն էր. թագավորը՝ գահին, սև փոքրիկ արկղը՝ սեղանին, մեծամեծներն ու նրանց կանայք՝ դահլիճում:

Բեմ բարձրացավ ծեր իմաստունը, ողջունեց թագավորին ու սպասեց:

– Դե՛, գուշակի՛ր, ամենագե՛տ, ի՞նչ կա այս փոքրիկ արկղի մեջ,– ասաց թագավորը,– եթե ճշգրիտ գուշակես, թագավորությանս կեսը քեզ կտամ:

Իմաստունը ծանրախոհ նայեց արկղին և բառ առ բառ արտաբերեց.

– Գիշերը երազ տեսա: Երազում Ձերդ մեծության սիրելիները՝ զորավարն ու վեզիրը, խորհուրդ էին անում, թե ինչպես սպանեն Ձեզ: Զորավարն առաջարկեց այս փոքրիկ արկղի մեջ մահացու թունավոր ճանճ թաքցնել, այնպիսի ճանճ, որը միայն թագավորներին է խայթում: Վեզիրը համաձայնեց, և գիշերն արկղի մեջ գաղտագողի մահացու ճանճ դրեցին: Իմ երազները երբեք ինձ չեն խաբել, այնպես որ, Ձե՛րդ մեծություն, արկղի մեջ թունավոր ճանճ է:

Զորավարը գոռաց.

– Սո՛ւտ է, պայծառափա՛յլ, մի՛ հավատացեք:

Վեզիրը բղավեց.

– Խաբո՛ւմ է, արեգնատե՛սք, այդպիսի բան չի՛ եղել:

Դահլիճը սսկվել, սպասում էր:

Թագավորը ցուցամատը դրեց ճակատին, իբր մտածում է, և չգիտեր ինչ որոշել: «Իսկ գուցե ճի՞շտ է իմաստունը, ո՞վ իմանա, զորավարն ու վեզիրը աչք չունե՞ն իմ գահին, երեսանց ժպտում են ու քծնում, իսկ մտքում գուցե իմ մահն են ուզում: Չէ՛, պետք չէ համարձակության դիմել»:

Եվ, գահին մի քանի անգամ անհանգիստ շարժվելով, հրամայեց.

– Արկղն առանց բացելու թաղել ամենախոր փոսի մեջ: Իսկ քե՛զ, իմաստո՛ւն, ինչպես խոստացա, հանձնում եմ թագավորությանս կեսը:

Դահճի ուղեկցությամբ և պահակախմբի հսկողության տակ դուրս տարան զորավարին ու վեզիրին:

Խեղկատակը քրքջում էր զորավարի հետևից.

– Փոս փորողը փոսն է ընկնում:

1. Ինչպիսի՞ մարդ էր թագավորը, և ինչպե՞ս էին ապրում նրա հպատակները:

2. Ի՞նչ զարհուրելի բան մտածեց թագավորի զորավարը:

3. Ի՞նչ պատահեց թագավորության իմաստունների հետ, և ի՞նչ մտածեց ամենագիտուն իմաստունը:

4. Ի՞նչ պատահեց «փոս փորողին»: Ինչո՞ւ:

5. Կարդա այն տողերը, որոնցից երևում են թագավորի դաժանությունը, վախկոտությունը, անգիտությունը, մեծամտությունը:

6. Եթե դու լինեիր իմաստունի փոխարեն, ի՞նչ հնարամտություն կբանեցնեիր:

1 Հեքիաթն ավարտվում է առածով: Ուրիշ ինչ առածով կավարտեիր հեքիաթը: Ընտրիր:

Լավ անես, քեզ կանես, վատ անես, քեզ կանես:

Խելքը բնովի է, ոչ թե գնովի:

Ով ինչ անի, իրեն կանի:

Արդարը որ մազ դառնա, չի կտրվի, խարդախը, որ գերան դառնա, կկոտրվի:

Տաշած քարը գետնին չի մնա:

U Հարցում արտահայտող նախադասությունը կոչվում է հարցական նախադասություն: Հարցում արտահայտող բառի վերջին վանկի ձայնավորի վրա դրվում է հարցական նշան՝ ՞ :

2 Հետևյալ պատմողական նախադասությունները դարձրու հարցական:

Կար մի դաժան թագավոր:

Իմաստունը գտավ լուծումը:

Արկղը դատարկ էր:

Փոս փորողը փոսն է ընկնում:

Օրինակ: Իմաստունը երազ տեսավ:
- Իմաստո՞ւնը երազ տեսավ:
- Իմաստունը երա՞զ տեսավ:
- Իմաստունը երազ տեսա՞վ:

3 ԽՈՍՔԱՅԻՆ «ՎԹԱՐՆԵՐ»

Ուղղի՛ր սխալը, կանխի՛ր «վթարը»

Իմ մայրիկս մեր տան ճրագն է:
Քո հետ ես աշխարհի ծայրն էլ կգնամ:
Երկրորդը ի՞նչ լավ էր նվագում ջութակի վրա:
Ուզում եմ ասեմ, որ այսպես ասելը սխալ է:
Արդեն առանց հեռախոս ապրել չի լինում:
Այսպես, ուրեմն, պայմանավորվածությունը չենք խախտում:

4

ա) Հեքիաթում ի՞նչ բառերով էին դիմում թագավորին: Կազմությամբ ինչպիսի՞ բառեր են դրանք, բաժանի՛ր բաղադրիչների:

բ) Թագավորներին ուրիշ ի՞նչ բառերով են դիմում. հիշի՛ր քո կարդացած ու լսած հեքիաթները:

5 ՁՎԱՐԹ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մի արդար մարդ բանտապետի չարախոսությամբ բանտ է ընկնում: Թագավորի որոշմամբ մի սև արկղի մեջ երկու թուղթ են գցում: Մեկի վրա գրում են՝ «Մեղավոր է», մյուսի վրա՝ «Մեղավոր չէ»: Եթե մարդն արկղից հանի «Մեղավոր է» թուղթը, նրան կգլխատեն, եթե՝ «Մեղավոր չէ» թուղթը, ազատ կարձակեն:

Բանտապետն ուզում է, որ անպայման գլխատեն արդար մարդուն, և երկու թղթի վրա էլ գրում է՝ «Մեղավոր է»: Արդար մարդն իմանում է, որ բանտապետն այդպիսի նենգություն է արել ու շատ է տխրում:

Սակայն հանկարծ հասկանում է, որ ինքը կարող է փրկվել: Ինչպե՞ս, կարո՞ղ ես կռահել:

Հիշի՛ր
«Երեք աղջիկների հեքիաթը»:



Արտույտը վախենում էր, որ երկինքը փուլ կգա:
Նա պառկում է մեջքի վրա ու ոտքերը դեմ տալիս երկնքին:
Տեսնողները ծիծաղում են նրա վրա.
– Ա՛յ թռչնակ, դու ո՞նց կարող ես քո ծղոտե տոտիկներով պահել երկինքը:
– Ես իմ բաժին երկինքն եմ պահում:

Ցանկանում եմ, որ ձեր հոգում հեքիաթն ապրի երկա՛ր-երկար տարիներ:

ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՔԱՋ ԱՐՏՈՒՏԻԿԸ

Լույսը չբացված՝ մի ժիր արտուտիկ՝
Պստլիկ ու սիրուն, ինչպես քաջ մարտիկ,
Մոխրագույն, ամուր իր թևիկներով,
Ծղոտե բարակ, պինդ տոտիկներով,
Երգը կտուցին վեր է սլանում,
Արևածագն է երգով ողջունում...
Մի առավոտ էլ նա վաղ արթնացավ,
Աշխույժ ճախրանքով երկինք բարձրացավ:
Նրա դեմ ելավ հավագող բազեն.
– Բախտդ բերել է,
Ա՛յ անխելք, անզեն,
Կհոշոտեի
Քեզ հենց այս պահին,
Ափսոս՝ փախչում եմ
Կայծակի ահից:
Իսկ դու չե՞ս լսում
Որոտը ամպի,
Հազար փորձանք է
Սպասում ճամփիդ:
Աղետ է գալու,
Ամպերն են լալիս,
Երկինքը ճաքել
Ու փուլ է գալիս:
Դու՝ վտիտ* թռչուն,
Ի՞նչ պիտի անես.
Երկինքը՝ հսկա,
Դու՝ մի թիզ ու կես:
– Ուժս ինչ պատի,
Այն էլ կանեմ ես,
Վտիտ եմ, սակայն
Վախկոտ չեմ քեզ պես:
Թող ինչքան կուզի՝
Ամպը որոտա,
Ո՛չ, ես չե՛մ թողնի,
Որ ամպը փուլ գա,
Պիտի ես հասնեմ
Բարձր ամպերին,
Բարի լույս մաղթեմ
Մարդկանց, աշխարհին...
Ամպրոպն է գոռում, շողում կայծակը,
Սակայն ճախրում է անվախ թռչնակը,
Ամպերն են գոռում, կայծակն է շաչում,
Ամպերից վեր է մի փոքրիկ թռչուն:
Քաջ արտուտիկն է, թևիկներին՝ վերք,
Կտուցին՝ արև, լուսաբացի երգ:
Ճամփա է անցել նա շատ դժվարին,
Երգով բարի լույս ասել աշխարհին:
Արտույտի երգով բացվեց առավոտ,
Լույսից չքացան կայծակ ու որոտ:
Լույսով լցվեցին ձոր, դաշտ ու կածան,
Երկինքն էլ կապեց խինդի ծիածան...

1. Ինչպե՞ս էր քաջ արտուտիկը արևածագը ողջունում, և ի՞նչ պատահեց նրան մի առավոտ:
2. Ինչո՞ւ բազեն չհոշոտեց արտուտիկին:
3. Ինչո՞ւ արտուտիկը շարունակեց ճախրել:
4. Արտույտն ինչպե՞ս հաղթահարեց դժվարին ճանապարհը և ինչո՞ւ:

1 Վերընթերցելով բազեի ու արտուտիկի երկխոսությունը՝ բնութագրի՛ր նրանց:

2 Ի՞նչ կցանկանայիր հարցնել բանաստեղծության հերոսներին: Գրի՛ր:

3 Արտուտիկն ինչպե՞ս հասավ իր նպատակին: Վերընթերցի՛ր ընդգծված քառատողը:

Իսկ դո՞ւ.
ա) հուսահատվում ես,
բ) համբերում ես,
գ) պայքարում ես,
դ) աշխատում ես լավ գործեր անել,
ե) հավատում ես քո հաղթանակին,
զ) հրաժարվում ես պայքարելուց:

4 Լրացրո՛ւ աղյուսակը՝ օգտագործելով բնագրի բառերը:

արտուտիկ	բազե
երգեցիկ	գիշատիչ
քնքուշ	որսորդ
.....	.....

ԱՏԼԱՆՏ — ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ

Ըստ հունական դիցաբանության՝ Երկնքի աստված Ուրանոսը և Երկրի աստվածուհի Գեան ունեին վեց որդի՝ տիտաններ: Սրանք հսկայական ուժով օժտված աստվածներ էին: Իրենց որդիների հետ նրանք ցանկացան օլիմպոսյան աստվածներից գրավել Երկինքը: Այդ կռվի մասնակիցներից մեկն Ատլանտն էր, որի պատիժը պարտությունից հետո երկնակամարն իր ուսերին պահելն էր:

Հետագայում, փոխաբերական իմաստով, ատլանտներ կոչվեցին ճարտարապետության մեջ մարդկային կազմվածքով սյուները, որոնք պահում էին ծածկը:

Իսկ **տիտան** այսօր, դարձյալ փոխաբերական իմաստով, նշանակում է հսկայական, առասպելական ուժի տեր մարդ, ինչպես նաև՝ մեծ խելքի, տաղանդի տեր, ականավոր անձ:

Առացվածք

Սրտով արած փոքրիկ գործը
Լավ է, քան թե շատ մեծ փորձը:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

Մաղթել աշխարհի

ՈՒԶՈ՞Ւ ԵՍ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԼ

Դու էլ, Արտուտիկն էլ մի-մի ատլանտ եք

Հնում մարդկանց թվում էր, թե ինչ-որ ուժեր պահում են երկինքը, որ նա փուլ չգա երկրի վրա: Օրինակ, դու կարդացիր, որ ըստ հին հունական դիցաբանության՝ երկինքը պահում էր հզոր ուժով օժտված Ատլանտը:

Դարերի ընթացքում մարդիկ հասկացան, որ երկինքը պահելու հարկ չկա, որ երկինքը չի կարող փուլ գալ:

Սակայն միամիտ Արտուտիկը չգիտեր դա ու պահում էր իր բաժին երկինքը:

Յուրաքանչյուր մարդ պետք է իր գործով «պահի երկինքը», որ երկինքը փուլ չգա, այսինքն՝ մեծ դժբախտություն, մեծ փորձանք չպատահի ամբողջ մարդկությանը:

«Երկինք պահելը» դժվար է, բայց հիշի՛ր՝ դու մենակ չես, և ամեն մեկն իր բաժին երկինքն է պահում:

Թագավորին թվում էր, թե իրենից խորամանկ մարդ չկա աշխարհում, և ոչ մեկը չի կարող իրեն խաբել...

Արհամարհի՛ր չարիքն ու անազնվությունը, բայց ոչ՝ չար ու անազնիվ մարդկանց:

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ԽԱԲԵԲԱՆ

Թագավորի խորհրդատուն գալիս է նրա մոտ, ասում.

– Թագավո՛րն ապրած կենա, մեր քաղաքում մի խաբեբա է հայտնվել, որը բլբլացնելով ազնիվ մարդկանցից փող է կորզում*:

– Ո՞նց թե,– զարմացած հարցնում է թագավորը:

– Մենք էլ դրանից գլուխ չենք հանում: Այդ մարդն աչքերը խորհրդավոր հառում է վրադ ու բլբլացնում: Հետո, մինչև գլխի ես ընկնում, տեսնում ես՝ քսակդ առել, չքացել է: Մի անգամ նույնիսկ քաղաքի ամենախորամանկ մարդուն քթից բռնած ման ածեց:

– Խելքին մոտ բաներ չես խոսում,– ասում է թագավորը:

– Էն Աստված, ճիշտ եմ ասում:

– Դե լավ, գնա էդ մարդուն բե՛ր, տեսնենք, թե ինձ ոնց է խաբում: Եթե նրան չհաջողվի այդ բանն անել, զգուշացնում եմ՝ գլուխդ ուսերիդ չի մնա:

Եվ խորհրդատուն գնում է բլբլացող խաբեբայի մոտ ու ասում.

– Մեր թագավորը քեզ իր պալատն է կանչում, որ իրեն խաբես: Լավ կլինի՝ ինչքան հմտություն ունես, բանեցնես:

– Ե՞ս... Խաբեմ թագավորի՞ն... Չէ՛, Աստված ինձ թույլ չի տա, որ էդ բանն անեմ:

– Եթե քեզ չհաջողվի մեր թագավորին խաբել, երկուսիս էլ կգլխատեն,– բացատրում է խորհրդատուն:

– Դե լավ, ինչ արած, որ ասում ես, ասում ես...– համաձայնում է խաբեբան:

Եվ խորհրդատուն նրան տանում է թագավորի մոտ:

Թագավորն ասում է.

– Ինձ ասել են, որ դու խաբել ես մեր քաղաքի ամենախելացի մարդկանց ու նրանցից փող կորզել: Ես շատ եմ հպարտանում իմ խելքով և ուզում եմ, որ ինձ էլ խաբես: Հապա փորձի՛ր:

– Թագավո՛րն ապրած կենա, խաբելը կխաբեմ, բայց վախենամ չկարողանամ, որովհետև բոլոր գործիքներս գրավ* են դրված: Իսկ առանց գործիքների... նույնիսկ ամենամիամիտ գյուղացուն չեմ կարող խաբել:

– Որ այդպես է, գնա գործիքներդ բե՛ր,– հրամայում է թագավորը:

– Բայց ես փող չունեմ,– ասում է խաբեբան:

– Իսկ ինչքա՞ն է պետք, որ գործիքներդ հետ բերես:

– Երկու հարյուր ոսկի,– ասում է խաբեբան:

– Խորհրդակա՞ն,– հրամայում է թագավորը,– այդ երիտասարդին երկու հարյուր ոսկի՛ տուր, թող գնա իր գործիքները բերի, տեսնենք ո՞նց է ինձ խաբում:

Եվ խորհրդականը խաբեբային երկու հարյուր ոսկի է տալիս: Վերջինս իրեն հատուկ ձևերով գլուխ է տալիս ու դուրս գնում՝ խոստանալով երկու ժամ հետո վերադառնալ: Իսկ թագավորը, հարմարավետ տեղավորվելով գահին, սպասում է: Շատ ժամանակ անց խորհրդատուն վախվորած ժպտում է:

– Ինչո՞ւ ես ժպտում,– հարցնում է թագավորը:

– Թագավո՛րն ապրած կենա, եթե որոշել եք այդ խաբեբային սպասել... Ոնց ասեմ՝ մինչև ձեր երեխաներն էլ լույս աշխարհ գան, նրանց թոռներն ու ծոռներն էլ, այդ խաբեբան չի վերադառնա: Չէ՞ որ նա արդեն խաբել է Ձեզ, ո՛վ աշխարհի ամենաիմաստուն արքա: Այդ խաբեբայի գործիքը հենց նրա բլբլացող լեզուն է:

1. Ի՞նչ արտասովոր մարդ էր հայտնվել քաղաքում, և ինչո՞ւ էր թագավորն ուզում հանդիպել նրան:

2. Խաբեբան ինչո՞ւ համաձայնեց գնալ թագավորի մոտ:

3. Ի՞նչ հնարամտությամբ նա խաբեց թագավորին:

4. Ինչո՞ւ նրան հաջողվեց խաբել թագավորին:

5. Երբևէ քեզ խաբե՞լ են. ի՞նչ ես զգացել:

1

Գնա էդ մարդուն բե՛ր:
Գնա գործիքներդ բե՛ր:
Այդ երիտասարդին երկու հարյուր ոսկի՛ տուր:

Հեքիաթից ընտրված այս նախադասություններով թագավորը.
ա) պատմում է, բ) հարցնում է, գ) հրամայում է, դ) բացականչում է:

Ընտրիր ճիշտ տարբերակը և կարդա համապատասխան ճնշերանգով:

2 Գրի՛ր քո կարդացած հեքիաթների թագավորներին բնութագրող բառեր: Այդ շարքի մեջ դու գրեցի՞ր այս հեքիաթի թագավորին բնութագրող բառեր: Հիմնավորի՛ր հեքիաթի տողերով:

U Հրաման, կարգադրություն կամ խնդրանք արտահայտող նախադասությունը կոչվում է հրամայական նախադասություն:

3

Կառլո հայրիկն ինչ է հորդորում Բուրատինոյին:	Սև թագուհին ինչ է հրամայում Ալիսին:
Պարոն Լոլիկն ինչ է կարգադրում Մաստինո շանը:	Դնչիկն ինչ է խրատում Վինի Թուխին:

Հարցերին պատասխանի՛ր հրամայական հնչերանգի նախադասություններով:

Գրի՛ր պատասխան նախադասությունները: Ո՞ր բառի վրա կդնես շեշտը: Ինչո՞ւ:

Ստուգի՛ր քեզ:

Այս նախադասություններում դու շեշտը դրեցիր կտրուկ և ուժեղ հնչերանգով արտասանվող բառերի վերջին վանկի ձայնավորի վրա:

«Լեզուն աշխարհի ամենալավ և ամենավատ բանն է. նայած թե ում բերանում է»:
Եզոպոս

Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ ապրում էր Վախը: Եվ ապրում էր մի «քաջ» մարդու սրտում, որի անունն էր Նազար:

Կցանկանայի, որ դուք ավելի բախտավոր լինեք և ավելի բարձր ու մեծ, քան մենք ենք եղել:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՔԱՋ ՆԱԶԱՐԸ

Լինում է, չի լինում՝ մի խեղճ մարդ՝ անունը Նազար: Էս Նազարը մի անշնորհք ու ալարկոտ մարդ է լինում. է՛նքան էլ վախկոտ, է՛նքան էլ վախկոտ, որ մենակ ոտը ոտի առաջ չէր դնիլ, թեկուզ սպանեիր: Օրը մինչև իրիկուն կնկա կողքը կտրած՝ նրա հետ դուրս գնալիս դուրս էր գնում, տուն գալիս՝ տուն գալի: Դրա համար էլ անունը դնում են Վախկոտ Նազար:

Էս Վախկոտ Նազարը մի գիշեր կնկա հետ շեմքն է դուրս գալի: Որ շեմքն է դուրս գալի, տեսնում է լո՛ւս-լուսնյակ գիշեր, ասում է.

– Ա՛յ կնիկ, ի՞նչ քարվան կտրելու գիշեր է... Սիրտս ասում է՝ վեր կաց գնա Հնդստանից եկող Շահի քարվանը կտրի, բեր տունը լցրու...

Կինը թե՝

– Ձենդ կտրի՛, տե՛ղդ նստի, քարվան կտրողիս մտիկ արա...

Նազարը թե՝

– Անզգա՛մ կնիկ, ինչո՞ւ չես թողնում գնամ քարվան կտրեմ, բերեմ տունը լցնեմ: Էլ ի՞նչ տղամարդ եմ ես, էլ ինչո՞ւ եմ գդակ ծածկում, որ դու համարձակվում ես իմ առաջը խոսես:

Որ շատ կռվում է, կնիկը տուն է մտնում, դուռը փակում:

– Հողե՛մ էդ վախկոտ գլուխդ, դե հիմի գնա՛, քարվա՛ն կտրի:

Էս Նազարս մնում է դռանը: Վախից լեղապատառ է լինում: Ինչքան աղաչում-պաղատում է, որ կնիկը դուռը բաց անի, չի լինում, բաց չի անում: Ճարը կտրած գնում է, մի պատի տակի կուչ է գալի, դողալով գիշերն անց է կացնում, մինչև լույսը բացվում է: Նազարը խռոված, պատի տակին

արևկող արած սպասում է, որ կնիկը գա տուն տանի, ու միտք է անում: Ամառվա շոգ օր, գազազած ճանճեր, ինքն էլ էնքան ալարկոտ, որ ալարում է քիթը սրբի: Ճանճերը գալիս են սրա քիթ ու պռունգին* վեր գալի, լցվում: Որ շատ նեղացնում են, ձեռը տանում է երեսին զարկում: Որ երեսին զարկում է, ճանճերը ջարդվում են, առաջին թափվում:

– Վա՜հ, էս ի՞նչ էր...– մնում է զարմացած:

Ուզում է համրի, թե մի զարկով քանիսն սպանեց, չի կարողանում: Մտածում է, որ հազարից պակաս չի լինիլ:

– Վա՜հ,– ասում է,– ես էսպես տղամարդ եմ էլել ու մինչև էսօր չեմ իմացել... Ես, որ մի զարկով կարող եմ հազար շունչ կենդանի ջարդել, էլ ի՞նչ եմ էս անպիտան կնկա կողքին վեր ընկել...

Էստեղից վեր է կենում, ուղիղ գնում իրենց գյուղի տերտերի մոտ:

– Տերտե՛ր, օրհնյա՛ ի տեր:

– Աստված օրհնի, որդի՛ս:

– Տերտե՛ր, բա չես ասիլ, էսպես-էսպես բան:

Պատմում է իր քաջագործությունը ու հետն էլ հայտնում է, որ պետք է իր կնկանից կորչի, միայն խնդրում է՝ իր արածը տերտերը գրի, որ անհայտ չմնա, ամենքն էլ կարդան-իմանան: Տերտերն էլ, կատակի համար, մի փալասի կտորի վրա գրում է.

Անհաղթ հերոս Քաջ Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար:

Ուէ տալիս է իրեն:

Նազարս էս փալասի կտորը մի փետի ծերի ամրացնում է, մի ժանգոտած թրի կտոր կապում մեջքը, իրենց հարևանի իշին նստում ու գյուղից հեռանում:

1. **Ի՞նչ պատահեց Վախկոտ Նազարին մի անգամ:**
2. **Նազարն ինչո՞ւ գնաց տերտերի մոտ:**
3. **Վախկոտ Նազարն ինչպե՞ս դարձավ Քաջ Նազար:**
4. **Կարդա՛ Նազարին բնութագրող հատվածները:**
5. **Քո կարծիքով՝ ի՞նչ քաջագործություններ կկատարի Քաջ Նազարը հետագայում:**
6. **Հեքիաթում հեղինակն ի՞նչ չափազանցություններ է կիրառել Նազարի կերպարն ավելի բնորոշ դարձնելու համար:**

– Վայ, էս մարդիկ ինչ վաղ են քնում,– բացականչեց Սասունցի Դավիթը:

Վայ բառի վրա ո՛չ շեշտ է դրված, ո՛չ հարցական նշան: Մտածի՛ր՝ ինչո՞ւ: Կարդա՛ զարմանք արտահայտելով:

– Ջա՛ն, Ոսկե բանալին գտա:

– Ափսո՛ս, ո՞նց խաբվեցի:

– Երանի՛ մեկը փայտի գնար:

– Վախենո՛ւմ եմ, դուռը մի՛ փակիր:

1 Ո՞ր նկարը ի՞նչ հույզով է արտահայտվում. վախ, ցանկություն, ուրախություն, ափսոսանք:

Արտագրի՛ր նախադասությունները՝ կից գրելով համապատասխան զգացմունք արտահայտող բառերը:

Ուշադրություն դարձրի՞ր, որ բացականչություն արտահայտող բառի վերջին վանկի ձայնավորի վրա դրված է բացականչական նշան (՛):

Բնագրից դո՛ւրս գրիր բացականչական նախադասությունները:

U Ուրախություն, հիացմունք, ցանկություն, զարմանք, ափսոսանք, վախ և այլ զգացմունքներ արտահայտող նախադասությունը կոչվում է բացականչական նախադասություն:

Եթե հետաքրքրեց, կարդա՛ հեքիաթն ամբողջությամբ և ընկերներիդ պատմի՛ր, թե Քաջ Նազարն ինչպես դարձավ թագավոր:

Վաչագանը մի հզոր թագավորի որդին էր: Մի անգամ, իր հավատարիմ ընկեր Վաղինակի հետ որս անելիս, աղբյուրի մոտ տեսնում է Անահիտին ու սիրահարվում: Ուզում է ամուսնանալ նրա հետ, սակայն թագավորն ու թագուհին համաձայն չեն լինում, քանի որ Անահիտը հասարակ նախարապանի աղջիկ էր: Սակայն...

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

ԱՆԱՀԻՏ

Ամեն հոգի, ամեն անհատ,
Եթե ունի արհեստ, ուսում,
Նա չի լինի տնանկ, աղքատ:

Թագավորն ու թագուհին տեսան, որ չեն կարողանում Վաչագանի միտքը փոխել, կանչեցին Վաղինակին, հայտնեցին իրենց հոժարությունը*, և նրա հետ երկու իշխան դնելով՝ մեծամեծ ընծաներով* ուղարկեցին Հացիկ՝ հարսնախոսության:

Երբ հասան նախարապան Առանի տունը, Առանը նրանց սիրով ընդունեց և շնորհավորեց նրանց գալը:

– Այս ի՞նչ հրաշալի գորգ է,– ասաց Վաղինակը,– տանտիկինդ կլինի գործած, անշուշտ:

– Այդ գորգը մեր Անահիտի գործածն է:

– Մեր թագավորի պալատում էլ չկա մի այսպիսի զարդ,– ասաց իշխաններից մեկը, հետո, դառնալով Առանին, ավելացրեց.– շատ ուրախ ենք, որ քո աղջիկն այսքան շնորհալի է: Քո Անահիտի համբավը մինչև թագավորի ականջն է հասել: Եվ ահա՛ մեզ ուղարկել է քեզ մոտ խնամախոսության: Թագավորը կամենում է, որ քո Անահիտին տաս իր մինուճար* որդուն՝ թագաժառանգ Վաչագանին:

Իշխանն այս առաջարկությունն անելով՝ սպասում էր, թե Առանը կա՛մ չի հավատա, կա՛մ թե, սաստիկ ուրախանալուց, վեր կթռչի տեղից: Բայց Առանը ո՛չ այս արավ և ո՛չ այն:

– Ի՛մ պատվավոր հյուրեր,– ասաց Առանը,– ես շատ շնորհակալ եմ, բայց ճշմարիտ եմ ասում ձեզ, իմ ձեռին չի տալն ու չտալը: Ահա կգա ինքը, իրեն կհարցնեք. եթե հոժարի, ես ոչինչ չունեմ ասելու:

Հենց այս խոսակցության ժամանակ եկավ Անահիտը:

– Անահի՛տ, ինչո՞ւ ես մենակ գործում,– հարցրեց Վաղինակը,– ես լսել եմ, որ դու աղջիկ աշակերտներ շատ ունես:

– Այո՛, ունեմ մի քսան հոգի,– պատասխանեց Անահիտը:

– Լսել եմ, որ դու քո աշակերտներին կարդալ էլ ես սովորեցնում:

– Այո՛, սովորեցնում եմ: Հիմա մեզանում ամեն մարդ պետք է կարդալ գիտենա:

– Անահի՛տ, եկ այստեղ, քեզ բան ունենք ասելու: Տե՛ս, թե քեզ համար ինչե՞ր է ուղարկել մեր թագավորը:

Վաղինակն այս ասելով՝ բացեց մի կապոց և նրա միջից հանեց ոսկի զարդարանքներ և մետաքսե հագուստներ:

Անահիտն այդ բաները տեսնելով՝ ամենևին չհափշտակվեց և չտեսի նման չզարմացավ, այլ համեստորեն հարցրեց.

– Կարելի՞ է, արդյոք, իմանալ, թե այդ պատիվն ինչո՞ւ է արել ինձ թագավորը:

– Մեր թագավորի որդին՝ Վաչագանը, քեզ տեսել է աղբյուրին. դու նրան ջուր ես տվել, և նա քեզ շատ հավանել է: Հիմա թագավորը մեզ ուղարկել է, որ քեզ նշանենք իր որդու հետ:

– Ուրեմն իմ տեսած որսորդը թագավորի որդի՞ն է եղել:

– Այո՛:

– Նա շատ լավ երիտասարդ էր: Բայց արդյոք գիտե՞ մի որևէ արհեստ:

– Նա թագավորի որդի է, Անահի՛տ, նրան ի՞նչ արհեստ է հարկավոր, ողջ աշխարհի տերը նա է, ամենքն էլ նրա ծառաներն են:

– Գիտեմ, որ այդպես է, բայց ո՛վ գիտե, աշխարհ է, այսօրվա ծառաների տերը վաղը կարող է ինքը լինել ծառա: Արհեստը մի այնպիսի բան է, որ ամենայն մարդ պիտի գիտենա, թե ծառա լինի, թե տեր, թե թագավոր և թե իշխան:

Այսպես որ ասաց Անահիտը, իշխանները մնացին իրար երեսի մտիկ տալիս: Նայեցին Առանին, տեսան, որ նա շատ հավան է աղջկա ասածին: Հետո դարձան Անահիտին ու կրկին հարցրին.

– Ուրեմն դու թագավորի որդուն չպիտի ուզես միայն նրա համար, որ նա արհեստ չգիտե՞:

– Այո՛, և այս ամենը, ինչ որ բերել եք, հետ կտանեք ու կասեք, որ ես իրեն շատ հավանում եմ, միայն թող ների ինձ. ես ուխտ եմ արել* արհեստ չգիտցող մարդու չգնալ: Եթե կամենում է, որ ես իր կինը լինեմ, թող նախ և առաջ մի արհեստ սովորի:

Իշխանները վեր կացան գնացին և ինչ որ տեսել, լսել էին, մի առ մի պատմեցին թագավորին: Թագավորն ու թագուհին շատ ուրախացան՝ կարծելով, թե Վաչագանը չի ընդունի նրա առաջարկությունը:

Իսկ Վաչագանը...

1. Ո՞Ւր էին գնում պալատականները և ի՞նչ նպատակով:
2. Առանն ինչպե՞ս դիմավորեց պալատականներին:
3. Ո՞վ էր Անահիտը և ի՞նչ էր անում: Վերընթերցի՛ր բնագրի համապատասխան հատվածը:
4. Ի՞նչ պայման դրեց Անահիտը և ինչպե՞ս հիմնավորեց: Դու համամի՞տ ես Անահիտին:
5. Ինչպիսի՞ն էր թագավորի և թագուհու վերաբերմունքը Վաչագանի և Անահիտի ամուսնությանը:
6. Քո կարծիքով՝ ինչպե՞ս կվարվի Վաչագանը: Շարունակի՛ր հեքիաթը:

1 Պալատականներ, գնալ, գյուղ բառերով կազմի՛ր պատմողական, հրամայական, հարցական, բացականչական նախադասություններ՝ կատարելով համապատասխան փոփոխություններ:

ա) Ի՞նչ մասնագիտություններ են պատկերված նկարներում:

բ) Ընտրի՛ր որևէ մասնագիտություն և պատրաստի՛ր փոքրիկ հաղորդում. «Ինչ կպատահի, եթե չլինի .... մասնագիտությունը»:

գ) Դու այդ մասնագիտություններից որը կընտրեիր և ինչո՞ւ:

2 Արհեստավոր բառով խաղա՛ «բառքամոցի»: Քո կազմած բառերը համեմատի՛ր ընկերոջդ կազմած բառերի հետ:

Քո կարծիքով՝ բնագրի ո՞ր տողերը կարելի է դնել այստեղ:

ԱՄՓՈՓԻ՛Ր ԻՄԱՑԱԾԴ, ՍՏՈՒԳԻ՛Ր ԻՆՔԴ ՔԵԶ

1. Որոշի՛ր՝ ո՞ր հեքիաթների հերոսներն են:

Գրի՛ր հեքիաթների անունները՝ կից գրելով դրանց բովանդակությանը համապատասխան հետևյալ առածները.

Երկար լեզուն կարճացնում է կյանքը: Պստիկ է, բայց ճստիկ է: Սատանից յոթ օր շուտ է ծնվել: Արհեստն է մարդուն ոսկե բիլազուկ*: Ծաղիկը ծաղկին նայելով է բացվում: Քաջը մեկ անգամ է մեռնում, վախկոտը՝ հազար: Լեզուդ քեզ պահես, գլուխդ կշահես: Ծառի տակին պառկելով բերանդ տանձ չի ընկնի: Մեջք մեջքի որ տանք, սարեր շուռ կտանք: Չարը բարուն հակառակ է: Խորամանկ աղվեսը երկու ոտքով է թակարդն ընկնում:

2. Կարդա՛ և որոշի՛ր նախադասությունների տեսակներն ըստ արտասանության երանգի:

Վաղ գարնանը իր ճոճին
Ծիտիկն ասաց բողբոջին.
– Ա՛յ իմ քույրիկ վարդերես,
Կարոտե՛լ եմ, ախր, քեզ...

Ինչո՞ւ քնից չես ելնում,
Ի՞նչ ես գտել անկողնում,
Վե՛ր կաց, շողով լվացվի՛ր,
Լույսը քեզնով թող բացվի՛:

3. Կարդա՛ Հովհաննես Թումանյանի «Խոսող ձուկը» հեքիաթից հետևյալ հատվածը և դի՛ր բաց թողած կետադրական նշանները՝ ՝, ՝, ՝:

Վերընթերցի՛ր համապատասխան հնչերանգով:

Մին էլ կեսգիշերին դուռը դղրդում է:

– Ով է:

– Հրեշը: Եկել եմ որ եկել եմ, դե պատասխանս տվեք:

Ինչ պատասխան. սարսափից մարդ ու կնկա լեզուն կապվում է, մնում են տեղները քարացած:

– Մի վախենաք, ես ձեր տեղակ սրա պատասխանը կտամ,– ասում է երիտասարդ հյուրն ու գնում դեպի դուռը:

– Եկել եմ,– դռան հետևից ձայն է տալիս հրեշը:
– Ես էլ եմ եկել,– ներսից պատասխանում է հյուրը:
– Որտեղից ես եկել:
– Ծովի էն ափից:
– Ընչով ես եկել:
– Կաղ մոծակը թամբել եմ, վրեն նստել եմ, եկել:
– Ուրեմն ծովը պստիկ է եղել:
– Ինչ պստիկ, արծիվը չի կարող մի ափից մյուսը թռչել:

4. Հիշիր հեքիաթի առանձնահատկությունները: Պատմվածքը դարձրու հեքիաթ և ավարտիր:

Կար մի համարձակ տղա: Շատ էր սիրում շրջել հայրենի երկրով, բարձրանալ սարերը, իջնել ձորերը, լողալ լճերում ու գետերում: Մի օր նա բարձրանում էր լեռը: Հանկարծ տեսավ մի քարանձավ, որից ծուխ էր բարձրանում: Մի փոքրիկ առվակ էր հոսում քարանձավի ներսից: Իսկ մուտքի մոտ ծանոթ պտուղներով մի ծառ էր աճել:

Հանկարծ ներսից դղրդոց լսվեց, և քարանձավը երերաց:

5. Ձեր ստեղծած հեքիաթներով կազմեք մի ժողովածու և նկարազարդեք:

Հեքիաթներից մի քանիսը կարող եք ուղարկել «Նախաշավիղ» և «9-րդ հրաշալիք» հանդեսների խմբագրություններ՝ տպագրելու համար:

6. Լրացրու խաչբառը: Ընդգծված սյունակում դու կկարդաս հեզ սիրելի մի բառ, իսկ տողերում՝ տեղեկություններ նրա մասին: Քեզ կօգնեն հետևյալ բառերը. կենդանական, հրաշապատում, գրական:



1. Հրաշքներ պատմող գրվածք:
2. Կենդանիների մասին հեքիաթներն անվանում են ....:
3. Թիվ, որը հանդիպում է հեքիաթի ավարտին:
4. Լինում է, չի ....:
5. Գրողների ստեղծած հեքիաթներն անվանում են ....:
6. Հեքիաթում գործողությունները սովորաբար կատարվում են .... սարից, ... ձորից այն կողմ:


ԱՅՍ ՉԱՐՄԱՆԱՀՐԱՇ ՄՈԼՈՐԱԿԸ

Այս զարմանահրաշ մոլորակի բնակիչը միայն մարդը չէ: Մեր շուրջն ապրում են բազմատեսակ արարածներ: Նրանց համար էլ այս մոլորակը զարմանահրաշ է:

Տեսնենք, թե ինչպիսին է աշխարհը նրանցից մեկի աչքերով:

ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶՅԱՆ

Այս հին ու հրաշալի աշխարհում մասնիկների միակ կապը սերն է:

ԽԱՅԾԸ*

Շարժվում էի տաքուկ ու փափուկ հողաշերտի մեջ և հիանում աշխարհով, երբ երկու խոշոր ու երկար մարդկային մատներ մտան հողի մեջ ու բռնեցին ինձ:

Երբ այդ մատները հանեցին ինձ իմ հողե կացարանից* և դրեցին փոքրիկ տուփի մեջ, ես միանգամից հասկացա, որ իմ ցեղակիցների ճակատագիրը նաև ինձ է սպասում: Շատերին թվում է, որ եթե մենք ապրում ենք հողի մեջ, ուրեմն չգիտենք, թե ինչ է կատարվում վերևում: Գիտենք: Բայց միևնույն է՝ ոչինչ չես անի:

- **Քո կարծիքով՝ ո՞վ է հերոսը:**
- **Վերընթերցի՛ր երկրորդ պարբերության վերջին նախադասությունը և մեկնաբանի՛ր:**
- **Ի՞նչ ես կարծում՝ ի՞նչ ճակատագիր է սպասում հերոսին:**

Լուսածեգին* այդ մատները հանեցին ինձ տուփիկի միջից, հագցրին ձկնորսական կարթին և իջեցրին ջուրը: Եվ այդ րոպեից արդեն ես ոչ թե որդ էի, այլ ուղղակի խայծ: Ձուկը պետք է մոտենար ինձ, կուլ տար, և ինքը դառնար զոհ: Մենք դա լավ գիտենք, բայց ի՞նչ արած... Ու՞ սպասում եմ սրտի ցավով: Միայն թե չխաբվի որևէ մեկը: Թաքնվում էի, կուչ գալիս, ծանր երկաթը քարշ տալիս աչքից հեռու տեղեր, բայց պարանը ձգում էր ինձ ու նետում գետի կենտրոնը:

Եվ հանկարծ տեսնում եմ, թե ինչպես իմ կողմն է լողում մի սիրունիկ ձուկ: Նա մոտենում է, և նրա աչքերը փայլում են: Ինչքա՜ն շուտ են ձկները

հավատում ստին, և ինչքա՜ն հաճելի է դա նրանց: Եվ նրա հայացքն այնպե՜ս համոզված էր, այնպե՜ս հաստատուն իր գիտցածի մեջ, կարծես ասում էր. «Ես իմ բաժին համով կերակուրը գտել եմ»:

• **Ինչ նպատակով ձկնորսն օգտագործեց որդին:**

• **Ինչ մտավախություն ուներ որդը և ինչպե՞ս էր ուզում խուսափել դրանից:**

• **Ինչ կլինի հետո:**

Երբ ձկնիկը շատ մոտեցավ, ես, մի կերպ շուրթերս շարժելով, շշնջացի.

– Լսի՛ր, մի՛ մոտենա ինձ, ես որդ չեմ, ես միայն խայծ եմ... Իմ ներսում կարթն է, և նրանից պարանը գնում է վեր, ու ծայրը ձկնորսի ձեռքին է...

Ձուկն ինքնավստահ ժպտաց.

– Ուրեմն դու իմ լա՞վն ես ուզում:

– Չգիտեմ: Թերևս ավելի՝ սուտը չեմ սիրում:

– Ինչո՞ւ:

– Չգիտեմ: Պարզապես ճշմարտասեր եմ:

– Ուրեմն, որպեսզի ես քեզ չուտեմ, դու պատմություն ես հնարում:

– Ոչ, ես իսկապես ճշմարտությունն եմ ասում:

– Ու կարծում ես՝ կհավատամ քեզ և բաց կթողնեմ հնարավորությունս:

– Բայց դու կմեռնես:

– Մի՞թե դու կարծում ես, թե ինձնից խորամանկ ես:

Եվ ձուկը քմծիծաղեց, ժպտաց այնքան խելոք ու ինքնավստահ, որ հուսալքումից քիչ էր մնում լաց լինեի:

– Ո՛չ, ես ճշմարտասեր եմ, ճշմարտությունը լա՛վ բան է:

– Տե՛ս, է... Վախն ինչ ուժ է տալիս: Որդը... փիլիսոփա է դառնում: Որդը՝ փիլիսոփա: Եթե ես կուշտ էլ լինեի, հենց միայն նրա՛ համար քեզ կուտեի, որ դու կարծում ես, թե ինձնից ավելի խելոք ու խորամանկ ես:

Եվ ձուկը ժպտաց ամեն ինչ իմացողի ժպիտով ու ինձ առավ իր բերանը:

Ես երկար ժամանակ զգում էի, թե ինչպես է կարթը նրան ձգում վեր, ու այդ ժամանակ միայն մի բան էր ինձ հետաքրքրում՝ գոնե հիմա հասկացա՞վ, որ ես ճշմարտությունն էի ասում: Եվ ինչո՞ւ ձկներին ճշմարտությունը պետք չէ... Խե՜ղճ ձկներ:

1. Ինչպե՞ս ավարտվեց պատմվածքը: Դու սպասո՞ւմ էիր այդպիսի ավարտի:

2. Բնութագրի՛ր ձկանը և որդին՝ հիմնավորելով բնագրի համապատասխան տողերով:

1 Այս դատողություններից որն է քեզ ավելի համոզիչ թվում. ընտրիր և մեկնաբանիր:

Որդն էլ, ձուկն էլ զոհ են:
Որդը գիտակցում է իր զոհ լինելը:
Ձուկը չի գիտակցում իր զոհ լինելը:
Որդի և ձկան վիճակը բնական է և օրինաչափ:
Որդը խղճում էր ձկանը, որովհետև ձուկն էլ իր նման զոհ էր:
Ամենավերջին պահին էլ որդն ուզում էր, որ ձուկը հասկանա իրեն:

2 Համեմատիր երկու ձկնիկ հերոսներին:

Հիշիր «Բկլիկ ձկնիկ»:

– Ձկնի՛կ, լո՛ղ տուր, լո՛ղ արա,
Դրսի որսը թո՛ղ արա,
Իջի՛ր ջրի հատակը,
Մինչև անցնի վտանգը:

3

Հիշիր «Ում համար է խնձորը»:

Համեմատիր երկու ստեղծագործությունների որդերին:

4 ա) Քառատողից ընտրի՛ր և կարդա՛ հրամայական նախադասությունները:
բ) Ո՞ւմ են ուղղված հեղինակի այդ հորդորները:

U Քո կարդացած նախադասության մեջ ձկնիկ բառը կոչական է:

Առածներ

Սա՛յլն ինչ մտքի է, սայլվո՛ղն ինչ մտքի:

Ձուկը ձկանն ասաց.
– Մի կո՛ղմ քաշվիր:
– Ո՞ւր քաշվեմ. երկուսս էլ մի թավայում ենք տապակվում:

Տարբեր աչքեր են նայում այս զարմանահրաշ աշխարհին ու տարբեր ձևով տեսնում այն:

Հիշո՞ւմ ես «Հրաշք բաց ծովում»:

Հիշո՞ւմ ես. սառցաշիթերը սառած խոսքերն էին:
Իսկ ցրտաշունչ Բևեռում սառչում են նույնիսկ... մտքերը:

ԱԼԲԵՐՏՈ ՄՈՐԱՎԻԱ

Միլիարդ տարի առաջ իրերը խոսել գիտեին: Նրանք ավելի ուշ համրացան, երբ մարդիկ սկսեցին անդադար խոսել: Փորձի՛ր հասկանալ իրերի լեզուն:

ԵՐԲ ՄՏՔԵՐԸ ՍԱՌՉՈՒՄ ԵՆ ՕԴՈՒՄ

Մեզանից միլիոնավոր տարիներ առաջ Բևեռում շատ ավելի ցուրտ էր, քան այսօր: Ջերմաստիճանը միլիարդ* աստիճան զրոյից ցածր էր, և ամեն ինչ սառչում էր, նույնիսկ՝ մտքերը: Բավական է մեկը մտածեր. «Ցուրտ է, շա՛տ ցուրտ», նրա գլխավերևում՝ գոլորշու ամպիկի մեջ, սառցաշերտերով անմիջապես գրվում էր. «Ցուրտ է, շա՛տ ցուրտ»:

Հենց այդ պատճառով էլ Բևեռում ոչ ոք չէր համարձակվում մտածել: Բոլորն էլ վախենում էին, որ ուրիշները կկարդան իրենց մտքերը:

Այսպես արջերը, պինգվինները, փոկերը*, մարդիկ՝ բոլորը դադարել էին որևէ բան մտածելուց: Մի խոսքով, Բևեռը դարձել էր իսկական հիմարիկների մի աշխարհ:

Դարերից մի դար (երբ ժամանակը դարերով էին հաշվում), մի Ծով Ա. Ցուլ, պառկած սառցակտորի վրա, կիսախուփ աչքերով վայելում էր ցուրտը:

Նրա գլխում ոչ մի միտք չկար, բացի մի կարճ «Բա՛»-ից: Հենց այդ «Բա՛»-ն էլ սառցե տառերով կախված էր նրա գլխավերևում: Թե ինչ էր ուզում ասել այդ «Բա՛»-ով, պարզ չէր:

Հանկարծ ջրից դուրս ցցվեց Օձ Ա. Ձուկն ու, պոչը խաղացնելով, կանչեց.

– Հե՛յ, Ծով Ա. Ցո՛ւլ, լսի՛ր, թե ի՞նչ եմ ասում:

– Ասա՛, լսում եմ,– փնթփնթաց Ծով Ա. Ցուլը:

– Ես մի երկրում եղա, որը կոչվում էր Արևադարձ: Ա՛յ թե շոգ էր այնտեղ: Եվ գիտե՞ս, այդ երկրում մտքերը չեն սառչում:

– Ի՞նչ ես ասում:

– Հավատա: Ա՛յ, օրինակ՝ մեկը քեզ է նայում ու մտածում. «Բայց ի՞նչ հաստլիկ է այս Ծով Ա. Ցուլը, հա՛...», իսկ դու դա չես էլ իմանում, որովհետև այնտեղ մտքերը չեն սառչում ու մնում են անտեսանելի:

– Այդ ո՞վ է ասում, որ ես հաստլիկ եմ,– նեղացած փնթփնթաց Ծով Ա. Ցուլը:

– Օրինակի համար եմ ասում: Լսի՛ր, արի գլուխներս առնենք-կորչենք Բևեռից: Թե իմանաս, ի՞նչ հաճելի է, երբ մտածում ես՝ ի՞նչ ուզում ես: Այդ Արևադարձում ես մի կո՛ւշտ մտածեցի:

– Ի՞նչ էիր մտածում:

– Տարբեր բաներ:

– Օրինա՞կ:

– Ինչ ուզես: Օրինակ՝ մտածում էի, որ արևը կանաչ է: Կամ երկու անգամ երկու հավասար է հինգի:

– Հա՛, բայց արևը կանաչ չէ: Իսկ երկու անգամ երկու հավասար է չորսի:

– Պա՛րզ է: Բայց հրաշալին էլ հենց դա է, որ կարող ես մտածել՝ ինչ ուզես, ու ոչ ոք չի իմանա:

Օձ Ա. Ձուկն այնքան խոսեց ու համոզեց, որ Ծով Ա. Ցուլը համաձայնեց գնալ Արևադարձ կոչվող երկիրը:

Օձ Ա. Ձուկը լողաց առջևից, իսկ Ծով Ա. Ցուլը հետևեց նրան:

Լողացին, լողացին, ջերմաստիճանը միլիարդ աստիճան ցրտությունից փոխվեց միլիարդ աստիճան տաքության: Աստվա՛ծ իմ, ի՞նչ շոգ էր:

Ծով Ա. Ցուլը դեռ ոչինչ չէր մտածում: Միլիոնավոր տարիներ նա չէր մտածել, հիմա էլ, կարծես, թմրած էր: Լողալիս մեկ-մեկ հարցնում էր.

– Օձ Ա. Ձո՛ւկ, դու արդեն մտածո՞ւմ ես:

– Իհա՛րկե:

– Իսկ ի՞նչ ես մտածում:

– Հազար ու մի բան և բոլորը քո մասին:

– Օրինա՞կ:

– Է՛, չեմ ասի, ասեմ՝ կնեղանաս:

Ծով Ա. Ցուլը տխրեց: Բևեռում ոչ ոք ոչ մեկի մասին ոչինչ չէր մտածում: Աստված գիտի, թե Օձ Ա. Ձուկը հիմա իր մասին ինչեր է մտածում: Բամբասկոտ, բութ, երկերեսանի արարած: Հանկարծ Ծով Ա. Ցուլը նկատեց, որ ինքն էլ Օձ Ա. Ձկան մասին է վատ բաներ մտածում:

Այստեղ բոլորն իրեն միայն լավ բաներ էին ասում. «Բարի՛ գալուստ, ի՞նչ գեղեցիկ ես, ի՞նչ խելացի դեմք ունես, ի՞նչ բեղեր են...»: Բայց Ծով Ա. Ցուլը համոզված էր, որ եթե Բևեռում լինեին, օդում սառցե տառերով գրված կլիներ. «Միայն դու էիր պակաս այստեղ, անճոռնի՛, ա՛յ քեզ մռութ, մի սրա բեղերի՞ն նայեք...»:

1. Ինչո՞ւ էր «Բևեռը դարձել իսկական հիմարիկների մի աշխարհ»:
2. Ի՞նչ որոշեցին Մով Ա. Յուլն ու Օձ Ա. Ձուկը և ինչո՞ւ:
3. Արևադարձում ի՞նչ փոփոխություններ զգաց իր մեջ Մով Ա. Յուլը:
4. Գուշակի՛ր՝ ի՞նչ է սպասում նրանց Արևադարձում:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

Միլիարդ

ԲԵՎԵՌ

ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ

Տեսե՞լ եք, թե կրկեսում ինչպես է աճպարարը գնդակը պտտում մատի վրա: Եթե մտքով մատից ուղիղ գիծ տանենք դեպի գնդակի ամենավերին կետը, ապա կստանանք այն երևակայական առանցքը, որի շուրջը պտտվում է գնդակը:

Երկիրն էլ է, որպես գունդ, իր առանցքի շուրջը պտտվում Տիեզերքում: Երկրի հետ պտտվում են նրա բոլոր կետերը, իսկ առանցքի վերին և ստորին երկու կետերը մնում են տեղում. դրանք կոչվում են բևեռներ:

Բևեռ բառը մեր լեզվում սկզբնապես նշանակել է մեխ, գամ: **Մեխել, գամել** բառերը նշանակում են ինչ-որ բան տեղում ամրացնել:

Այստեղից փոխաբերական իմաստով երկրի պտտման երևակայական առանցքի ծայրակետերն անվանել են բևեռներ՝ որպես տեղում պտտվող կետեր, մնացած կետերի համեմատ՝ «անշարժ» կետեր:

1 Երեխաների մտքերը սառել են օդում: Ինչ կկարդա ծովացուլը:
Եթե ծովացուլը, պինգվինը, արջը մտածելը մոռացած չլինեին, ինչ կմտածեին:

ԵՐԲ ՄՏՔԵՐԸ ՍԱՌՉՈՒՄ ԵՆ ՕԴՈՒՄ

(շարունակություն)

Մի օր Ծով Ա. Ցուլն Ա. Ֆրիկացի անունով մի սևամորթի տեսավ, որն իր կնոջ և երեխաների հետ նավակում նստած Օձ Ա. Ձկան համար երգ էր երգում: Օձ Ա. Ձուկը հրճվանքից բերանը բաց լսում էր.

Օձ Ա. Ձուկ,
Օձ Ա. Ձուկ,
Ձկա քեզ պես
Սիրուն ձուկ:

Օձ Ա. Ձուկն այդ երգով հրապուրված՝ մի պահ մոռացել էր, որ Արևադարձ կոչվող երկրում մի բան ասում են, մի այլ բան մտածում: Նա մոտեցավ նավակին, իսկ Ա. Ֆրիկացին ճարպկորեն նետեց ուռկանն* ու մի ակնթարթում բռնեց խեղճ Օձ Ա. Ձկանը: Քիչ անց Օձ Ա. Ձուկն արդեն տապակված էր ու խժռված:

Ծով Ա. Ցուլը դա որ տեսավ, սարսափեց: Նա հեռացավ՝ մտածելով. «Ի՞նչ սարսափելի է: Կեցցե՛նք մենք՝ բևեռցիներս, որ ոչինչ չենք մտածում, իսկ եթե մտածում ենք, ապա բոլորը կարող են տեսնել, թե ինչ»:

Բայց Ծով Ա. Ցուլն անմիջապես չվերադարձավ Բևեռ: Գուցե ծուլությունն էր պատճառը, կամ էլ նրան դուր էր գալիս, որ կարելի է մի բան մտածել ու մեկ այլ բան ասել:

Այդպես Ծով Ա. Ցուլը մնաց Արևադարձ կոչվող երկրում և ընտելացավ այդ երկրի սովորույթներին:

Մտածելն անսպասելի պտուղներ տվեց:

Ծով Ա. Ցուլն սկսեց շատ խորիմաստ բաներ մտածել, ասենք. «Ո՞վ ենք մենք: Որտեղի՞ց ենք գալիս: Ինչո՞ւ կանք: Ո՞ւր ենք գնում»:

Ու ինքն էլ սկսեց պատասխանել իրեն. «Մենք ծովացուլեր ենք: Գալիս ենք Բևեռից: Կանք, որովհետև մեզ ստեղծել է հսկայական ծովացուլի նման մի էակ: Վերջապես կհեռանանք Արևադարձ կոչվող այս կեղծ երկրից և կվերադառնանք ազնիվ ու ճշմարիտ Բևեռ»: Ի վերջո Ծով Ա. Ցուլը ձանձրացավ մի բան մտածելուց, բայց ուրիշ բան անելուց և մի գեղեցիկ օր վերադարձավ Բևեռ: «Այո՛, չմտածե՛լ, անգործ ու անհոգ ապրե՛լ գոնե մի միլիոն տարի»,– երազում էր նա:

Մի անգամ Բևեռում, իր հին սառցակտորին թիկնած, Ծով Ա. Ցուլն զգաց, որ մտածելն արդեն վատ սովորություն է դարձել, և ինքը չի կարողանում չմտածել:

Դժբախտաբար, բոլոր մտքերն անմիջապես հայտնվում էին գլխավերևում՝ պսպղուն ու թափանցիկ սառցաշիթերով գրված: Խեղճ Ծով Ա.

Ցուլի բարեկամներն սկսեցին նրանից փախչել: Նա էլ սկսեց վատ բաներ մտածել նրանց մասին: Այդ մտքերը վատ խոսքերով լցված սառցաշիթեր դարձան...

Շուտով Ծով Ա. Ցուլը մեն-մենակ մնաց իր սառցակտորի վրա:

Այդ ժամանակներից շա՛տ-շատ տարիներ են անցել: Բևեռում ջերմաստիճանը բարձրացել է: Մտքերն այլևս չեն սառչում և դարձել են անտեսանելի: Բայց Ծով Ա. Ցուլը դարձյալ մենակ է ապրում: Իր սառցակտորին պառկած՝ նա անվերջ մտածում է: Ի՞նչ է մտածում:

Ի՞նչ իմանաս:

Գրի՛ր՝ ի՞նչ է մտածում ծովացուլը:

1. Ի՞նչ պատահեց Օձ Ա. Ձկանը և ինչո՞ւ:
2. Կատարվածից ի՞նչ եզրակացրեց Ծով Ա. Ցուլը:
3. Ծով Ա. Ցուլն ինչո՞ւ անմիջապես չվերադարձավ Բևեռ: Մեկնաբանի՛ր:
4. Վերադարձից հետո Բևեռում ինչո՞ւ մենակ մնաց Ծով Ա. Ցուլը:

1 Թվականները գրի՛ր բառերով՝ մինչև ջերմաստիճանը դառնա միլիոն:



2 Բնագրից դո՛ւրս գրիր երկուական հարցական և բացականչական նախադասություններ, դրանք կարդա՛ համապատասխան հնչերանգներով:

3 Խաղ

«Դու չգիտես, որ ես գիտեմ»:

Պատկերացրո՛ւ, որ ձեր դասարանում վայրէջք է կատարել մի այլմոլորակային: Դուք չգիտեք, որ նա կարողանում է կարդալ ձեր մտքերը: Ենթադրենք՝ դո՛ւ ես այդ այլմոլորակայինը: Ի՞նչ մտքեր կկարդաս:

Հանելուկ

Ուր որ ուզեմ՝ կգնա,
Սահման չկա նրա դեմ,
Բայց ոչ մի տեղ չի մնա,
Նա հետ կգա սրաթև:

Ասացվածք

Լա՛վ բան մտածիր, որ լա՛վ բան կատարվի:

4 Գնահատի՛ր, լրացրո՛ւ նախադասությունները՝ օգտվելով տրված բառաշարից.

վախկոտություն, խարդախություն, անհամարձակություն, երկերեսանիություն, խաբեություն, չմտածելու սովորություն, մտածելու կարողություն, մտքի ծուլություն, անկաշկանդ մտածելու հնարավորություն:

Բևեռում — լավ է, որովհետև իրար չեն խաբում....
վատ է, որովհետև....

Արևադարձում — լավ է, որովհետև....
վատ է, որովհետև երկերեսանի է....

Դու որտեղ կնախընտրեիր ապրել: Ինչո՞ւ:

5 ԽՈՍՔԱՅԻՆ «ՎԹԱՐՆԵՐ»

Արտագրի՛ր՝ ուղղելով (սրբագրելով) խոսքային «վթարները»:
Ավելնորդ բաներ մի՛ խոսիր:
Ամանչելու մտքեր գլխումդ մի՛ ժողովիր:
Դա ինձ Բևեռն էր հիշացնում:
Արևադարձում նույնիսկ մտքերն էին կանանչ:

6 Բնագրի «տաք» բառերից մեկը թաքնվել է բառանիվում:
ա) Գտի՛ր այդ բառը:
բ) Բառի բաղադրիչներով կազմի՛ր նոր բառեր:



Հիշո՞ւմ ես՝ պայմանավորվել ենք խոսել այնպես, որ երբ հալվեն մեր խոսքերը, չամաչենք: Մտքերը չեն երևում, բայց արի մտածենք այնպե՛ս, որ եթե դրանք տեսանելի դառնան, դարձյալ չամաչենք:

Գուլիվերն անգլիացի նավաստի էր, որը, նավաբեկության ենթարկվելով, ընկավ մեր զարմանահրաշ մոլորակի մի անհայտ անկյուն:

Քո մասին կարելի է կարծիք կազմել
ըստ այն լեզվի, որով դու արտահայտվում ես:

ՋՈՆԱԹԱՆ ՍՎԻՖԹ

ԳՈՒԼԻՎԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Գուլիվերն արթնացավ, արդեն լրիվ լուսացել էր: Նա պառկած էր մեջքի վրա, և արևը ծակում էր աչքերը:

Գուլիվերը ցանկացավ տրորել աչքերը, սակայն չկարողացավ, ուզեց նստել, բայց չկարողացավ նույնիսկ մատները շարժել: Նրա ոտքերն ու ձեռքերը կարծես կպել էին գետնին: Նույնիսկ երկար ու խիտ մազերը պինդ կապած էին գետնի մեջ խրած ցցերից: Քիչ անց Գուլիվերի ոտքի վրայով ինչ-որ կենդանի բան շարժվեց, հասավ կրծքին ու կանգ առավ ծնոտի մոտ: Գուլիվերն աչքերը խոնարհեց դեպի ցած, որ տեսնի, թե դա ինչ է:

Ա՛յ քեզ հրաշք: Համարյա նրա քթի մոտ կանգնած էր մի մատնաչափիկ մարդկային արարած՝ ձեռքին՝ նետ ու աղեղ, մեջքին՝ կապարճ*: Մատնաչափիկին հետևում էին այդպիսի մոտ քառասուն արարածներ:

Զարմանքից Գուլիվերը բարձր ճչաց:

Մարդուկներն ահաբեկված փախան, մի քանիսը նույնիսկ վայր ընկան ու վնասվեցին: Սակայն շուտով նրանք վերադարձան: Նրանցից ամենախիզախը մոտեցավ Գուլիվերին, որ ամբողջովին տեսնի նրա դեմքը: Մարդուկն աչքերը հառեց երկինք, ձեռքերը վեր բարձրացրեց և բարակ ու զիլ ձայնով* հստակ գոռաց.

– Հեկինան դեգո՛ւլ:

– Հեկինան դեգո՛լ: Հեկինան դեգո՛լ,– իրենց բարակ ձայներով նրան միացան մյուսները:

Թե ինչ էին նշանակում այդ բառերը, Գուլիվերը չհասկացավ, թեև շատ օտար լեզուներ գիտեր:

Գուլիվերը երկար պառկած մնաց մեջքի վրա: Ի վերջո հավաքեց ուժերը և, կտրատելով թելերն ու դուրս քաշելով ցցերը, կարողացավ ձախ ձեռքը պոկել գետնից:

Հենց այդ պահին ներքևում ինչ-որ մեկը բարակ ձայնով զիլ ճչաց.

– Տոլգո ֆոնա՛կ:

Հարյուրավոր նետեր սուրացին դեպի Գուլիվերը: Ասեղի պես սուր նետերը ծակծկում էին նրա ձեռքերը և դեմքը:

Գուլիվերը փորձեց դուրս պրծնել կապանքներից: Սակայն նետերի մի նոր տարափ սկսվեց, և նա որոշեց անշարժ պառկել մինչև գիշեր:

«Մթան մեջ ավելի հեշտ կլինի ազատվել»,– մտածում էր նա: Բայց մինչև մութն ընկնելը սպասելու հարկ չեղավ: Նա իր աջ ականջի մոտ լսեց թխկթխկոցներ, որ նման էին փայտի մեջ մեխ խփելու ձայների:

Մուրճիկները թխկթխկացին մոտ մի ժամ:

Գուլիվերը մի կերպ թեքեց գլուխը և տեսավ գլխին շատ մոտ հենց նոր կառուցված մի տախտակամած: Մի քանի մարդուկներ սանդուղք էին ամրացնում նրան:

Այդ սանդուղքով մի պատվավոր մարդ բարձրացավ և երեք անգամ գոչեց.

– Լանգրո դեհալ սան:

Այդ պահին Գուլիվերի մոտ վազեցին հիսուն մարդուկներ և կտրատեցին գլխի մազերը ցցերին կապող թելերը: Գուլիվերը գլուխը շրջեց ու տեսավ խոսողի դեմքն ու շարժուձևերը: Նա Գուլիվերին դիմեց մի երկար ճառով: Գուլիվերը ոչինչ չէր հասկանում, բայց, համենայն դեպս, գլխով դրական շարժումներ էր անում:

Գուլիվերը սովից նվաղում* էր և որոշեց ուտելիք խնդրել մարդուկներից: Նա մի քանի անգամ մատները մոտեցրեց բերանին՝ հասկացնելու համար իր խնդրանքը:

Ճառ ասողը հասկացավ Գուլիվերին: Նա իջավ տախտակամածից և հրամայեց, որ Գուլիվերի կողերին մի քանի երկար սանդուղքներ դնեն:

Դրանցով դեպի Գուլիվերի բերանը շարժվեցին հարյուրի չափ մարդուկներ՝ ուտելիքներով լի զամբյուղներով բեռնավորված:

Զամբյուղում հազար հաց կար, ամեն մեկը՝ սիսեռի չափ, կային տապակած ճտեր՝ մեր ճանճերի չափ: Գուլիվերը կերավ երեք տապակած ցուլ, ութ ապխտած ոչխար, տասնինը խոզուկ և մի քանի հարյուր ճուտիկ ու սագ:

Շուտով զամբյուղները դատարկվեցին:

Այդ ժամանակ մարդուկները դեպի Գուլիվերի ձեռքը գլորեցին երկու մեծ տակառ՝ յուրաքանչյուրը մեր բաժակների չափ: Գուլիվերը բացեց դրանց կափարիչները և միանգամից կուլ տվեց երկուսի պարունակությունը:

Երբ Գուլիվերը կատարեց այդ հրաշքները, մարդուկներն ուրախությունից գոռացին և պար եկան նրա կրծքի վրա: Նրանք նշան արեցին, որ ցած գցեն դատարկ տակառները: Ներքևում մարդուկներն այս ու այն կողմ փախան և գոչեցին.

– Բորակ միվոլա՛, բորակ միվոլա՛:

Տակառների գինին խմելուց հետո Գուլիվերի քունը տարավ: Կիսաքուն վիճակում նա զգում էր, թե մարդուկներն ինչպես են վազվզում իր մարմնի վրայով: Մի պահ ցանկություն ունեցավ դրանցից մի քանիսին թափ տալ իր վրայից, որովհետև խանգարում էին քնել: Սակայն խղճաց նրանց: Չէ՞ որ մարդուկները հենց նոր կերակրեցին իրեն համեղ ուտեստներով և խմիչք տվեցին: Բացի այդ Գուլիվերը զարմացել էր այդ փոքրիկ մարդուկների անսովոր քաջությունից, որոնք վազվզում էին իր նման հսկայի կրծքի վրայով, որը կարող էր մատի մի շարժումով ոչնչացնել նրանց:

Գուլիվերը որոշեց ուշադրություն չդարձնել նրանց վրա և, թունդ գինուց արբած, շուտով քնեց:

Մարդուկները հենց դրան էլ սպասում էին: Նրանք գինու տակառների մեջ քնաբեր էին լցրել, որ քնեցնեին իրենց հսկա հյուրին:

1. Մի՞ր էր ընկել Գուլիվերը, և ինչպե՞ս ընդունեցին նրան:

2. Ի՞նչը զարմացրեց Գուլիվերին:

3. Գուլիվերի արածներից ի՞նչը հրաշք թվաց մարդուկներին:

4. Կռահի՛ր, թե ինչ էին ուզում ասել մարդուկները և հայերեն թարգմանիր նրանց ասածները:

5. Մարդուկներն ինչո՞ւ էին ուզում քնեցնել հսկա հյուրին:

Հիշիր «Էլիզաբեթը հանդիպում է Բոբոյին»:

1 Թզուկ Բոբոյին համեմատիր մարդուկների հետ:

2 Պատկերացրո՛ւ, որ դու մարդուկ նետաձիգներից մեկն ես. նկարագրի՛ր Գուլիվերին: Իսկ այժմ դու Գուլիվերն ես. նկարագրի՛ր մարդուկներին:

3 Համեմատիր քո և մարդուկների սննդի չափաբաժինները:

4 Կոչականն էլ ունի իր կետադրական նշանները: Եթե մոռանաս դրանք, տես՝ ինչ կստացվի.

Սոնա եղբորս անունն Աշոտ է:

Կետադրական նշաններն այնպես դիր, որ անհեթեթությունը վերանա:

Հուսով ենք, որ դու այսպե՛ս կետադրեցիր.

Սոնա՛, եղբորս անունն Աշոտ է:

Իսկ այս դեպքերում ինչպես կվարվես.

Աշոտը Սոնա տղայի անուն է:

Աշոտը տղայի անուն է Սոնա:

5 Ո՞րն է «ավելորդ»: Ինչո՞ւ:

Ցուլ, խոզ, ոչխար, սագ, ճայ:

Ս Կոչականը կարող է լինել նախադասության սկզբում, միջում կամ վերջում: Կոչականը մյուս անդամներից անջատվում է ստորակետով: Նրա վերջին վանկի ձայնավորի վրա դրվում է շեշտ:

6 Կազմիր նախադասություններ՝ դիմելով Գուլիվերին, աղնձուին, Ծով Ա., Ցուլին, գրքին:

Դու տեսար, որ իբրև կոչական կարող է գործածվել առարկա ցույց տվող ամեն բառ:

ԱՉՔԻ ԱՌԱՋ – *սանդուղք*

7 Ինչ կլինի, ասա՛, գրի՛չ, ինձ էլ սիրես գոնե մի քիչ:
Կո՛ւժ, քե՛զ ասեմ, կուլա՛, դո՛ւ լսիր:
Արև՛, արև՛, ե՛կ, ե՛կ, զիզի քարին վե՛ր եկ:
Ծիտի՛կ, ծիտի՛կ, մո՛տ արի:
Արհեստը, Վաչագան, կաթ-կաթ աղբյուր է:
Այս նախադասություններում գտիր կոչականները և գրիր:

8 ՉՎԱՐԹ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդուկներն ուզում էին Գուլիվերին գինի տալ: Ունեին երեք տակառ՝ մեկը՝ 3-լիտրանոց, մյուսը՝ 2-լիտրանոց և երրորդը՝ 1-լիտրանոց: Գինին պռնկեպռունկ լցված էր 3-լիտրանոց տակառում: Մարդուկներն ուզում էին գինին հավասարապես լցնել երեք տակառների մեջ: Խորհուրդ տուր նրանց՝ ինչպե՞ս վարվեն:

Թզուկների աշխարհում Գուլիվերը հսկա էր, հսկաների աշխարհում՝ թզուկ:

Կարդա՛ «Լեմյուել Գուլիվերի ճանապարհորդությունը» գիրքը:

Հիշո՞ւմ ես «Կակորդիլոսի և առյուծի արանքում»:

Պատկերացնո՞ւմ ես, Մյունխհաուզենի այս մի սուտն այնքան մեծ է, որ չտեղավորվեց Երկիր մոլորակի վրա և հասավ մինչև Լուսին:

ԷՐԻԽ ՌԱՍՊԵ

Կարդացե՛ք և ինքներդ դատեցե՛ք՝ աշխարհում բարոն Մյունխհաուզենից ավելի ճշմարտախոս մարդ եղե՞լ է արդյոք:

ԲԱՐՈՆ ՄՅՈՒՆԽՀԱՈՒԶԵՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ԼՈՒՍԻՆ

Մի անգամ կռվի ժամանակ գերի ընկա, թեև կռվում էի վագրի նման:

Ինձ նշանակեցին մեղուների հովիվ: Ամեն առավոտ դուրս էի քշում մեղուներին, տանում բացատում արածեցնում և երեկոյան բերում էի փեթակների մեջ տեղավորում:

Մի անգամ համրեցի ու տեսա, որ մի մեղու չկա: Գնացի փնտրելու ու տեսա, որ երկու արջ հարձակվել են մեղվիս վրա: Մոտս մի փոքրիկ արծաթե կացին ունեի, որը շպրտեցի դեպի գազանները: Արջերը փախան, մեղուն ազատվեց, բայց, դժբախտաբար, իմ հզոր ձեռքերի ուժը հաշվի չէի առել. այնպիսի թափով էի շպրտել, որ կացինը թռել էր ու ընկել Լուսնի վրա:

Ի՞նչ անեի:

Հիշեցի, որ մի բույս կա, որ շատ արագ է աճում: Այդ բույսը բակլան է: Շտապ մի այդպիսի բակլա տնկեցի, որն իսկույն սկսեց աճել ու շուտով հասավ Լուսնին:

– Ուռա՛,– գոչեցի ես և սկսեցի բակլայի ցողունով վեր մագլցել: Մի ժամից արդեն Լուսնի վրա էի:

Կացինս գտնելու համար շատ ժամանակ կորցրի: Լուսինն էլ էր արծաթից, կացինս էլ: Ի վերջո, կացինս գտա փտած հարդի դեզի մեջ:

Ուրախ-ուրախ գոտուս մեջ խրեցի կացինը և ուզեցի ցած իջնել Երկիր:

Բայց... ա՛յ քեզ բան. Արեգակը չորացրել էր բակլայի ցողունը, և այն փշուր-փշուր թափվել էր ցած:

Լացս հազիվ զսպեցի:

Ի՞նչ անեմ: Ի՞նչ անեմ: Մի՞թե ամբողջ կյանքս պիտի մնամ այս սառած Լուսնի վրա:

Օ՜, ո՜չ, ո՜չ մի դեպքում:

Իսկույն վազեցի դեպի հարդի դեզը և սկսեցի հարդից պարան հյուսել: Սկսեցի պարանով ցած իջնել: Բայց պարանը կարճ դուրս եկավ, ու ես մնացի օդում կախված՝ երկնքի ու Երկրի միջև: Սարսափելի էր, բայց ես գլուխս չկորցրի:

Ամուր բռնեցի պարանի ներքևի ծայրը, կացնով կտրեցի վերևից ու կապեցի ներքևի ծայրին: Այդպես սկսեցի իջնել:

Սակայն Երկիրը դեռ հեռու էր, և շատ անգամ պարանի վերևի ծայրը կտրելու ու ներքևի ծայրին կապելու հարկ եղավ: Վերջապես այնքան իջա, որ քաղաքի տներն ու պալատները երևացին:

Եվ հանկարծ... օ՜ սարսափ... պարանը կտրվեց:

Ես ներքև ընկա այնպիսի թափով, որ գետնի մեջ կես մղոն* խորությամբ փոս բացվեց:

Ուշքի գալով՝ երկար մտածեցի, թե այդ փոսից ինչպես դուրս գամ: Ամբողջ օրը ո՜չ կերա, ո՜չ խմեցի. մտածում էի ու մտածում: Եվ հանկարծ ելքը գտա. եղունգներով աստիճաններ սարքեցի և դուրս եկա փոսից:

Այո՜, Մյունխհաուզենը երբեք չի՜ կորչի:

1. Մյունխհաուզենն ինչպե՞ս դարձավ մեղուների հովիվ և ինչպե՞ս էր կատարում իր պարտականությունները:

2. Նա ինչպե՞ս հասավ Լուսին և ինչո՞ւ տխրեց:

3. Ի՞նչ «հնարամտությամբ» նա Լուսնից իջավ:

4. Մյունխհաուզենի հետ ո՞ր իրավիճակում կուզենայիր հայտնվել և ի՞նչ կանեիր:

5. Եթե Մյունխհաուզենը փոսից դուրս չգար (ինչը խիստ անհավանական է), ապա ի՞նչ կաներ:

1 Հորինի՛ր զվարճալի սուտասելուկներ և կարդա՛ ընկերներիդ համար:

ԱՉՔԻ ԱՌԱՋ

հարդ, արգ

հյուսել

2 Լրացրու խաչբառը: Ընդգծված սյունակում կկարդաս, թե գերմաներեն ինչպես է հնչում fo լրացրած բառերի հոմանիշը:



1. Համեստ բառի հականիշը:
2. Պայծառ միտք ունեցող:
3. Սուտ խոսող:
4. Ինքն իրեն հավանող:
5. Մեծ-մեծ խոսող:
6. Հնարք + միտք = ...
7. Արկած + խնդիր = ...
8. Գլուխը գովող մարդ:
9. Զարմանք գոյականից ստացված ածական:
10. Պարծեցող:
11. Սուտասան բառի հոմանիշը:

3 Հորինի՛ր մի պատմություն՝ օգտվելով **Մյունխհաուզեն** բառի բացատրություններից:

ԲԱՌԸ՝ ԱՓԻ ՄԵՋ

Այսօր հայերի մեջ ամենատարածված դիմելաձևը **պարոնն** է: Այս բառն առաջին անգամ օգտագործել են Կիլիկյան Հայաստանում: **Պարոն** բառն առաջացել է ֆրանսերեն **բարոն** բառից, որ նշանակել է իշխան, մեծավոր: **Բարոն** բառն էլ գերմաներեն **բարո** բառից է, որ նշանակել է ազատ մարդ:

Ահա թե ով է եղել բարոն Մյունխհաուզենը. նա թե՛ մեծավոր էր, թե՛ ազատ մարդ:

Սուտ խոսելը լավ բան չէ,
Եթե սուտը կատակ չէ:

Ճիշտը պետք է ճանաչել,
Ճիշտ խոսել ու չամաչել:

Այս զարմանահրաշ աշխարհում մարդը ձեռակերտ հրաշալիքներ շատ է ստեղծել: Ինչը վաղ անցյալում երազանք էր, այսօր իրականանում է քո աչքի առջև. սլացող ճեպընթացներ, կղզիների չափ նավեր, միջմոլորակային տիեզերակայաններ, ամենակարող համակարգիչներ, մարդանման ռոբոտներ և, ով իմանա...

ԵՎԳԵՆԻ ՎԵԼՏԻՍՏՈՎ

Դուք պետք է իմանաք, թե ինչ բան է անակնկալը և պատրաստ լինեք դրան...

ԷԼԵԿՏՐՈՆԻԿԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Մայիսյան մի առավոտ «Կաղնուտ» հյուրանոցի առջև կանգ առավ մի բաց մոխրագույն ավտոմեքենա: Դուռը բացվեց, և մեքենայից դուրս եկավ ծխամորճը բերանին մի մարդ: Տեսնելով սիրալիր դեմքեր, ծաղկեփնջեր՝ նա շփոթված ժպտաց: Դա պրոֆեսոր Գրոմովն էր: Նա գիտաժողովի* պատվավոր հյուրն էր:

Մեքենայի բեռնոցից դուրս էր ցցվել հսկայական ճամպրուկի կլորավուն անկյունը: «Կաղնուտի» տնօրենն ուզեց բարձրացնել ճամպրուկը:

– Նույնիսկ ձեզ պես ուժեղ մարդը չի կարողանա տեղաշարժել ճամպրուկը: Դա շատ ծանր ճամպրուկ է,– ասաց պրոֆեսորը:

– Դատարկ բան է,– պատասխանեց տնօրենը:

Նա մկանուտ* ձեռքերով գրկեց ճամպրուկը և իջեցրեց գետնին: Նրա դեմքը կարմրեց: Ճամպրուկը երկարավուն էր, սև գույնի, չորս բռնակով, վրան գրված էր. «Զգո՛ւյշ, սարքավորումներ են»:

Տնօրենը երեք օգնականների հետ ճամպրուկը տարավ պրոֆեսորի հյուրանոցային համարը:

Պրոֆեսորը բացեց սենյակի պատուհանը:

– Կաղնիները մեծացել են,– ասաց ինքն իրեն՝ նայելով պատուհանից:

Նա կռացավ ճամպրուկի վրա, բացեց փականները, մի կողմ դրեց կափարիչը: Ճամպրուկի մեջ, փափուկ կտորի վրա, ամբողջ հասակով մեկ, աչքերը փակ պառկած էր մի տղա: Թվում էր, թե քնած է:

Մի քանի րոպե պրոֆեսորը նայում էր քնածին: Ո՛չ, ոչ մեկը միանգամից գլխի չէր ընկնի, որ իր առջև ռոբոտ տղա է: Կճատ* քիթ, գագաթի վրա՝ ցից մազեր, երկար թարթիչներ... Կապույտ բաճկոն, վերնաշապիկ, ամառային տաբատ: Այդպիսի հարյուրավոր, հազարավոր տղաներ են վազվզում այս մեծ քաղաքի փողոցներով:

– Ահա և մենք տեղ հասանք, Էլեկտրոնի՛կ,– մեղմ ասաց պրոֆեսորը:– Ինչպե՞ս ես:

Թարթիչները դողդողացին, փայլուն աչքերը բացվեցին: Տղան բարձրացավ տեղից, նստեց:

– Ես լավ եմ,– ասաց նա խռպոտ ձայնով:– Ճիշտ է, մի քիչ դես ու դեն խփվեցի: Ես ինչո՞ւ պետք է պառկեի ճամպրուկի մեջ:

Պրոֆեսորն օգնեց, որ նա դուրս գա ճամպրուկից, շտկեց* հագուստը:

– Այդ մասին հետո կխոսենք... Իսկ հիմա մի շատ կարևոր բան պիտի անենք:

Նա Էլեկտրոնիկին նստեցրեց աթոռին, նրա բաճկոնի տակից հանեց ճկուն ու ձգվող լարով էլեկտրական փոքրիկ երկժանին և մտցրեց վարդակի մեջ:

– Վա՛յ,– վեր թռավ Էլեկտրոնիկը:

– Ոչի՛նչ, ոչի՛նչ, համբերի՛ր,– հանգստացրեց պրոֆեսորը:– Դու այսօր շատ պետք է շարժվես: Դրա համար անհրաժեշտ է լիցքավորվել:

Պրոֆեսորը, թողնելով Էլեկտրոնիկին, մոտեցավ տեսահեռախոսին, հավաքեց հեռախոսահամարը, խոսեց գործընկերոջ հետ՝ ասելով, որ անակնկալ ունի նրա համար:

– Չե՛մ ուզում,– լսվեց Էլեկտրոնիկի ճղճղան ձայնը:– Ես այսպես չե՛մ կարող...

Երբ պրոֆեսորը շրջվեց, տեսավ, թե ինչպես Էլեկտրոնիկը պոկվեց աթոռից, վազեց լուսամուտի մոտ, կայծակնորեն ցատկեց լուսամուտագոգին և թռավ երկրորդ հարկից:

Հաջորդ ակնթարթին պրոֆեսորը լուսամուտի մոտ էր:

Նա տեսավ, թե ինչպես է ծառերի արանքում երբեմն-երբեմն երևում կապույտ բաճկոնը:

– Էլեկտրոնի՛կ,– կանչեց Գրոմովը:

Սակայն տղան արդեն անհետացել էր:

Գլուխը տարուբերելով՝ պրոֆեսորը գրպանից հանեց ակնոցը և նայեց վարդակին:

– Երկո՛ւ հարյուր քսան վոլտ:– Նրա ձայնի մեջ տագնապ կար:– Այս ի՞նչ արեցի:– Նա վազեց դեպի դուռը:

Ցած վազելով աստիճաններով՝ նա դուրս եկավ փողոց: Նստելով տաքսին ու շունչը տեղը բերելով՝ ասաց վարորդին.

– Առա՛ջ: Պետք է հասնել կապույտ բաճկոնով տղային...

...Այսպես սկսվեցին արտասովոր իրադարձությունները...

1. Ի՞նչ անակնկալ էր պատրաստել պրոֆեսոր Գրոմովը գիտաժողովի համար:
2. Ի՞նչ պատահեց Էլեկտրոնիկին, և ո՞րն էր դրա պատճառը:
3. Էլեկտրոնիկն ինչո՞վ էր նման մյուս տղաներին և ինչո՞վ էր տարբեր նրանցից:
4. Ըստ քեզ՝ ի՞նչ արտասովոր իրադարձություններ տեղի կունենան:
5. Մտածի՛ր՝ ուրիշ ի՞նչ կարող է ստեղծել մարդն ապագայում:

1 Ռոբոտի արտասանած նախադասությունը փոփոխի՛ր, արտասանի՛ր և գրիր այնպե՛ս, որ մարդկային հույզեր արտահայտի (զարմանք, հիացմունք, հարցում):

Ես պետք է պառկեմ ճամպրուկի մեջ:

2 Ռոբոտը համակարգչով կատարել է այսպիսի խմբավորում.

գոյական	ածական	բայ	թվական
ժպտաց	չորս	երկրորդ	ռոբոտ
մոխրագույն	բաճկոն	նայում էր	հարյուր քսան
ճամպրուկ	կապույտ	արտասովոր	վարդակ
երկու հարյուր քսան	անհետացել էր	վազել	կանչեց

Օգնի՛ր ռոբոտին՝ խմբավորի՛ր ճիշտ:

3 Նույն ծաղկից մեղուն մեղր է շինում, օձը՝ թույն:

ա) Մեկնաբանի՛ր նկարները՝ օգտվելով առածից:

բ) Հորինի՛ր փոքրիկ պատմություն նկարների շուրջ:

Կյանքը թեթևացնելու, աշխարհը ճանաչելու համար մարդը զարմանահրաշ ու հզոր սարքեր է ստեղծել, բազում գաղտնիքներ բացահայտել:

Ո՞ւ դեռ որքա՞ն գաղտնիքներ կան բացահայտելու...

Քանի՜-քանի մարդ է հազարավոր տարիներ նայել Լուսնին, հիացել նրանով, երազել գոնե մտքով հասնել նրան: Ինչքա՞ն ավանդություններ կան Լուսնի մասին, ինչքա՞ն բանաստեղծություններ են ձոնվել նրա նուրբ շողերին, քանի՜-քանի՜ մարդ է ծնկի եկած երկրպագել նրան:

ՎԱՉԱԳԱՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՈՏՆԱՀԵՏՔԵՐ ԼՈՒՍՆԻ ՎՐԱ

Միայն մարդիկ չէ, որ ձգվում էին դեպի Լուսին: Երկրի օվկիանոսներն էլ են ձգվում դեպի Լուսին, ուզում են հասնել նրան: Երբ Լուսինը, Երկրի շուրջը պտտվելով, մոտենում է օվկիանոսին, ջրերն սկսում են բարձրանալ վերև: Լուսինը հեռանում է, ջրերը նորից իջնում են կարոտած:

Լուսինը կարծես մի հսկայական հայելի է, որն անդրադարձնում է Արևի լույսը և լուսավորում Երկրի գիշերները, ուրախություն բերում մարդկանց:

Լուսնին հասնելու մասին երազելով՝ մարդը եկավ-հասավ 20-րդ դար: Լուսնագնաց տիեզերանավեր կառուցեց և իջեցրեց Լուսնի վրա: Բայց մարդը շարունակ երազում էր, որ ինքը ոտքը դնի Լուսնի մակերևույթին:

Եկավ 1969 թվականը:

Ամերիկացիների «Ապոլոն-11» տիեզերանավը հուլիսի 16-ին թռավ դեպի Լուսին: Տիեզերանավի մեջ էին տիեզերագնացներ Նիլ Արմսթրոնգը, Էդվին Օլդրինը և Մայքլ Քոլինզը: Չորս օր հետո «Ապոլոն-11»-ը մոտեցավ Լուսնին: Մայքլ Քոլինզը մնաց Լուսնի շուրջը 100 կմ հեռավորության վրա պտտվող տիեզերանավի մեջ, իսկ նրա ընկերները, նստելով փոքրիկ տիեզերանավակը, սլացան դեպի Լուսին:

Հուլիսի 20-ին տիեզերանավակը բարեհաջող վայրէջք կատարեց Լուսնի վրա: Ամբողջ աշխարհը սրտատրոփ սպասում էր, թե ինչ է լինելու:

Հաջորդ օրը՝ 1969 թվականի հուլիսի 21-ին, Նիլ Արմսթրոնգը տիեզերանավակից զգուշորեն իջավ Լուսնի վրա: Ոտքը դնելով Լուսնին՝ նա ասաց.

– Սա մարդու համար մի փոքր քայլ է, իսկ ամբողջ մարդկության համար՝ մի հսկայական քայլ դեպի առաջ:

Այս խոսքը Լուսնի վրա արտասանված առաջին նախադասությունն է:

Քսան րոպե սպասելուց հետո Լուսնի վրա իջավ նաև Էդվին Օլդրինը:

Իրականացավ մարդու դարավոր երազանքը. մարդը Լուսնի վրա է:

Լուսնի վրա ո՛չ օդ կա, ո՛չ ջուր, բնական է, որ քամի և անձրև էլ չկա:

– Գուցե ցատկելո՞վ առաջ գնանք,– առաջարկեց Արմսթրոնգը: Փորձեցին, սակայն այնքան էլ արդյունավետ չէր: Օլդրինը մոտ երկու մետր ցատկեց վերև, իսկ վայրէջքը վտանգավոր էր:

– Փորձենք վազել,– առաջարկեց Օլդրինը:

Վազելիս նրանց ոտքերը դանդաղ էին տեղաշարժվում, ինչպես դանդաղեցված կինոֆիլմում:

– Ավելի լավ է քայլենք,– վճռեց Արմսթրոնգը: Պարզվեց, որ Լուսնի վրա էլ քայլելը տեղաշարժվելու ամենահարմար եղանակն է:

Լուսնի մակերևույթը քարքարոտ էր ու պինդ, պատված էր մեկ-երկու սանտիմետր հաստությամբ մանրահատիկ փոշիով:

– Նայի՛ր,– ասաց Արմսթրոնգը,– փոշին թաց չէ, բայց լպրծուն է:

– Այո՛,– պատասխանեց Օլդրինը,– ոտքդ դնում ես քարին և կարող ես սայթաքել ու ընկնել:

– Այս հանդերձանքով՝ սկաֆանդրով*, թթվածնով լի անոթով, և այլ սարքերով ծանրաբեռնված՝ դու Երկրի վրա կկշռեիր մոտ 110–120 կիլոգրամ: Իսկ այստեղ դու վեց անգամ թեթև ես՝ մոտ 20 կիլոգրամ,– ասաց Արմսթրոնգը:– Այնպես որ, եթե ընկնես էլ, բան չի պատահի:

– Հիմա եթե այստեղ բարձրացատկի մրցումներ լինեն, ես մի 8–10 մետր բարձրության վրա դրված ձողի վրայով հանգիստ կցատկեմ,– շարունակեց Օլդրինը:

– Մենք այստեղ հեռացատկի չեմպիոն էլ կարող ենք դառնալ՝ ցատկելով 45–50 մետր,– լրացրեց Արմսթրոնգը:

Այսպես զրուցելով ու կատակելով՝ տիեզերագնացները Լուսնի վրայից վերցրին մոտ 25 կգ ապարների* նմուշներ, տեղադրեցին հեռուստախցիկ,

ամրացրին Ամերիկայի Միացյալ Նահանգների դրոշը, հեռուստահեռախոսով խոսեցին Երկրի հետ, Լուսնի մակերևույթին տեղադրեցին գիտական սարքավորումներ:

Տիեզերագնացները Լուսնի վրա ընդհանուր առմամբ մնացին 22 ժամ: Նրանք այնտեղ թողեցին մի հուշատախտակ, որի վրա գրված էր. «Այստեղ Երկիր մոլորակի մարդիկ առաջին անգամ ոտք դրեցին Լուսնի վրա: Հուլիս, 1969 թ.: Մենք եկել ենք խաղաղությամբ, ամբողջ մարդկության անունից»:

Այնուհետև նրանք նստեցին իրենց փոքրիկ տիեզերանավակը և թռան դեպի մեծ տիեզերանավը, որտեղ նրանց անհամբերությամբ սպասում էր Մայքլ Քոլինզը:

– Այսքան մոտ լինել Լուսնին ու ոտք չդնել նրա վրա՞,– տրտնջաց* Քոլինզը:

– Ոչի՛նչ, հաջորդ անգամ դո՛ւ կիջնես,– զվարթ ասացին Արմսթրոնգն ու Օլդրինը:

1. Ի՞նչ զարմանալի իրադարձություն տեղի ունեցավ 1969 թվականին:

2. Տիեզերագնացների զրույցից դու ի՞նչ իմացար Լուսնի մասին:

3. Վերընթերցի՛ր բնագրի առաջին պարբերությունը և պատմի՛ր, թե ինչ ազդեցություն է ունենում Լուսինը երկրի վրա:

4. Լուսնի վրա մինչև այժմ պահպանվել են տիեզերագնացների ոտնահետքերը: Կարո՞ղ ես ասել, թե ինչու:

5. Համեմատի՛ր բարոն Մյունխհաուզենի տեսած Լուսինը Արմսթրոնգի տեսած Լուսնի հետ:

1 Գնահատի՛ր երեք տիեզերագնացների կատարած աշխատանքը: Դու ո՞ւմ տեղը կցանկանայիր լինել:

ՀԱՆԵԼՈՒԿ

Այն ի՞նչ տղա էր. հենց ծնվեց՝
Դրեցին թագավոր,
Տասնհինգ տարի թագավորեց,
Տասնվեց տարվա մեջ հիվանդացավ,
Երեսուն տարին լրացավ՝ մահացավ,
Հաջորդ օրը նորից կենդանացավ:

2 ՉՎԱՐԹ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Քո շնիկն այստեղ կշռում է 6 կգ: Եթե նա մի օր հայտնվի Լուսնի վրա, որքա՞ն կկշռի այնտեղ:

3 ԿՅԱՆՔ ԼՈՒՍՆԻ ՎՐԱ

Դու Լուսնի վրա ես և տեսել ես մետաղյա թիթեղներ, որոնց վրա գրված է՝ ոհդ, րջու, կկրա, դօ:

Վերծանիր գաղտնագրված բառերը և, օգտագործելով դրանք, հորինիր մի պատմություն՝ ստեղծելով կյանք Լուսնի վրա:

Խնդրակ

– Ո՞րն է մեզ ավելի մոտ՝ Լուսի՞նը, թե՞ Աֆրիկան,– հարցնում են չորրորդ դասարանցի Սահակին:

– Լուսինը:

– Ինչո՞ւ:

– Այստեղից Լուսինը երևում է, իսկ Աֆրիկան՝ ոչ:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

4 **Սրանք Արեգակի շուրջը պտտվող մոլորակներից մի քանիսի հայերեն անվանումներն են: Դրանցից մեկն Արեգակի մոլորակը չէ: Գտի՛र, թե որ մեկն է դա, և մի հանելուկ հորինի՛र նրա մասին:**

Լուսնթագ
Լուսին
Արուսյակ
Երևակ
Հրատ
Երկիր
Փայլածու

Սա մարդու համար մի փոքր քայլ է, իսկ ամբողջ մարդկության համար՝ մի հսկայական քայլ դեպի առաջ:

Մարդիկ երազում են երկինք բարձրանալ և արդեն բարձրանում են: Բայց, պարզվում է, որ երկնքում էլ երազողներ կան, որ ուզում են Երկիր իջնել...

ԱՆՏՈՒԱՆ ԴԸ ՍԵՆՏ-ԷՔՋՅՈՒՊԵՐԻ

Եթե ձեզ մոտենա ոսկեգանգուր մի փոքրիկ տղա, եթե նա զրնգուն ծիծաղ ունենա և ձեր հարցերին չպատասխանի, շատ եմ խնդրում ձեզ, անմիջապես գրեք ինձ, որ Փոքրիկ Իշխանը վերադարձել է...

ՓՈՔՐԻԿ ԻՇԽԱՆԸ

Երկրագնդի վրա ընկնելով՝ Փոքրիկ Իշխանը ոչ մի մարդ չտեսավ, և դա նրան շատ զարմացրեց: Նա նույնիսկ մտածեց, թե սխալմամբ թռել է մի ուրիշ մոլորակ: Բայց հենց այդ ժամանակ ավազի վրա լուսնի ճառագայթի գույնի մի օղակ շարժվեց:

– Բարի՛ երեկո,– համենայն դեպս ասաց Փոքրիկ Իշխանը:

– Բարի՛ երեկո,– ասաց օձը:

– Այս ի՞նչ մոլորակ եմ ընկել:

– Երկիրն է,– ասաց օձը:

– Ա՛յ թե ինչ: Իսկ ինչ է, Երկրի վրա մարդիկ չկա՞ն:

– Սա անապատ է: Անապատներում ոչ ոք չի ապրում:

– Իսկ որտե՞ղ են մարդիկ,– հարցրեց Փոքրիկ Իշխանը:– Անապատում, այնուամենայնիվ, մարդ մենակ է զգում իրեն:

Այնուհետև Փոքրիկ Իշխանը կտրեց-անցավ ամբողջ անապատը, բայց ոչ ոքի չհանդիպեց: Ամբողջ ճանապարհին նա միայն մի ծաղիկ տեսավ՝ մի եռաթերթ, շատ փոքրիկ ծաղիկ...

– Բարև՛,– ասաց նրան Փոքրիկ Իշխանը:

– Բարև՛,– պատասխանեց ծաղիկը:

– Որտե՞ղ են մարդիկ,– քաղաքավարի հարցրեց Փոքրիկ Իշխանը:

Ծաղիկը մի անգամ քարավան* էր տեսել, որն անցել էր իր մոտով:

– Մարդի՞կ... Ախ, այո... Նրանք, կարծեմ, ընդամենը վեց կամ յոթ հոգի են: Ես նրանց տեսել եմ շատ տարիներ առաջ: Բայց թե որտե՞ղ կարելի է նրանց հիմա գտնել, հայտնի չէ: Քամին նրանց քշում-տանում է: Նրանք արմատներ չունեն, և դա շատ մեծ անհարմարություն է:

– Մնաս բարո՛վ,– ասաց Փոքրիկ Իշխանը:

– Գնաս բարո՛վ,– ասաց ծաղիկը:

Հենց այստեղ էլ հայտնվեց աղվեսը:

– Բարև՛,– ասաց նա:

– Բարև՛,– քաղաքավարի պատասխանեց Փոքրիկ Իշխանը, բայց ոչ ոքի չտեսավ:

– Ես այստեղ եմ,– նորից լսվեց ձայնը,– խնձորենու տակ:

– Դու ո՞վ ես,– հարցրեց Փոքրիկ Իշխանը:– Ինչքան սիրո՛ւն ես:

– Ես աղվեսն եմ:

– Մի քիչ խաղա՛ ինձ հետ,– խնդրեց Փոքրիկ Իշխանը,– ես շատ տխուր եմ:

– Ես քեզ հետ խաղալ չեմ կարող,– պատասխանեց աղվեսը,– ես ընտելացած* չեմ:

– Ա՛խ, ների՛ր,– ասաց Փոքրիկ Իշխանը:

Հետո, մի փոքր մտածելով, հարցրեց.

– Իսկ ինչպե՞ս են ընտելացնում:

– Դու տեղացի չես երևում,– նկատեց աղվեսը:– Ի՞նչ ես փնտրում այստեղ:

– Մարդկանց եմ փնտրում,– պատասխանեց Փոքրիկ Իշխանը:– Իսկ ինչպե՞ս են ընտելացնում:

– Մարդիկ հրացան ունեն և որսի են դուրս գալիս: Դա շատ անհարմար բան է: Հետո՝ նրանք հավ են պահում: Նրանց լավն էլ միայն դա է: Դու հա՞վ ես փնտրում:

– Ո՛չ,– ասաց Փոքրիկ Իշխանը:– Ես բարեկամ եմ փնտրում: Իսկ ինչպե՞ս են ընտելացնում:

– Տե՛ս: Դու ինձ համար առայժմ միայն մի փոքրիկ տղա ես, այնպես, ինչպես մյուս հարյուրհազարավոր տղաները: Եվ դու ինձ պետք չես: Ես էլ քեզ պետք չեմ: Ես քեզ համար ընդամենը մի սովորական աղվես եմ, այնպես, ինչպես մյուս հարյուրհազարավոր աղվեսները: Բայց եթե դու ինձ ընտելացնես, ապա ինձ համար ամբողջ աշխարհում միակը կդառնաս, ես էլ քեզ համար ամբողջ աշխարհում կդառնամ միակը...

– Սկսում եմ հասկանալ,– ասաց Փոքրիկ Իշխանը:– Իմ մոլորակի վրա մի վարդ կար... որը, երևի, ինձ ընտելացրել էր...

Աղվեսը շատ զարմացավ.

– Քո մոլորակի վրա՞...

– Այո՛:

– Իսկ քո մոլորակի վրա որսորդներ կա՞ն:

– Ո՛չ:

– Ի՞նչ հետաքրքիր է: Իսկ հավ կա՞:

– Ո՛չ:

– Աշխարհում կատարյալ* ոչինչ չի լինում,– հառաչեց աղվեսը: Եվ նրանք բաժանվեցին...

1. Դերային ընթերցանությամբ ներկայացրե՛ք Փոքրիկ Իշխանի հանդիպումներն օձի, ծաղկի և աղվեսի հետ:

2. Քո անցած նյութերից («Մ'Իմ համար է խնձորը», «Գուլիվերի ճանապարհորդությունը», «Խայծը» և այլն) արդեն գիտես, որ ամեն էակ իր աչքերով է նայում աշխարհին:

Օձի աչքերով՝ անապատներում ոչ ոք չի ապրում:

Ծաղկի աչքերով՝ մարդիկ ընդամենը վեց կամ յոթ հոգի են, քամին նրանց քշում-տանում է, որովհետև նրանք արմատներ չունեն:

Աղվեսի աչքերով՝ մարդիկ հավ են պահում, և նրանց լավն էլ միայն դա է:

Մեկնաբանի՛ր յուրաքանչյուր հերոսի ասածը:

3. Ենթադրենք՝ Փոքրիկ Իշխանը հանդիպել է քեզ. դու երկիրն ինչպե՞ս կներկայացնեիր նրան:

ԽՈՍՔԱՅԻՆ «ՎԹԱՐՆԵՐ»

1

Հերոսները Փոքրիկ Իշխանին ներկայացրին իրենց նվիրական ցանկությունները:

Արտագրիր՝ շտկելով սխալները, որպեսզի այդ ցանկություններն «իրականանան»:

Աղվեսը. «Ես միանգամից կուտեյի հայրուր հավ»:

Օձը. «Թող մարթիք ինձ չնեղացնեն, որ նրանց չխայտեմ»:

Ծաղիկը. «Ես ընթամենը մի քնքուշ ու նուրբ ծաղիկ եմ, ինձ արմատախիլ մի արեք»:

2 ՁՎԱՐԹ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատասխանի՛ր միայն գոյականներով:

Ի՞նչ ուտելիքի սկզբից ավելացնենք մի ձայնավոր, որ դառնա ժամանակ ցույց տվող բառ:

Ի՞նչ բնակավայր է, որի առաջին բաղաձայնը եթե հանենք, կդառնա ուտելիք:

Պատասխանի՛ր միայն բայերով:

Սուտ խոսել բառակապակցությունն արտահայտի՛ր մեկ բառով, ավելացրո՛ւ մեկ տառ և ստացի՛ր մի նոր բայ:

Թվել բային ավելացրո՛ւ մի տառ և ստացի՛ր նոր բայ:



Պատասխանի՛ր միայն ածականներով:

Ո՞ր ամանից ջուր չենք կարող վերցնել:

Ո՞ր կռունկը չի թռչում:

Սիրելի՛ բարեկամ, այլ մոլորակից մեզ հյուր եկած Փոքրիկ Իշխանին ևս դուր եկավ մեր զարմանահրաշ Երկիր մոլորակը:

Իր փոքրիկ մոլորակից Երկիր իջած Փոքրիկ Իշխանը զարմանալի շատ բաներ տեսավ: Իսկ Երկիր մոլորակից դեպի հեռու աստղեր թռչող Ար Մենը ոչ միայն տեսավ, այլև...

ՎԱՀԱԳՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՆԵԼՈՒԿԱՅԻՆ ՄՈԼՈՐԱԿԸ

Տիեզերական անծայրածիր* հեռուներն անսահմանորեն ձգում էին Ար Մենին: Արդեն չէր կարողանում զբաղվել իր սովորական աշխատանքով: Մի օր էլ վերջնականապես վճռեց, որ հերթական արձակուրդն անցկացնելու է Հեռ Ավոր աստղի մոլորակներից մեկի վրա:

Վարձույթով տրվող աստղաթիռներից նա ընտրեց մի հոգու համար նախատեսվածը, պարենի* պաշար վերցրեց, հանդերձավորվեց ինչպես հարկն է ու, հրաժեշտ տալով մտերիմներին, թռավ: Լույսի արագությամբ թռչող աստղաթիռը հեշտ էր կառավարվում: Ար Մենը մենակությանը սովոր էր: Թռիչքի տասներորդ օրն զգաց, որ աստղաթիռում ինչ-որ բան կարգին չէ: Սիրտը վատ բան գուշակեց. հիշեց վարձույթի սրահի աշխատողին, նրա կոպիտ շարժուձևը, խորամանկ հայացքը: «Երևի պետք էր նրա հետ ավելի սիրալիր լինել»,– մտածեց Ար Մենը և միացրեց համակարգիչը: Տեսացույցի վրա երևաց խոսող ծրագիրը և հայտնեց, որ վառելիքն սպառվում է, պետք է շտապ վայրէջք կատարել:

Մոտակայքում ծանոթ մոլորակ չկար: Աստղային քարտեզի վրա նշմարվում* էր մարդկանց կողմից դեռևս չնվաճված մի մոլորակ:

Ար Մենն ստիպված վայրէջք կատարեց այդ մոլորակի վրա՝ վառելիք հայթայթելու հույսով:

Օգնական սարքերը ցույց տվեցին, որ մոլորակը բնակեցված է, և շնչելու օդ կա, ջուրը քաղցրահամ է. մի խոսքով՝ մոլորակը նման էր Երկրին:

Սա արդեն մեծ հաջողություն էր:

Ար Մենն իջավ աստղաթիռից և զգուշորեն քայլեց դեպի երևացող բնակավայրը: Երբ հասավ, ոչ ոք նրա վրա ուշադրություն չդարձրեց: Ար Մենը զարմանքով նկատեց, որ մոլորակի բնակիչների մի մասը քայլում է աչքերը փակ, մի մասը բոլորովին ճաղատ է, մի մասը ձեռքերը վերև բարձրացրած է քայլում, մի մասը նստած է ու չի խոսում:

«Սա ի՞նչ բան է»,– զարմանքով մտածեց Ար Մենը և մոտեցավ նստածներից մեկին:

– Ես Երկիր մոլորակից եմ, բարև՛, խաղաղություն եմ ցանկանում ձեր մոլորակին: Ինձ վառելիք է հարկավոր, որտեղի՞ց կարող եմ ձեռք բերել,– քաղաքավարի հարցրեց Ար Մենը:

Նրա թարգմանող սարքերն անմիջապես թարգմանեցին ասածը, և բնիկը, առանց շրթունքները շարժելու, պատասխանեց.

– Մեր մոլորակում հենց այնպես ոչ ոք ոչինչ չի անում, բարև՛, երկրացի:

– Ես փող կտամ:

– Ինձ ճիշտ չհասկացար, մեզ մոտ փող չկա:

– Իսկ ի՞նչ անեմ, որ վառելիք ճարեմ:

– Պետք է հարմարվես մեր մոլորակի օրենքներին:

– Այսինքն՝ ի՞նչ անեմ:

– Մեզ մոտ, տե՛ս, որքան լճակներ կան: Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ են դրանք այդքան շատ:

– Չգիտեմ: Երևի շատ անձրև է գալիս:

– Մեր մոլորակում որպեսզի մի բան կատարվի, պիտի մեկն անպայման միտքը շարժի, մի բան գուշակի: Օրինակ, այս գետակների ջրերը չեն կարողացել պատասխանել ափերի հանելուկին, ափերը փակել են ջրի ճամփան, և գետակները դարձել են լճակներ: Մազերը չեն կարողացել պատասխանել գլխի հանելուկին, և գլուխը չի աճեցնում նրանց, և մարդկանց մի մասը բոլորովին ճաղատ է: Եթե անձրևը չլուծի ամպի հանելուկը, ամպն անձրևին չի թողնի ներքև:

«Ա՛յ քեզ արմանք-զարմանք բան»,– մտածեց Ար Մենը, բայց իրեն զսպելով հարցրեց.

– Իսկ այս մարդիկ ինչո՞ւ են ձեռքերը վեր տնկած քայլում:

– Որովհետև ձեռքերը չեն կարողացել լուծել ուսերի հանելուկը:

– Սրանք էլ աչքերը փակ են գնում, որովհետև աչքերը չեն լուծել կոպերի՞ հանելուկը,– գլխի ընկավ Ար Մենը:

– Սկսում ես հասկանալ,– աշխուժացավ բնիկը:

Հանկարծ սկսեց ուժգին անձրև գալ:

– Ահա անձրևը լուծեց ամպի հերթական հանելուկը և իրավունք ստացավ ներքև թափվելու: Հիմա ամեն ինչ կթրջվի. լավ է, որ մենք ծածկի տակ ենք,– ասաց բնիկը,– թրջվել բոլորովին չեմ սիրում:

– Բայց ինձ վառելիք է պետք,– անհամբերությամբ նորից ասաց Մենը:

– Մեր մոլորակի օրենքով հիմա ես քեզ մի խնդիր կասեմ. եթե լուծես,

կստանաս վառելիք, չլուծես՝ չես ստանա: Տե՛ս, անձրևն արդեն կտրվեց: Ես հիմա գնում եմ քաղաքային այգի: Այսօր իմ և իմ երկու ընկերների ծաղիկ դառնալու հերթն է: Աշխատանք է՝ պիտի անենք: Քսանչորս ժամ է տևում տարվա մեջ: Դու կգաս այգի և կտեսնես երեք վառվռուն ծաղիկ՝ ամեն ինչով իրար նման: Եթե ճիշտ գուշակես, թե որ մեկն եմ ես, վառելիք կստանաս, եթե ոչ՝ ընդմիշտ կմնաս մեր մոլորակում: Արդեն ուշանում եմ, ընկերներս հիմա լավ թրջված կլինեն, ես վազեցի:

«Լավ էլ աշխատանք են գտել իրենց համար»,– ինքն իրեն զայրացավ Ար Մենը և ուզում էր բնիկին էլի ինչ-որ բան հարցնել, սակայն նա արդեն չքացել էր:

Ար Մենը, քթի տակ մռթմռթալով, հասավ քաղաքային այգի: Իրոք, երեք հրաշալի, վառվռուն ծաղիկ էր աճում մարգերից մեկի վրա: Մենը շվարել էր. դրանք ոչնչով չէին տարբերվում իրարից:

«Մի՞թե հավերժ պիտի մնամ այստեղ»,– սարսափեց նա:

Երկար զննեց ծաղիկները, հոտոտեց, պտտվեց նրանց շուրջը, բայց ապարդյուն*: Հուսահատ նստեց ու գլուխն առավ ափերի մեջ: Հանկարծ ժպտաց, հասկացավ, թե որ մեկն էր իր զրուցակիցը:

Սիրելի՛ երեխաներ, Ար Մենն ինչպե՞ս կռահեց, թե որն էր իր զրուցակիցը: Պատասխանը թաքնված է պատմվածքում. ուշադի՛ր կարդացեք և դուք ևս գլխի կընկնեք:

1. Ար Մենն ինչո՞ւ վայրէջք կատարեց անծանոթ մոլորակի վրա:
2. Ի՞նչ օրենքներ էին գործում Հանելուկային մոլորակում:
3. Ար Մենին ի՞նչ պայման առաջարկեց այլմոլորակայինը:

1 Հանելուկային մոլորակում ինչերի՞ն են հարցեր առաջադրել ծառերի արմատները, արևը, երկնքի աստղերը, ատամները: Գևակերպի՛ր հարցերը և պատասխանի՛ր:

2 Վերծանի՛ր Հանելուկային մոլորակից ստացված հաղորդագրությունը և պատասխանի՛ր:

Վորում շնորհա քնե զեձ՝ ռական տար ռոցը դպ ջողհա վարտելուա թիվառ:

Վիրում հրա ենք զեձ ռեմ հրաշ զարմանա կում մոլորա մառայինա ձակուրդներնար կացնելուանց:

Կսի եթ պեսինչ ողկար քե նվելհայտ տեղայս, ծեքմտա ներդինք:

3

Պատկերացրո՛ւ՝ Լուսնի վրա հանդիպել են բարոն Մյունխհաուզենը, Փոքրիկ Իշխանը, Ար Մենը և այլմոլորակայինը:

Հորինի՛ր մի փոքրիկ պատմություն և ուղարկի՛ր «Նախաշավիղ» և «Ց-ոդ հրաշալիք» հանդեսներին:

4 Լուծի՛ր հանելուկները. օգնի՛ր Հանելուկային մոլորակին:

Գլուխ գլխի եթե տանք,
Ապա սարեր շուռ կտանք,
Ո՞ր առածն եմ փոխել ես,
Պատասխանը լավ գիտես:

Ես իջնում եմ սարերից,
Ես թռչում եմ քարերից,
Մորս գիրկն եմ շտապում,
Քնած լինեմ, թե արթուն:

Առանց թևի թռչում են,
Երկինք-գետին թրջում են,
Նրանց մոտից թե նայես,
Մարդիկ, կարծես, մրջյուն են:

Ձեռքիս փոքրիկ նիզակներ՝
Պաշտպանում եմ լույսը ձեր,
Թե պետք լինի, թարթում եմ,
Դուք՝ քնած, ես արթուն եմ:

Ի՞նչ այգի է զարմանալի,
Քեզ հետ է միշտ գնում-գալիս,
Ոչ մի անգամ բերք չի տալիս,
Թե կտրում ես, չի էլ լալիս:

Երբ որևէ գործ ես անում, ուշադի՛ր եղիր. ամենափոքր մանրուքն էլ կարող է խնդրի լուծման բանալի լինել:

ԱՄՓՈՓԻ՛Ր ԻՄԱՑԱԾԴ, ՍՏՈՒԳԻ՛Ր ԻՆՔԴ ՔԵԶ

1. Թեմատիկ շարքում դու հանդիպեցիր երևակայական շատ պատմությունների, և դրանցից միայն մեկն էր իրողություն: Ո՞րն էր դա:

2. Այս զարմանահրաշ պատմությունների մեջ ո՞ր հերոսի կողքին կուզենայիր հայտնվել և ինչ կանեիր:

3. Դու ծանոթացար թեմատիկ շարքի հետևյալ գաղափարներին:

• Մեր զարմանահրաշ մոլորակում ամեն ինչ տարբեր է, և դրանով է պայմանավորված, որ....
• Լավ բան մտածիր, որ....
• Այսօր դու սովորող ես, իսկ վաղը....
• Մարդկային միտքը շատ գաղտնիքներ է բացահայտել, և դեռ որքան....
• Ամեն սովորական երևույթի մեջ էլ հրաշք կա, քանի որ....

Հիշի՛ր, թե դրանք որ պատմություններին են վերաբերում, և շարունակի՛ր մտքերը:

4. Լրացրո՛ւ խաչբառը: Ընդգծված սյունակում կկարդաս, թե դեպի ուր են ձգվում քո մտքերը:



1. Մարդ-ռոբոտը:
2. Մարդ-հսկան:
3. Երկնքում «լողացող» նավ:
4. Փչան բարոնը:
5. Հանելուկային Ար ....ը:
6. Նրա հետքը մինչև հիմա Լուսնի վրա է:
7. .... Իշխանը:

Ածու – 1. բանջարանոցի մարգ: 2. (փխբ.) փոքր ժողովուրդ, փոքր երկիր:
Աղուն – *աղալու համար պատրաստած* հացահատիկ:
Ամոքել – մեղմել, հանգստացնել:
Անդնդախոր կիրճ – շատ խոր ձոր:
Անծայրածիր – վերջ, սահման չունեցող:
Անհուն – անծայր, անվերջ, անսահման:
Անձեռակերտ – ձեռքով չշինված, սքանչելի:
Ապար – բնական քարային հանքատեսակ (ավազ, գրանիտ, մարմար և այլն):
Ապարանք – պալատ, դղյակ:
Ապարդյուն – արդյունք չտվող, անօգուտ, իզուր:
Առնչվել – կապ ունենալ:
Արնախում – արյուն խմող:
Բաճկոնակ – անթև կարճ զգեստ, ժիլետ:
Բեզարել – հոգնել:
Բեկբեկ – ծուռումուռ, ոլոր-մոլոր:
Բերկրանք – հրճվանք, ուրախություն:
Բիլազուկ – ապարանջան, ձեռքի զարդ:
Բնույթ – բնավորություն:
Գիտաժողով – գիտնականների ժողով:
Գրավ – մեկից պարտք վերցնելիս նրա մոտ թողնվող իր կամ գումար:
Դավ – գաղտնի մտածված չարամիտ արարք:
Եղեռն – կոտորած, չարագործություն:
Երախտահատույց լինել – լավության տակից դուրս գալ:
Երախտիք – ուրիշին արած բարի գործ:
Զարմ – միևնույն ծնողների սերունդ:
Զիլ ձայն – բարձր և սուր ձայն:
Զմայլվել – հիանալ, սքանչանալ:
Ըմբոստանալ – դիմադրել, չենթարկվել, ապստամբել:
Ընծա – նվեր:
Ընտելացնել – վայրի բույսը, կենդանին կամ թռչունը դարձնել ընտանի:
Ինքնություն – էություն, իմաստ:
Լոկ – միայն, սոսկ:
Լուսածեգ – *լույսը ծագելու ժամանակը*, լուսաբաց:
Խայծ – միս, որդ, հաց, որ անց են կացնում կարթի վրա՝ ձուկ որսալու համար:
Խեցեղեն – կավից պատրաստված իրեր:
Խսիր – ծղոտից, բույսերի կեղևից կամ դալար ոստերից հյուսած կարպետ:
Խուրջին – երկաչքանի տոպրակ, պայուսակ:
Խուփ – կափարիչ:
Ծեծքար – կտավատ ծեծելու երկանաքար:
Ծմակ – անտառի խիտ տեղ, ուր արև չի ընկնում:
Կաթնախպեր – նույն մոր կաթով սնված ոչ հարազատ եղբայր:
Կայծքար – կարծր քարի տեսակ, որը երկաթին խփելուց կայծ է առաջանում:
Կապարճ – նետաման:
Կատարյալ – անթերի, ընտիր:
Կարմրախայտ – ձկան մի տեսակ:
Կացարան – ապրելու տեղ, տուն, բնակարան:
Կերտել – շինել, կառուցել, ստեղծել:
Կճատ – կարճ ու տափակ քիթ ունեցող:
Կողակ – ձկան մի տեսակ:
Կորզել – խաբեությամբ, խորամանկությամբ մեկից մի բան վերցնել, ձեռք բերել:
Կռան – դարբնի մուրճ:
Համաճարակ – լայն տարածվող վարակիչ հիվանդություն:
Համբավ – բարի անուն, ճանաչում, հռչակ:
Հավալուսն – լողացող մեծ թռչուն:
Հատու – 1. Լավ կտրող, սուր: 2. Ուժգին, կտրուկ:

Հարդախառն – հարդ (հացահատիկի մանրացրած ցողուններ) խառնած:
Հեզանազ – հեզ, խոնարհ, նազանի:
Հոժարություն – համաձայնություն:
Հոտաղ – գութանի եզները քշող տղա:
Հորդորել – մեղմ կերպով համոզել:
Ձեռակերտ – ձեռքով շինած, ստեղծած:
Ձիրք – բնածին ընդունակություն, շնորհք, տաղանդ:
Ճկել – ծռել, խոնարհել:
Ճոն – գլխարկ կարող:
Ճուռ – ոտք:
Մաճկալ – գութանի մաճը բռնող և վար անող մարդ:
Մամ – տատ:
Մամուռ – արմատներից զուրկ բույս:
Մասունք – շատ թանկագին, սրբազան բան:
Մատուռ – փոքրիկ եկեղեցի:
Միլիարդ – շատ մեծ թիվ՝ հազար միլիոն:
Մինուճար երեխա – ծնողների միակ զավակը:
Մկանուտ – ուժեղ մկաններ ունեցող:
Մղոն – երկարության չափ (մոտ մեկուկես կիլոմետր):
Մոլեգնել – արագ տարածվել, բորբոքվել:
Նախշքար – ներկարար, պատերը ներկող, նախշող:
Ներբող – գովերգ, փառաբանական խոսք, ճառ:
Նշմարվել – հազիվ երևալ:
Նվաղել – սաստիկ թուլանալ:
Շաչել – սուլոցի նման սուր ձայն հանել:
Շտկել – ուղղել:
Չախչախ – փայտե շերտիկ ջրաղացքարի վրա, որի միջոցով ցորենը թափվում է անցքի մեջ:
Չուրսունկանի – չորս ունկ ունեցող:
Պանդոկ – ճաշարան:
Պանդուխտ – օտար երկրում ապրող մարդ:
Պարեն – ուտելու մթերք, սննդամթերք:
Պեղել – փորելով գետնի տակից որևէ հին բան հանել:
Պռունկ – շրթունք, բերան:
Պուտուկ – կավե աման, կճուճ:
Ջորի – էշից մեծ, ձիուց փոքր և նրանց նման բեռնակիր կենդանի:
Ջրշուն – թանկարժեք մորթով ջրային կենդանի, կուղբ:
Սալ – մետաղյա հարմարանք, որի վրա երկաթ են կռում:
Սանամեր – սանամայր՝ զավակի մայրը կնքահոր համար:
Սխրանք – խիզախ արարք, հերոսական գործ, հերոսություն:
Սկաֆանդր – տիեզերագնացի պաշտպանիչ հագուստ:
Սողք – սողալը:
Ստորին – ներքևի, ցածի, ցածում գտնվող:
Վես – բարձր, վսեմ, սեգ, վեհ:
Վերվերի բռնել – պարել:
Վտիտ – թույլ, անզոր, նվազ:
Տառեղ – արագիլների մի ցեղը, սպիտակ արագիլ:
Տնտղել – ուշադրությամբ զննել:
Տրտնջալ – դժգոհել, բողոքել:
Ոհիստ անել – որևէ բան անպայման անելու խոստում, երդում տալ:
Ունկ – 1. ականջ, 2. ամանի բռնակ, կանթ:
Ուռկան – ձուկ բռնելու ցանց:
Փարչ – կավե ունկավոր գավաթ, կուլա:
Փոխ տալ – փոխարինաբար, ժամանակավոր մի բան տալ:
Փոկ – ծովային կաթնասուն կենդանի:
Քարապուտ – վայրի կակաչի տեսակ:
Քարավան – ուղտերի շարք, որն անապատում մարդիկ և բեռներ է փոխադրում:
Քուրա – մետաղը շիկացնելու վառարան, հնոց:
Օթյակ – օթևան՝ գիշերելու տեղ:

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՑԱՆԿ
/I-IV ԴԱՍԱՐԱՆՆԵՐ/

ալյուր
աղբյուր
աղջիկ
աղքատ
ամբողջ
ամենօրյա
ամպ
այլևս
այսօր
անգամ
անդադար
անընդհատ
անհոգի
անձրև
անձրևոց
անշնորհք
անվերջ
անօթևան
աշխարհ
աշխույժ
աջ
առաջ
առաջարկ
առողջ
առջև
ավագ
արև
արդար
արդեն
արդյոք
արձակուրդ
արջ
բարև
բարդ
բարձունք
բարձրանալ
բերդ
բողկ
բույն
բույր
բուրդ
բրդել
բրդոտ
բրդուճ
գաղտնիք
գդալ
գոգնոց
գույնզգույն
դադարել
դարբին
դարձյալ
դարձնել
դեղձ
դերձակ
եղբայր
եղջերու
երևալ
երբեմն
երբեք
երգ
երկրորդ
երջանիկ
զարթնել
զգույշ
զվարթ
Էջմիածին
ընդամենը
ընթացք
ընթրիք
ընձուղտ
թև
թագավոր
թեև
թուղթ
թռչել
թռչուն
թրջել
իբր
իջնել
խաբեբա
խաբել
խղճալ
խնդրել
խորհուրդ
ծաղկազարդ
կարգ
կարդալ
կեղև
կեղտ
կենդանի
կեսօր
կրիա
հագնել
հագուստ
հաղթել
համարձակ
համբերել
համբուրել
հայելի
հարատևել
հարբած
հարդ
հարթ
հարյուր

հետև
հերթապահ
հեքիաթ
հիացմունք
հղկել
հյութալի
հյուսել
հյուր
հոգատար
հոգնել
հևք
ձև
ձագուկ
ձգել
ձյուն
ճամփա
ճամփորդել
ճանապարհ
ճյուղ
ճռճռալ
մաղթել
մարդ
մեղք
մեջք
միանգամից
միասին
միլիարդ
միլիոն
մինչև
միջանցք
միրգ
մկկալ
մյուս
մորթել
մռթմռթալ
մռնչյուն
մտահոգ
մրմնջալ
մրջյուն
մրրիկ
նախշուն
նետաձիգ
ներքև
նորոգել
շաբաթ
շաղգամ
շնորհիվ
ՀՀնջալ
շոգ
ոգևորել
ողջ
ողջույն
ոսկեզօծ
ոսկի
ով
ովքեր
ոտնահետք
ոտք
որդ
որդի
որովհետև
որպեսզի
որջ
որսորդ
չարաճճի
պառկել
պատճառ
պատմվածք
պարգևել
պարծենալ
ջարդել
ջրհեղեղ
սայթաքել
սանդղակ
սանդուղք
սեղմել
սերկևիլ
սկյուռ
սևուկ
սուրբ
սրբազան
սրբել
սրընթաց
վախկոտ
վայրէջք
վայրկյան
վարդ
վարդակ
վերև
վերադարձ
վերջ
վերջապես
վրձին
տարօրինակ
տերևակալել
Տրդատ
ուխտ
ուղղակի
ուղևոր
ուղտ
փորձանք
փորձել
ևս
օգնել
օդ
օդաչու
օդապարիկ
օվկիանոս
օրոր

5. 1. Ցուրտ:
6. 4. Հայոց այբուբեն:
11. 3. Թութ:
23. 1. Օդաչուներն Արամի քույրերն են:
28. 4. Արմունկ, փող, գունդ: 6. Հանք – վանք:
32. 1. «Ա» տառը:
35. 5. «Դ» հնչյունը: Երեկ չէ առաջին օրը, երեկ, այսօր, վաղը, վաղը չէ մյուս օրը: Չորս:
41. 4. Ավանակ – ավազակ:
53. 2. Ատամները: 3. Երկուսը՝ ծնողներին, երկուսը՝ զավակներին:
55. 5. «Ազգի ապագան մայրերի ձեռքում է»:
58. 4. Աշխարհամաս:
59. 6. Տղան՝ հոր և պապի հետ:
66. 4բ. Մաղով կարելի է սառույց կրել, իսկ սառույցը նույն ջուրն է:
68. 3. Վեհ:
75. Հանելուկ. գետ – վտակներ, ծով – գետեր:
77. 2. Օրինակ՝ վեգ, վեհ, վեճ, վեմ, վեպ:
78. 2. Ոչնչացնել, հեռու, մոտ:
81. Հանելուկ. Ամանորը:
114. 4. Էշի ականջում քնած լինել: Գլուխ հանել:
122. 5. Արդար մարդն արկղից հանում է թղթերից մեկը և, առանց բացելու, կուլ տալիս: Քանի որ մյուսի վրա գրված էր. «Մեղավոր է», եզրակացնում են, որ նա կուլ է տվել «Մեղավոր չէ» թուղթը, այսինքն՝ նրան պետք է ազատել:
145. Հանելուկ. միտքը:
151. 8. 3-լիտրանոցից լցնում են 2-լիտրանոցը, 2-լիտրանոցից՝ 1-լիտրանոցը:
160. Հանելուկ. լուսին:
164. 2. Միս – ամիս, գյուղ – յուղ: Ստել – նստել, թվել – թթվել: Դատարկ (ծակ, չոր), շինարարական:
167. Ար Մենի զրուցակիցը չոր էր, իսկ մյուս երկու ծաղիկը՝ թաց: 2. Շնորհավորում ենք ձեզ՝ տարրական դպրոցը հաջող ավարտելու առթիվ: Հրավիրում ենք ձեզ զարմանահրաշ մոլորակում ամառային արձակուրդներն անցկացնելու: Իսկ թե ինչպես կարող եք հայտնվել այստեղ, մտածեք ինքներդ:
168. 4. Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք: Առուն: Ամպերը: Աչքի կոպը: Գլխի մազերը:
169. 4. Էլեկտրոնիկ, Գուլիվեր, տիեզերանավ, Մյունխհաուզեն, Մեն, Արմսթրոնգ, Փոքրիկ: Բառը՝ տիեզերք:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները 3
Վաչագան Ա. Սարգսյան – Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները 4
• Գրքի զրույցը քեզ ծանոթ և անծանոթ հրաշալիքների մասին 4
• Հովհաննես Թումանյանի արձանի մոտ 7
• Արամ Խաչատրյանի հետ 12
• Սարյանի նկարներում շողշողում է Հայաստանի հավերժությունը 17
• Մնակնկալը 21
• Մասիսից դեպի Ագռավաքար 24
• Ճամփորդությունը շարունակվում է.. 29
• Իշխանը 31
Գարեգին Սրվանձտյանց – Սասունցի Դավիթը կռվում է դևերի դեմ 36
Ամփոփի՛ր իմացածդ, ստուգի՛ր ինքդ քեզ 43

Ա՛յ քեզ բան. ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հա՛յ-րե՛-նի՛ք է 45
Ռազմիկ Դավոյան – Թորգոմ Նահապետի և Հայկ Նահապետի զրույցը 46
Պարույր Սևակ – Քիչ ենք, բայց հայ ենք.. 48
Սուրեն Վարդևանյան – Օջախի հիմքը ... 51
Հովհաննես Շիրազ – Մայրս 54
Վրեժ Իսրայելյան – Ջնվաճված աշխարհամաս 56
Գրիգոր Գևունց – Հայրս 60
Հրաչյա Մաթևոսյան – Ա՛յ քեզ բան. ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հա՛յ-րե՛-նի՛ք է 62
Հովհաննես Շիրազ – Հայոց լեզուն 65
Լիպարիտ Սարգսյան – Հայոց ուսուցիչ .. 67
Վասիլի Բիրյուկով – Կաղինը 69
Ղուկաս Սիրունյան – Եղեգը, որը շատ էր ուզում դառնալ սրինգ 72
Համո Սահյան – Գետը 74
Գևորգ Էմին – Ա՛խ, այս Մասիսը 76
Սիլվա Կապուտիկյան – Հայրենիք 78
Մետաքսե – Նոր տարվա գիշեր 80
Ամփոփի՛ր իմացածդ, ստուգի՛ր ինքդ քեզ 82

Ես այսպե՛ս ասեմ, դու այնպե՛ս հասկացիր 83
Ավետիք Իսահակյան – Արջն ու օձը 84
Սերգեյ Վարդանյան – Վեճը 86
Աթաբեկ Խնկոյան – Ճպուռն ու մրջյունը. 89
Եզոպոս – Առյուծն ու մուկը 92
Հրաչիկ Սևոյան – Տակառի լողը 94
Վարդան Այգեկցի – Այրի կինը և որդին .. 96
Եզոպոս – Առյուծն ու նապաստակը 98
Ռաֆայել Հայրապետյան – Շախմատ ... 100
Ամփոփի՛ր իմացածդ, ստուգի՛ր ինքդ քեզ 102

Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ 103
Հայկական հեքիաթ – Ամենաթանկը հավասարների մեջ 104
Չինական հեքիաթ – Թող ուրի՛շն անի .. 106
Կորեական հեքիաթ – Երկու եղբայր 109
Ջաննի Ռոդարի – Գրքից փախած մկնիկը 112
Ալեքսեյ Տոլստոյ – Բուրատինոն իմանում է Ոսկե բանալու գաղտնիքը 115
Էդվարդ Միլիտոնյան – Սև արկղի գաղտնիքը 119
Սուրեն Մուրադյան – Քաջ արտուտիկը 123
Վիլյամ Սարոյան – Թագավորն ու խաբեբան 126
Հովհաննես Թումանյան – Քաջ Նազարը 129
Ղազարոս Աղայան – Անահիտ 132
Ամփոփի՛ր իմացածդ, ստուգի՛ր ինքդ քեզ 135

Այս զարմանահրաշ մոլորակը 137
Աղասի Այվազյան – Խայծը 138
Ալբերտո Մորավիա – Երբ մտքերը սառչում են օդում 141
Ջոնաթան Սվիֆթ – Գուլիվերի ճանապարհորդությունը 147
Էրիխ Ռասպե – Բարոն Մյունխհաուզենի ճանապարհորդությունը դեպի Լուսին 152
Եվգենի Վելտիստով – Էլեկտրոնիկի արկածները 155
Վաչագան Ա. Սարգսյան – Ոտնահետքեր Լուսնի վրա 158
Անտուան դը Սենտ-Էքզյուպերի – Փոքրիկ Իշխանը 162
Վաչագան Ա. Սարգսյան – Հանելուկային մոլորակը 165
Ամփոփի՛ր իմացածդ, ստուգի՛ր ինքդ քեզ 169
Փոքրիկ բառարան 170
Ուղղագրական բառացանկ (I–IV դասարաններ) 172
Որոշ առաջադրանքների պատասխաններ 174

Բնագրերը ենթարկվել են որոշ փոփոխությունների, համապատասխանեցվել են գրական հայերենի կանոններին, չորրորդ դասարանցիների ընկալումներին:

ԿԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ
ՎԱՉԱԳԱՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ 4

Դասագիրք 4-րդ դասարանի համար

Խմբագիրներ՝ Հրանտ Վարդանյան
Արտաշես Թադևոսյան
Շարվածքը՝ Սվետլանա Այվազյանի
Էջադրումը՝ Միքայել Աբրահամյանի
Ձևանմուշը՝ Վաչագան Ա. Սարգսյանի

Տպագրված է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում
Տպաքանակը՝ 14000. Պատվեր՝821

«Մակմիլան-Արմենիա» հրատարակչություն
Երևան, Ղ. Փարպեցու, 9, հեռ. 53-79-82, 53-79-63
E-mail: pmacmill@arminco.com
www.macmillanarmenia.am

ՄԱՅՐԵՆԻ 4